

ԵԶՄԻԱԾԻՆ



1963

ԱՆԺԻ
R SURH

Մայիս

ԷՂՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՂՄԻԱԾԻՆԻ

Ե

1963



ՀՐԱՄԱՆԱԴ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Ճշմարտուրյան ճողին	3
Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՌ Գերազույն Առ- վետի նախագահուրյան նախագահ և Հարուրյանին	5
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	6
ԳՐԻԳՈՐ ԽԱՐԵԿԱՑԻ: Վերստին յամելուած կրկին նեծութեան	8
ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ: Ներքողեան ասացեալ ի ճրաշափառ Գալուստ Հոգույն Մրգայ	9
ԵՊԻՎԱՐԴԻ: Սուրբ Մեսարոյ	10
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ: Պոլիս և իր դերը	13
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ: Հավուց քառի վաճեցը	25
Մ. Հ. ՃԵՎԱՀԻՄՃՅԱՆ: Ձեյրուն և իր շրջակայիք	32
1. ՈՍԿԱՆՑԱՆ Ք ԿՈՐԿՈՏՅԱՆ } Հայերեն նորանայտ հնատիպ գրեց	44
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	56
Ցուցակ Մայր Արք Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	59



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՇՄԻԱՇԻՆ

«ԵՇՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմանական ԽՍՀ, Էջմիածն, Ռեդակցիա յանալու «ԵՇՄԻԱՇԻՆ»

Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Արք Ս. Էջմիածնի տպարան, 1963 թ.



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԻՆ

(Հոգեգալստյան տոնի առթիվ)

Քրիստոսի հրաշափառ Հարության խորհրդին նվիրված հիմնօրյա տոնախմբությունը, ըստ Եկեղեցական օրացուցի, Եպրափակվում է Հոգեգալստյան մեծ և պատմական տոնի կատարմամբ:

Զատկից մինչև Հոգեգալստյան օրերի այս շրջանը կոչվում է «Ֆինունք»:

Հինանց շրջանի առաջին քառասնօրյակը վերջանում է Փոքի Համբարձման տոնով, որ անփոփոխ կերպով կատարվում է Զատկի վեցերորդ յոթնյակի հինգաշբթի օրը:

Քառասնօրյա այս ամբողջ շրջանը հիմնականում նվիրվել է հարուցալ Փրկչի երկրի վրա իր աշակերտների և նետնորդների առաջին խմբերի հետ ունեցած երևումների խորհրդին և հիշատակին (Ա. Կորնթ. Ժ 4—8):

Քրիստոսի Համբարձումից մինչև Հոգեգալստյան տոնը երկարող տասը օրերի ընթացքում և Եկեղեցին ոգեկոչում և փառավորում է հարության և համբարձման հիշատակները: Իսկ Հոգեգալստյան տոնը գալիս է Եպրափակելու Հարության նվիրված հանդիսությանց շարքը:

Հոգեգալստյան տոնը կամ Պենտեկոստեն նորակամ Քրիստոնեական Եկեղեցու կյանքի մեծագույն և առաջին իրադարձությունն է, որի հիշատակը տոնվում է ամեն տարի Հինանց հիմներորդ օրվա կիրակին:

Հոգեգալստյան տոնի առթիվ Եկեղեցին նոռում է Ս. Հոգու էջր Վեռնատան մեջ առաքելական դասի վրա, հոգեկան զորության և շնորհների բաշխումով.

«Եւ լցան ամեներեան Հոգով Արքով, և սկսան խոսել յայլ լեզուս, որպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Գործ Բ 4):

Հոգեգալստյան տոնը Եկեղեցու Ս. Հոգով մէրտության և հաստատման օրն է:

«Զի Ցովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ» (Գործ Ա 5):

Քրիստոնեական Եկեղեցու պատմության առաջին պատմչը՝ Ղուկաս ավետարանիչ, իր «Գործ առաքելոց» աշխատության առաջին երկու գլուխներում հանգամանորեն և գեղեցիկ պատկեներով խոսում է Համբարձման և մանավանդ Հոգեգալստյան մեծ դեպքերի մասին:

Օր կիրակի է, Պենտեկոստեի տոնի հաջորդ օրը: Առաքելական խումբը և առաջին հավատացյալները հավաքվել են Վերնատանը, ուր տեղի ունեցավ Վերջին ընթրիքը և որը դարձել էր նախկին քրիստոնյաների հանդիպման կենտրոնը և երուաղեմում քրիստոնեական առաջին եկեղեցին՝ Աշխարհամատուածը, աղոթելու և անձկագին սպասելու «աւետեացն Հօր»:

Ղուկաս ավետարանիչը նկարագրում է Քրիստոնեական Եկեղեցու անդրանիկ համայնքի կյանքը, նրա հոգեկիճակը, սերտ միաբանությունը և համագործակցությունը: «Եին հանապարհեալ միաբան յադօրս»:

Քրիստոնեական անդրանիկ Եկեղեցին, աղոթքի և առանձնության տասը օրերի մեջ, երբ Վարդապետը այլևս մարմնապես իրենց հետ չէր, մտածում էր իր առաքելական գործունեության վրա, կրազվում էր կազմակերպչական առաջին գործերով և անհամբեր սպասում Քրիստոսի այսուտ խոստման կատարման Ս. Հոգու առաքման մասին (Ցով. Ժ 26):

Հրեա համայնքը նույնպես, Պատերից հիսուն օր հետո, կատարել էր Պենտեկոստեի տոնը, որպէս «հիմնօրյա տոն կամ տոն Հինանց»:

Հրեա ժողովուրդը Պենտեկոստեի տոնը կատարում էր ի հիշատակ Սինա լեռան վրա Մովսիսական օրենքի տվյության: Այս տոնը հրեաների մոտ միաժամանակ էր «տօն երախայրեաց հնձոց» (Ղատ. հԳ 10):

Հոգեգալստյան օրը Աստված Եկեղեցուն՝ նոր Խորայելին ուղարկեց «միսիրարիչն զՀոգին ճշշմարտութեան»:

Հոգեգալստյան օր է, օրենքի տեղ հոգու, գրի տեղ՝ չնորհաց տվյության օր:

Քրիստոնեական Եկեղեցին դավանում է Ս. Հոգու աստվածությունը. «Որ խօսեցաւ յօրէս և ի մարգարէս և յԱւետարանս»:

Քրիստոնեական Եկեղեցին, առաքելական օրերից, նշել է Ս. Հոգու գալստյան տոնը: Այսօր էլ քրիստոնեական բոլոր Եկեղեցիները, Զատկից 50 օր հետո, հանդիսությամբ տոնում են Հոգեգալստյան հիշատակը:

Մեր Եկեղեցին, սակայն, ավելի մեծ հանդիսություն է տվել Հոգեգալստյան տոնին:

Ներսես Շնորհալին, Հայ Եկեղեցու այդ մեծ քարեկարգի հայրապետը, տնօրինել է, որ մի ամբողջ յոթնյակի ընթացքում, տոնվի Հոգեգալստյան, հակառակ այն իրողության, որ այդ յոթնյակը Եղիշական պահի և կամ «ամարան աղորհացքի» շրջանն է:

«Յայս վեց օրս Սուրբն Ներսէս Շնորհալի կարգեաց տօնել Կօն Հոգուոյն Սրբոյ գալստեան և զարդարեաց երգօր և ընթերցուածովք» (Գիրք ճաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 474):

Արդարի, Հոգեգալստյան կիրակին առանձին շրով է տոնում Հայ Եկեղեցին, թեև տաղավարչէ այդ օրը: Օրվա հանդիսավոր սուրբ պատարագի ընթացքում ընթերցվում են «Աղեքս Եւթաղեայ» և Հովհանն Ուսկեբերան հայրապետի երեք մեծ աղորիքները Ս. Հոգուն նվիրված:

Երեկոյան ժամերգության ժամանակ ընթերցվում է Ներսես Լամբրոնացու հոյակապ ճաշը Ս. Հոգուն նվիրված՝ «Ներբող ի գալստան ամենասուրբ Հոգուոյն Սրբոյ» Վերնագրով, որն սկսվում է «Ստիպիմ ի սիրոյ» բառերով:

Ս. Հոգին անձնավորում է աստվածային իմաստությունը, աստվածային չնորմները, որոնցով դեկապարագում է Եկեղեցին:

Համբրոնացին իր վերոհիշյալ ներբողի մեջ գրում է.

«Յայսմ առաւօտու հայեցաւ Հայն Երկնաւոր ի յերկիր, արբոյց կառ յորդառատ գետով Ս. Հոգուոյ... Եկն Ս. Հոգին և բնակեցաւ ի սիրու առաքելոց և լուսաւոր արար վլայնութիւն և

վերկայնութիւն առաւելութեան սիրոյն Քրիստութիւն:

Համբրոնացին գեղեցկորեն խոսում է Եկեղեցու կանքում Ս. Հոգու առաջնորդության մասին. «Եւ որ եկն այլ ո՛չ մեկնեցաւ, այլ մաս լԵկեղեցի Քրիստոսի... որպէս վերակացու և արթուն հրահանգիչ կարգաց Եկեղեցւոյ և որոշիչ իրաքանչիւր աստիճանաց և պատույ»:

Քրիստոնեական Եկեղեցին երկիրազամյա իր պատմությունը անցավ Ս. Հոգու դեկապարությամբ և առաջնորդությամբ: Վասնչի նա՛ է, որ «քննէ վսորս Աստուծոյ», նա՛ է, որ իր կենդանարար վորությամբ «զամենայն պարզա ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ծեռնադրես առաքեալ, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապես, բարձրացուցանես համերս և բանաս վակեալ ականչո խլից» (Նարեկացի):

Մեծ է Ս. Հոգու պաղեցությունը, դերը նան քրիստոնյայի անհատական կյանքում: Ս. Հոգու կնիքը քրիստոնյան ընդունում է Դրոշմի խորհրդի պահին. «Կնիքս աստուածային սիրտ սուրբ հաստատեսէ ի թեզ և հոգի ուղիդ նորոգեսէ ի փորի քում» (Մաշտոց): Ս. Հոգու կնիքունով հավատացյալի կյանքը աճում է ու բացվում աստվածային լուսին, որովհետև հավատացյալը տաճար է Աստուծոն. «Հոգի Աստուծոյ բնակեալ է ի մեզ», — գրում է Պողոս առաջալը:

Մայրդը ստեղծվել է կատարելության համար. նա բնակարան է Աստուծոն:


Հռոմայեցվոց գրած իր թղթի մեջ Պողոս առաջալը շեշտում է, որ մարմնի խորհրդող մահի է, իսկ «խորհրդուրդ հոգույ՝ կեանք և խաղաղութիւն»: Ի՞նչ օգուտ է մարդու համար եթե այդող աշխարհը շահի, բայց կորցնի իր հոգին:

Այսօր բովանդակ աշխարհը իր տագնապների, պայքարների մեջ, ավելի քան երեսէ կարիքն ունի հոգեկան, բարոյական մաքրապարհման, «ընդունոյ, սրբոյ, լցուցիչ, աստուածացուցիչ, նորոգու և կենդանարար Ս. Հոգու» վորության և շնորհներին:

Հոգեգալստյան այս տոնին, մի անգամ ևս Համբրոնացու հետ աղորիքնը Ս. Հոգուն, որ նա միշտ մնա մեզ հետ, մեր ուրախության, վշտի, աշխատանքի և խորհրդի կյանքի մեջ, առաջնորդելով մեզ դեպի առաքինություն, դեպի սրբություն, դեպի հոգևոր կատարելություն:

«Է՛շ այժմիկ սիրոյ աղքիւր սիրով առ մեզ և միսիրարեան վորս ի պանդիստութեան վայրն նժդեհ և անցաւոր կենօք տառապին» (Համբրոնացի):





ՊԱՇՏՈՆ ԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՖԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ն. ՀԱՐՈՒԹՅՅՈՒՆՑԱՆԻՆ

Մայիսի 8-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Ամենայն Հայոց Հայրապետը Երևանում, Գերագույն սովետի դահլիճում այցելեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանին և նրան շնորհագործ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընտրվելու բայթեաստիկ առիթով։

Կեհափառ Հայրապետի և Հայաստանի Հանրապետության նախագահի միջն տեղի ունեցած սիրալիր վրուց, ջերմ մթնոլորտում։

Պաշտոնական այս այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերազնորի Տ. Հայկապուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և գավազանակիր Բոգեշնորի Տ. Ներսես Վարդապետ Պովապալյանը։

Ընդունելությանը ներկա էին նաև Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Վ. Նալբանդյանը, նախագահության քարտուղար Ա. Գալստյանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 5-ին, Կարմիր կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ S. Մեսրոպ վարդապետ Պալյանը: Քարոզի թնաբանն էր «Յարեաւ Տէրն ի մեռելոց հզօր զօրովկեամբ, հաստատեաց զհիմունս եկեղեցւոյ սրբոյ»:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 9-ին, հինգշաբթի, Թաքու մեկնեց Հոգեշնորհ S. Արսեն արեղա թերերյանը, ամսի 12-ի կիրակի օրը Թաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պատարագելու և բանին կենաց քարոզովիյամբ միմիթարելու հավատացյալներին:

S. Արսեն արեղան Մայր Աթոռ վերադարձավ ամսի 14-ին:

Մայիսի 12-ին, կիրակի, Երևումն Ս. Խաչ: Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ S. Ներսես վարդապետ Պողապալյանը «Այսօր ընդ ամպս լուսաւոր երևեալ նշան տէրունական խաշին» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 17-ին, ուրբաթ, Թբիլիսի մեկնեց Հոգեշնորհ S. Ներսես վարդապետ Պողապալյանը, ամսի 19-ի կիրակի օրը պատարագելու և քարոզելու Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում:

Մայիսի 19-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ S. Արսեն արեղա թերերյանը «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ կեցցէ յակիտեան» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 23-ին, հինգշաբթի, Համբարձումն Քրիստոսի: Օրվա մեծ տոնի առիթով Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ S. Նարեկ արեղա Շաքարյանը: Քարոզեց Հոգեշնորհ S. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» բնաբանով:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց մաղթանք՝ Հայրապետական Աթոռի Սսից էջմիածին փոխադրության տարեդարձի առթիվ:

Մայիսի 23-ին, հինգշաբթի, Երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Հոգեմոր Ճեմարանի ուսանողության մարզահանդեսը սեփական մարզադաշտում:

Հոգեմոր Ճեմարանի ուսանողությունը, «Նարին» և «Արագած» խմբերի բաժանված, կուտարեց մարմնակրթանքի զանազան ձևերի վարժություններ, մասնակցեց վոլեյբոլի և բասկետբոլի մրցումներին և զվարճակի խաղերին:

Մրցումներում առաջին տեղը գրավեց «Արագած» խոմքը, որը և նվաճեց մրցության

բաժակը: Վոլեյբոլի բաժակը շահեց «Արագած»-ը, իսկ բասկետ-բոլինը՝ «Նախիքի»-ն: Հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:

* * *

լովն առ ի մէնջ՝ փառօք առ Հայր վերհամբարձաւ բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին ներկա էին նաև ուժնահայ ուխտավորներ:

* * *

Մայիսի 26-ին, կիրակի, Երկրորդ Սաղկազարդ: Մայր Տաճարում պատարագեց արքանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը: Քարողեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը «Որ ի լրումն բոլորից տնօրինական մեծ խորհրդոյն, առեցե-

Մայիսի 27-ին, եկինզաքքի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և աղոթքով, սկսվեցին 1962—1963 ուսումնական տարվա ամագերքի քննությունները Հոգևոր Ճեմարանում: Քննությունները կտևեն մինչև Հունիսի 9-ը:



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՂԹԱՆՔԸ

ԲԱՆ ԼԴ

(Հատված)

**Վերստին յանելուած
կրկին մեծութեան նորին հսկողի
առ նոյն աղերս մատցանաց բանի:**

Աղաջեմ զափոփխնելի տէրութիւնդ ամենազօր Հոգ-
տի հէօրի, առաքեա զօղ բաղցութեան քոյ, և բարե-
գործեա ի յանձին և յիշխանական պայման զգայութեան
զամենալից շնորհն բակմապարզն քո ողբութեան Եւ
ներկեա զենական անդաստան մարմնեղէն կարծրացեալ
սրտին՝ յընդումակովին արգասեան նոգնոր տե՛մանդ:
Բում ամենմասս էկորեանը խոսուվանինք զամենայն
պարգևա ի մեկ ծաղկեալ և աճեցեալ. որ ճնշնադիրնեա
առաքեալս, լցուցանն մարգարեան, ուսուցանն վարդա-
պեսն, բարբացուցանն համերս, և բանաս զիսկեալ
ականջո խից. որպէս ազգակիցն քո էակիցն Հօր անդրա-
նիկն. Որդի բոյն գործակցութեամբ ներգործելով զայս
ամենայն, բարուեաց քեզ Աստուած հաւասարակից իս-
կութեանդ Հօր: Շնորհեա և ինձ մեղաստիր խօսել հա-
մարձակութեան խորուրդ աւետեա Աւե-
տարանդ, հետեւել արագաթօթ ընթացիւ մտաց ընդ
անոն ասպարեզ բոյնաշունչ Կոսակարանաց: Եւ ի
մատչել իմ ի գոյսն հանդիի մեկնութեան բանի՝ նա-
խաժամանսցէ առ իս գթութիւն քո, խօսելով իս զար-
ժանն ու զափտանին և զիսանոյն քո ի ժամանակի, ի
փասն և ի գոյսն աստուածութեանդ քո, և ի լորութիւն
շինութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ: Եւ կարկանա ի վերայ
իմ զամենամերձ աջ քո, և զօրաց զիս շնորհօք գթու-
թեանդ քո փարատեա ի մտաց իմոց ցմէզ մթութեան
մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին վիսապ մենաց,
ամբառնալ ոչիշ իմաստիցն ի զենցադոյս երկի ի
բարձուն: Լուսաորեալ ի յիս վերստին զագումն
անստուեր հրաշից գթութեան աստուածութեան քո,
հկօր, արժանի լինել առնել և ոսուցանել յօրինակ բա-
րեաց աստուածասէ լոռողաց: Եւ քեզ ամենայն փառ
յամենայնի ընդ Հօր ամենակայի և ընդ Որդուոյ Միածնի
և բարերարի, այժմ և յանվախճան յափտեան:

(Գրիգորի Նարեկայ վանից վանականի
«Ողբերգութիւն», Վենետիկ, Ս. Ղազար,
1844, էջ 199—201):

ԲԱՆ ԼԴ

(Հատված)

**Նոր հավելված
վերստին նեծո.թյան՝
նույն հսկողնեն,
աղերսական մաղթանքի միևնույն նպատակով:**

Կաղաչեմ հկոր Հոգիդ անփոփխնելի և ամենազօր
տերությունը, դոկի՛ բաղցության ցողը, ու զգացումնե-
րուս ինընիշխան աւդումներուն և հոգիիս մեջ արդյունա-
վոր Բու բավամապարզն ողորմության անենակից շնորհ-
ները. ու ներկե՛ սրտին մարմնեղնեն անդաստանը,
կարենալու համար ընդունիլ հոգնոր սերմիդ արգասիքը:
Հոսուսակներ թե մեր մեջ ծաղկան ու աճուր բոյոր
ւ, արգմեները գործն են Բու ամենիմասս էկրան, որ
առաջաւենք կծեռնադիրնեան, մարգարեններ կիցնեն, վար-
դասնեները կուտացաննեն, համերեր կիսուցնեննեն, խովե-
րուն փակված ականջները կրանաս, ինչպէս որ Բու
աւգակիցը, Հորը էակից անդրանիկ Որդին, Բու գործակ-
ցությամբ այս ամենը ընկուով Հորը խկրութան հավասա-
րակից Աստված քարուցեց զիսկ: Շնորհի մեղալիքի՞ն և
համարձակությամբ խօսի Ավետարանիկ կենսանա-
րար խորինուրդը, և նորի արագաթօնից ընթացըով կտրել
անցնիլ Բու շոնչողի գրգած Կոսակարաններու անհուն
ասպարեզնեն. ու երբ մոտենամ խորին մեկնության կե-
տին, թող նախ ինձի հասնի Բու գթություն, ու իս մեջս
խօսի Բու ասպարեզն աստվածության փառքն ու գլուխտին հա-
մար, և ինչ որ հաճո է Շնէփի՝ ընդհանուր Եկեղեցվո-
լության ու շինությանը համար: Եմ վրա կարկան՝ ամե-
նամերձ Աշո, ու զորացուր վիս գթութանդ շնորհներվու-
փարատե՛ մորես մոռացկուու մթության մեջը, նոյն ա-
տեն բուժելով նաև մերժն խավարը որպեսվ կարենա-
մարականության ուշրովք բարձրանալ այս երկրավոր
կենցաղնեն. Վերստին լուսավոր իմ մեջս Բու աստվածու-
թյանդ գիտության հրաշքներուն անստվեր ծագումը, Հզոր,
որպեսի արժանի ըլլամ բարի օրինակ ընծայել և սորվեց-
նել աստվածաեր ունկնդիրներուն: Ու Շնէփի ամեն փառ,
ամեն ատեն, ամենավայլ Հորը և Միածնի ու բարերար
Որդիիդ նետ, այժմ և անվախճան հավիտյաններ:

«Նարեկ», աղոթամատյան Ս. Գրիգոր
Նարեկացվո, թղմ. Թորգու եպիսկոպոս,
Կահիրե, 1926, էջ 112—113):



ՆԵՐՍԵՍԻ ՀԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԸ Ի ՀՐԱՇԱՓԱՌ
ԳԱԼՈՒՏ ՀՈԳԻՌՈՅՆ ՍՐԲՈՅ

(Հատված)

... Այսուհետև թեզ եհաս ժամանակ գործոյ, ո՞վ փառակից իմ հոգի. պարտիս և քըոդ մարդափրութիւն ցուցանել ի յերկրի. այսուհետև թեզ պապատան ամենն զմնուն աստուածութեանս մեր յարգել առ մարդիկ: Հայր իմ ներեաց և եթող պապատսն՝ որով դուն խափանեցար ի թեղլոյ առ նոսա, մարմոյ իմ պատարազան. սա առ վիս առնաւատչեայ ի նոցանէ. և տայ նոցա զբեզ խաղաղութիւն: Եջ ալժմիկ սիրոյ աղբիւր՝ սիրով առ նոսա, և միխթարեա՝ զորս ի պանդսութեան վայրն՝ նժենն և անցաւոր կենօր տառապին: Դարձո՞ վնոսա ի նանրութեանց. զոր ի զոր խոռվեցուցանէ թշնամին, նայել լայն բազմապատիկ օթևան՝ զոր պատրաստեցար նոցա: Բաշխեա՞ նոցա իմաստութիւն առատ, զի մի՞ եղեանազորն մոլորեցուացէ վնոսա: Հաղորդեցայ կարեաց նոցա, և ծանեայ փորձիւ զի տկար և դիւրակիործան բնութեան են վիճակեալ. վասն այնորիկ աղաչեմ, անմենելի լե՞ր ի նոցանէ, զօրացն՝ վնոսա ընդիշմ ամենայն փորձանաց: Նախանշեա՞ վկամս մարմնոցն, և զօրացն՝ վկամս մտացն: Թեզ տայ վնոսա. թեզ մանձն առնեն վնոսա. զբեզ խոստացար նոցա, և այժմ ի թեզ ամրափակեմ վնոսա զամենեսեան, որպէս զի մի՞ լիցի ի նախիր հեղումն արեան իմոյ, որ վասն նոցա: Առատացն՝ ի նոսա ո՞վ համագոյակից իմ հոգի՝ զենորիս բժշկության, զմարգարէութիւն, վիտրինս վկերինս, զատելս վներինս...:

Ներսէս Լամբրոնացի, «Ատենաբանութիւն».

Վենետիկ, 1787, էջ 93—94):

ՆԵՐՍԵՍ ՀԱՄԲՐՈՆԱՑՈՒ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀՐԱՇԱՓԱՌ ԳԱԼՈՒՏԱՆ
ՄԱՍԻՆ ԱՍԱԾ ՆԵՐԲՈՂԸ


(Հատված)

Այսուհետև հասավ քո գործելու ժամանակը, ո՞վ իմ փառակից Հոգի. դու պետք է քո մարդափրությունը ցուց տա երկրի վրա: Այսուհետև թեզ եմ ապավինում մեր աստվածության անունը մարդկանց մոտ հարգելու համար: Իմ Հայրը ներեց և վիշեց պարտքերը, որով դու արգելվեցիր նրանց վրա թափկելուց, իմ մարմնի պատրազով. սա ինձ ստացավ նրանցից իբրև առհավատչյա, և թեզ կտա նրանց որպես խաղաղություն: Այժմ, ո՞վ դու սիրո աղբյուր, իշի՞ր նրանց մոտ սիրով, և միխթարի՞ր նրանց, որոնք պանդսության վայերում տառապում են նժենն և անցավոր կյանքով: Հե՞տ դարձրու նրանց այն ունանություններից, որ թշնամին իսկուր խոռվեցնում է, նայելու համար այն բազմապատիկ օթևանին, որ պատրաստեցինք նրանց համար: Բաշխի՞ր նրանց առաս իմաստույթին, որպեսի եղեանազործ չմոյորեցնի նրանց: Ես հաղորդակից եղա նրանց կարիքներին և փորձով ճանաչեցի, որ վիճակվել են տկար և հեշտ կործանելի բնության. ուստի աղաչում եմ, անբաժան եղիր նրանցից, և զորացո՞ր նրանց բոլոր փորձանքների դեմ: Հե՞տ մդիր մարմնական ցանկությունները, և զորացո՞ր մտավոր ցանկությունները: Թեզ եմ տայիս նրանց, թեզ եմ հանձնում նրանց, թեզ խոստացար նրանց. և այժմ քո մեջ ամրափակում եմ նրանց բոլորին, որպեսի իսկուր չվենի իմ արյան թափկել նրանց համար: Առատացո՞ր նրանց մեջ, ո՞վ իմ համագոյակից Հոգի, բժշկության չնորմները, մարգարեւությունը, երկնային բաների մասին խորմելը, երկրային բաները ատելը...:

Ներսէս Լամբրոնացի, «Ատենաբանութիւն».

Վենետիկ, 1787, էջ 93—94, թարգմանարար):





ԵՂԻՎԱԾՐԴ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ*

(Հատվածներ)

Եվ աշուն էր,
Ընկուզենին լուռ կը խոկար
Առվի ափին,
Աշնան հովի մատներուն տակ
Բարակ, բարակ:

Աղբյուր, վըտակ,
Իրենց սընդիկ մարմնին վըրայ,
Կապեր էին ապակիի գոտին պայծառ,
Ու լեռ տանող ամեն կածան,
Խորիս էր օծի,
Լեռնալանջին ինկած թավալ:

Մասիս հեռուն և Արագած,
Մոմեր ճերմակ,

* Երսանակի հայոց բանաստեղծ պատրիարքը՝ ամենապատիվ Տ. Եղիշեն արքեպիսկոպոս Եերտերյան (Եղիշարդ), հայ գրերի հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հորելանին իր հոգևոր տուրքն է տվել բանաստեղծության գողոտիկ մի հատորով «Սուրբ Մեսրոպ» խորագրով, լույս տեսած Սրբոց Հակոբյանց տպարանից: Պոեմի ծևով, բանաստեղծական գեղեցիկ պատկերներով, տրվում է Մեծ վարդապետի կյանքը:

Հաճուքով արտատպում ենք հատվածներ «Սուրբ Մեսրոպ» պոեմից:

Նոր օրերու պատարագին,
Հոգիներու կարմիր փառքին
Համար վառող,
Դաշտին վըրայ Արարատյան:

Եվ օրերուն այս աներակ,
Երբ ամեն բույս, ամեն ծաղիկ,
Հայ արցունքով և արյունով
Կը հասիւննար,
Ճամբու փոշին աչվըներուն,
Սըրտին մեջ խոց,
Տուն կը դառնար Մեսրոպ Մաշտոց:

Հոն էր սիրտն իր,
Կապած հողին ու ջուրերուն,
Հոգին ոստայն՝
Մեր պապերու երազներուն
Եվ հունտերուն,
Նետված հողին հայրենական:
Հոն էր սիրտն իր,
Հին ըմպանակ ու նոր բուրված,
Ուրկե կաթիլ, ուրկե բուրում,
Թավալեին,
Զինք ընելով այդ հողերուն,
Այդ ջուրերուն, ընդունարան անքակտելի:

Ան կը դամնար Արարատին,
Էջմիածնի լուսի պատին,
Հողին, ջուրին,
Տաճարներուն, պալատներուն
Մեր հայրենի,
Կըրակելու օտարության
Ցուրտեն սառած իր խեղճ հոգին:

Կուգար Մեսրոպ,
Ինչպես Մովսես Սինա լեռնեն,
Անութին տակ,
Հայ գիրերու տախտակն անհուն,
Խևկ սըրտին խոր՝ ուրախության
Այզին առատ,
Ուր կը մըտնեն անոթիներն
Այս աշխարհին,
Ու լիացած կը հեռանան:

Եվ թագավորն ու հայրապետ,
Նախարարներն ու ասպետներ,
Կրղերականք ու ժողովուրդ,
Երկրի բոլոր սահմաններեն
Երամ, երամ,
Որն եղեգով, որը սուրով,
Բոլորն սակայն,
Ուրախության արցունքներով,
Եկած էին ընդունելու,
Գըրին գըտիչ, կաղապարիչ,
Նոր մարգարեն:

Ու կը ծըփար, ալիք-ալիք,
Ամբոխն այդ հոծ,
Հասկերու պես ցորեններու,
Զոր կը շարժե հովս հյուսիսին:

Ժողովուրդն էր Հայաստանլայց,
Որ գիտե միշտ,
Սպասոսպուտ կործանումեն
Ամբառնալու,
Երկարամուր իր հավատքով:
Կուգար Մեսրոպ,
Եվ ամեն աչք ու ամեն սիրտ,
Ուրախության ուներ արցունք,
Ուներ ժըպիտ,
Կաթողիկէ Եկեղեցին,
Ալիքներով լիբն էր մարդոց:

Ամբոխն երկուր ճեղքովեցավ,
Ավագ դուռնեն Եկեղեցվո,
Մեսրոպ Մաշտոց մուտքն իր կըներ,
Շըրջապատված
Քերթողներով աստվածամերձ,
Որոնց սըրտին, աչքերուն խոր,
Կը բեկրեկեր,
Ինչպես վառված կարմիր ճըրագ,
Երակ մը նոր,
Որ ցայգասփյուռ կոսկիանար,
Մութերուն դեմ մեր դարերուն:

Եկեղեցին աչք էր ամբողջ,
Մեծ Հայրապետն տեսիլը մ'ինչպես
Կանգնած էր լուռ սեղանին դեմ,
Աչքին՝ արցունք, շուրթին՝ ժըպիտ:

— Զեռքեր դալար,
Գիրին գըտիչ, կաղապարիչ,
Մեծ Մաշտոցին աստվածախոս,
Բարգովով սերմին բացված ակոս,
Եվ անկորուստ ճամբա սըրտի
Մեր ամենուն:

— Փառք և պատիվ
Թագավորին Վըռամշապուհ,
Հայրապետին աստվածարյալ,
Իշխաններուն քաջակորով,
Ու կըղերին հավատեռանդ,
Որոնք գիտցան մեզ բերելու,
Անգին ծաղիկն իմաստության,
Եվ անցնելու կյանքեն անդին,
Հավերժական ըստեղծումին:

Թող արձակվին բիրտ կապերեն,
Մուրիակներեն մեր գերության,
Սիրտերն ամեն,
Հոսի հանճարն հայուն ապատ,
Արյան, հողի և սիրտերու
Ղողանջներով հըրաշածայն:

Թող լըգացվին սիրտերը մեր
Թունեն օտար,
Հոսի նորեն խելքն ու հընարք
Մեր պապերուն,
Վըրան ծարավ մեր հողերուն,
Մագաղաթին խնկագունակ,
Սըլաքներեն արեղ լուսին:

Այսպես կերգեր ժողովուրդն հայ,
Հուսապատար ու թըրթըռուն,
Օրորն ինչպես մեր դաշտերուն,
Պըտուլտըր խոլ մեր շուրերուն,
Ծափն ու ծիծաղ մեր սիրտերուն:

Եկուր նորեն, Մեծ Ուսուցիչ,
Սըրբ փոշին հայելիին
Հայ հանճարին,
Որ զակրներդ օտարության
Ճամբաներուն,
Նենգ մըշուշին, պիղծ հաշիվին
Ալ անձնատուր,
Տեսնեն պատկերն իրենց ամբողջ,
Փայլով նախնի և աղտով նոր:

Մեր աչքերուն բաց վերըստին
Հայ գիրերու տախտակն անհուն,
Մենք աշակերտ,
Դուն ուսուցիչ հանճարաշատ,

Թափէ լուսին, վեր իմաւս: Ր
Սերմերն ուսկի,
Մեր հոգիի անդաստանին:

Եկուր նորեն,
Որպես կապույտ անդորրություն,
Ծիածանն մեր սիրտերուն
Ուսկի երազն մեր հայրերուն,
Կարուտներու և իղձերու
Ծրփանքներով քաղցրասարուռ:

Եվ գահընկեց մեր օրերու
Հսպասին մեջ իմաստության,
Մեկ հետ եղիր,
Խոսքի աղբուր, ջինջ ավազան,
Մատյանի մը նըման բացված
Մեր աչքերուն:

Ամենօրյա մեր հացն արդար,
Սըրբագործված մաքուր նըշխար,
Եկուր նորեն,
Մեկ լըվալու մեր ախտերեն,
Ժրմիրներեն տարագրության,
Մեր մեղքերուն վերև բացված
Դուն թև ճերմակ:

Եկուր նորեն,
Անհուն ծաղիկ արցունքներու
Եվ արյունի,
Կըսավ ազնիվ ու սըրբազան,
Արվեստներու գերագույնին,
Համակ բյուրեղ, անշամանդադ:


Հավերժության մեծ մատյանին
Մատուցվելու:


Եկուր նորեն,
Անհուն ճարմանդ աստվածային
Պատմուճանին,
Սիրո օվկիան, հուսի անդունդ,
Թեզան ամբավ մեր ապրումին,
Որուն վըրա կայլակ, կայլակ,
Լույսը նըստեր,
Պարզկելու պըղտոր, գունատ,
Մեր բառերուն,
Հըրաշքը սուրբ ըստեղծումին:

* * *

Թույլ տուր ինծի,
Մեծ ակումիտ, անհուն մոնավ,
Զեկ բերելու երախտիքի
Խաչըուան այս ջինջ,
Ուսկի արտեն ցորեններու,
Զոր օր մը դուն, ափով արդար,
Ցանեցիր մեր հոգիններուն:

Այսօր նորեն,
Ես՝ մին հետին մըտածումիդ
Զավակներեն,
Հիշատակիդ առջև կեցած՝
Կը պաղատիմ անհունորեն,
Որ հոգիովդ մեկ հետ ըլլաս,
Պարտքի, զորի և գիտության
Սուրբ ճամբարյան մեկի ռահորդ,
Մահեն ալ վեր, մահեն ալ վեր:





ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

Գ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՊՈԼՍՈ ԱԹՈՌԸ

1. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆ ՈՒ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կրեակոխենք արդեն կնճռտությանց նոր դաշտ մը. ի՞նչ իրավունքներ ունեցան հայոց պատրիարքները: Պոլսո Աթոռին հինգ դարերը պրատել փորձողի մը համար՝ այս հարցումն է, որ հանկարծ կցցվի դեմք: Եվ առաջին իսկ պահեն հուսահատությունն է որ հհամակե զայն, որովհետև ոչ մեկ աղբյուր օգնության հհասնի իրեն:

Ինչպես հունիսը՝ հայերն ալ ոչինչ ունին, որպեսզի մեզ ճանշցներ առանձնաշնորհումները, զորս Ֆաթիհ սուլթան Մեհմեդ տվակ իրենց պատրիարքներուն:

Ընթերցողներս թող ինձի ներեն, եթե զիրենք կեցնեմ հոս պահ մը:

Պոլսո, իր շատ մը մեղքերուն հետ, ունեցավ աններելի մեղք մըն ալ,— Հոգ շտարավ ինքինք պատմության մեջ դիմացնելու: Արխիվ շունեցավ, ինչպես շունեցավ ձեռագրատուն և գրադարան, ու թանգարան մը, որ դարերը իրենք զիրենք պատմեին, իսկ ինչ որ

ունեցավ՝ չկրցավ պահել: Գրքերու այն մթերանոցը, որ քանի մը տասնյակ տարի ինքնքնքը քաշկուեց «Ազգային մատենադարան» շողջողուն պիտակին ներքեւ, երբեմն իրեն շողջողուն ալ անուններ ունենալով իբրև վարիչ սկսյալ 1877-են, երբ պաշտոնապես մարմին առած էր ան, ծաղրանկար մըն էր միայն, ուր կուգային իրար գտնել գրքերու հեք թափթփուկները: Իսկ այն քանի մը հարյուր ձեռագրերը, զորս ան կպատսպարեր իր քանի մը զարակներուն մեջ, հեգնանք մըն էին Պոլսո նման գաղութի մը համար, որ կրնար ամեննեն ճո՛խը ժողվել հայ ժողովուրդի հոգեկան գանձին ամեննեն թանկագին նմուշներուն, իր ունեցած բյուր հնարավությանց շնորհիվ:

Ճիշտ է, Պոլսո շատ բան զոհ տվակ համբավագոր իր հրդեհներուն, որոնք մեկ կլափով թաղեր կլափեին հաճախու ծրեմիա Զելեպին 1615-են մինչև 1694 թվականներուն վաթսուներկու հրդեհ կհաշվե Պոլսո մեջ ինձիձան իր օրով 1778-են մինչև 1795, քսանյոթը մեծ հրդեհ կհամրե: Այս հրդեհներեն շատերը հազարավոր տուններ մոխրացուցած են մեկ անգամեն, իրենց բոցերուն զոհ դարձելով եկեղեցիներ ալ, իրենց թանկագին բոլոր իրերուն հետ մեկտեղ: Մեկ հրդեհն ճո-

* Շարունակված ռէզմիածին ամսագրի 1962 թվականի Խ. Բ.-ից Ժ. Բ.-ից և 1963 թվականի Խ. Ա.-ից, Բ.-ից, Գ.-ից և Դ.-ից:

Ուղարածը մյուսը կառներ կտաներ: Ու Հակա-
ռակ աղոր, գեռ շատ բան փրկված էր մինչև
անցյալ դարուն սկիզբը, բայց հրդեհը շմանա-
լեց այդ բեկորներուն ալ: Ավեսիս Պերպեր-
յան իր «Պատմության» հառաջարանին մեջ
կըսե, թե շատ բան քաղած է Պատրիարքա-
րանի դիվանեն, ուր արձանագրեալ էին նա-
մակք, վճիռք, և ժողովք, և ստորագրութիւնք
եկեղեցականաց և աշխարհականաց: ափ-
սո՞ս, զի այս գեղեցիկ դիւնն ապրեցաւ ի-
հրդեհին Հոճա փաշայի²⁵⁹ յաւուրու Կարապետ
պատրիարքի ընդ Մայր Եկեղեցուն և Պատ-
րիարքարանին և ձեռագիր մատենից, յորս
էր և այն հազուագիւտ Կանոնագիրքն գրեալ
ի մագաղաթի ի Տարսոս քաղաքի Կիլիկիոյ ի-
թուկն Հայոց Ոնէ (647-1198):

Մեղքը շպլինք միայն հրդեհներուն վզին: Անոնք և շատ բան խլած տարած են ան-
շուշտ: Բայց ի՞նչ ըստնք այն գոհարներուն, զորս
շքացուց մեր անհոգությունը, զորս
կորսնցուցինք, զորս գողցուցինք: Քանի՞ն
մեզ հասավ Կոլոտի և Նալլանի գրքերեն, և
ի՞նչ մնաց մեզի Պալտասար պարի, Գորդ
Փեշտիմաճյանի, Տերոյենցի և այնքան ու-
րիշներու հավաքածներեն, մարդոց, որոնք
ապրեր ու մեռեր էին գրքերու ծոցը: Ուր գա-
ցին Անտոնյան միաբանության մոտ պահ-
ված զմայելի գրքագրերու: Գողցվեցավ անոնց
մեծ մասը և գնաց զարդարել Եվրոպայի կատ.
Ամերիկայի հավաքածոները: Ի՞նչ եղան գի-
նադադարեն հետո մեր իսկ հավաքածները
Առևանգամած են նաև անոնցմե շատերը:

Ղալաթիո Աղքային մատենադարանի հայրեն ձեռագիրներուն ցուցակը, զոր Բարգեն վարդապետ պատրաստեր էր վաթուն տարի առաջ և որ վերջերս միայն լույս տեսավ, 283 Կոլոր գրչագրերու ցանկ մըն է լոկ, ողբայի թիվ մը, ուրկե շենք գիտեր քանին կմնան դեռ ողջ: Եվ երևակայել, որ այդ գրչագրերը Կոլոտի օրերեն սկսած են հավաքվիլ մեզ հասնելու համար ճշգիմ այդ թվով: Բարգեն, Կոլոտի նվիրած իր հատորին մեջ, հաստատելել հետո, թե ճոխ էր Կոլոտի գրչագրերու հավաքածոն, կավեցնե, թե ողբայիստաբար աւս ճոխության մեկ ստվերին առջև կգտնը-վինք հիմաս:

Ու զեռ ինչե՞ր կային մասնավորներու մոտ,
գրչագիր թե վավերագիր: Եթե դատարկ էր
մնացեր ազգային Պատրիարքարանի արխի-
վը, ֆերմաններ կվիտային անհատներու
որով:

Այս տողերը ինձի տուն տվին հուսահատության սա քանի մը պահերը, որոնք ուղեղս կլկեն հիմա, երբ ան կփորձե, խեղը, շփոթությանց զանցեն ճողովրիլ: Ո՞ր հիշա-

տակության կղիմես՝ փխրուն դուրս կուգա, ո՞ր գիրը կթղթատես՝ քեզ կշվարեցնե, ո՞ր աղյուրին կղիմես՝ ցամքած է: Զի՞ ճմլվիր սիրտդ, երբ մուրացկանի նման դռնե դուռ կթափառիս, և առջևդ գոյ կգտնես բոլոր դռները: Պոլսեն քա՛ն մը մնացած չէ, որպես- զի գրես իր պատմությունը: Թալլած են զայն հայն ու օտարը, ու մարդ չի գիտեր, թե ո՞ւր երթա փնտուել հափշտակված նյութերը: Ճիշտ երեկ, աղբյուրներ մուրացած ատեն, գիրը մը ինկավ ձեռքս Խորագիրը հրապու- րեց զիս, և հուացի քանի մը նյութ ճանկել մեջեն: Դուք իմ տեղս կաթվածահար կը լլա- յիք կարդալով ֆրանսական կաճափի անդամ- ներեն մեկուն արքա Սևենի երկու դար ա- ռաջ Պոլսեն գրած մեկ նամակը, ուր կիշեն, թե ի՞նչպես ձեռք անցուց հունարեն և ուրիշ լեզուներով անթիվ գլուխ-գործոցներ, և կի- մացնե այս առթիվ, թե Պոլսեն առած կտանի քառասուն հայ ձեռագրեր այլ, որոնցմբ մեկը, կըսե, հաղթանակամ մարդ մը չի կրնար մի- նակը վեղոնել գետնեն²⁶⁰:

Միակ կովանը, որ ենթադրությանց ճամբան կրանա մեղք՝ հետագա շրջանների մեղք մնառած ֆեռմաններն են:

Սովորական գործադրություն կար արդարեւ ամեն մեկ նոր սովորականի հետ նորոգել հին առանձնաշաղնորհումները: Եվ հաճախ ի նորո տրված ֆերմաններուն մեզ բառ առառ կորկնվեին նախապես շնորհված իրավունքները: Այս կերպով է, որ պահպանված են որոշ հետքեր հին իրավունքներու մասին, որոնց փաստաթուղթը տարիները չեն հասցուցած մեզ և որոնք հիշատակված են սովորական:

Ամենահին «բերաթ»-ը, որ մեզ հասած է և
որ կհշտե, մանրամասն, Հայոց պատրիար-
քին պարտականություններն ու իրավասու-
թյունները, ԺԷ դարու կեսերեն հետո մի-
այն²⁶¹, սովթան Մուստաֆա Գ-ի կողմէ 1764
հունիս Յ-ին Պասմաճան Գրիգոր պատրիար-
քին շնորհված «բերաթ»-ն է: Ան հավանաբար
իր գլխավոր գիծերուն մեջ շատ չի տարբե-
ռի ու այն նախորդող պատրիարքներուն արր-

260 „Lettres sur Constantinople de M. l'abbé Sévin. Paris, 1802, p. 22.

261 Ա. Պեղպեցյան, «Պատմություն Հայոց», Կ. Պուլս, 1871, է, 227—233:

259 Հրուեալ պատահած է 1826 օգոստոս 18/30-ին

վածեն, և հետևաբար կրնա ընդհանուր պատկերը մեզ տալ իրավական այն գիրքին, որով օժտված էր Կոստանդնուպոլսու Հայոց Պատրիարքարանը՝ սուլթաններու տիրապետության տակ:

Գրիգոր պատրիարք Պասմաճյանի տրված սուլթանական այս «բերաթ»-ը, որ 1177 վիշտիցի 3 (1764 Հունիս 3) թվականը կրե, հայունն նախ, թե Հակոբ Նայայ պատրիարք առողջական պատճառներով հրաժարած ըլլալով, հայերը անոր տեղ ընտրած են Գրիգոր իրու պատրիարք: Հետո երկարորեն կթվե իրավունքները, զորս պիտի վայելե ան իր պաշտոնավարության ընթացքին, չորս նախական այսի հիշել, որ նորոնտիր պատրիարքը, պաշտոնի անցած ատեն, 100 000 աֆչ պիտի վճարե արքունական գանձին իրու վիշենց, և հետո, ամեն տարի 100 000 աֆչ իրու մուշքաբա: Անցնելով նոր պատրիարքին իրավունքներուն, «բերաթ»-ը կըսե, թե Գրիգոր պատրիարքն է Կոստանդնուպոլսու, ինչպես և Ռումելիի և Անադոլուի փերաթենդին և անոնց ենթակա վայերերու հայերուն, և բոլոր այդ շրջաններու առաջնորդները (մերիսաս), քահանաները (փափազ) և առասարակ բոլոր հայերը իրենց հոգուորդ գործերուն առթիվ պետք է անոր դիմեն և անոր խոսքին դուրս չելլեն: Ոչ ոք արգելք պետք չէ հանդիսանա, երբոր պատրիարքը իր պատրիարքության ենթակա շրջաններուն մեջ առաջնորդ (մերիսաս), վարդապետ (քարաքաղ) և քահանա (փափազ) ընտրե կամ հրաժարեցնե: Առանց պատրիարքի կնքյալ գրության, որևէ մեկը չկոչվի առաջնորդական պաշտոնին: Վաքքիներու վերաբերյալ իրնդիրները պատրիարքի իրավասության կատականին, և բեյրուլմալի ու բասսամի պաշտոնյաները պետք չէ որ հին սովորությունը ուժակի ընելով միջամուս ըլլան երբ առաջնորդները, վարդապետները, քահանաները կամ մայրապետները պատրիարքին պատկանող մերութիարք հավաքեն: Որևէ միջամտություն չըլլա, երբ հայերը ծիսակատարություն կատարեն հինեն ի վեր իրենց սեփականության տակ գտնվող եկեղեցիներուն, վանքերուն և ուխտատեղիներուն մեջ, ինչպես նաև արգելք չհարուցվի ասոնց նորոգությանը: Որևէ քահանա պասակ չկատարե առանց պատրիարքի արտոնության և հակառակ իրենց ծեսի պահանջներուն: Երբ հայ կին մը ամուսինին քովեն փախի, կամ այր մը ուզե իր կինը թողով և կամ կին առնել՝ պատրիարքեն և իր ներկայացուցիչներն զատ որևէ մեկը չմիջամտե: Մեռնող հայ առաջնորդները կամ քահանաները և կամ որևէ հայ, եթե իրենց ծեսին համաձայն կտակ ընեն եկեղեցիներուն, աղքատներուն և կամ

պատրիարքին՝ օրինական թող սեպվի: Որևէ մեկը թող չմիջամտե, եթե պատրիարքը իրենց ծեսին կանոններուն անսաստող առաջնորդները կամ քահանաները պատժեն, անոնց մաղերը խուզե, զանոնք պաշտոնանկ ընեն և սնոնց եկեղեցիները ուրիշներուն տա: Պատրիարքը տերը ըլլա եկեղեցիներու պատկանող այգիներուն, պարտեզներուն, ագարակներուն, մարգագետիններուն, արտերուն, ջաղացներուն, շենքերուն, փանայիրներուն, վանքերուն, խանութներուն, պատշատու ծառերուն, կարասիներուն և արցաններուն: Պատրիարքը իրավասություն ունենա պատշաճը տնօրինելու այն հայերուն նկատմամբ, որոնք առանց եկեղեցի և վանք ունենալու, թաղի թաղ ման կուգան և հակառակ իրենց ծեսին, կգրդուն հարազատ հայ ուայաները: Երբ կճամբորդի պատրիարքը, իշխանությունները չկարենան միջամտել անոր հեծած ձիերուն, անոր բարապաններուն (յասաշչի). Հետի մարգոցը, ինչպես նաև անոր տարա զին և հանդերձանքին: Պատրիարքին սնամնդին հատկացված այգիներու բերքը կամ հավատացացալներու կողմեն իրու նպաստ (ուսադրություն) ընծայված շիրան, յուղը, մեղրը և ուրիշ նյութեր երբ կփոխադրվին անոր բնակարանը, արգելք չհարուցվի նավամատուցաներին կամ դոներին անցած ատեն: Որևէ քրիստոնյա («հայ») մուսուլման դառնալու շդատապարտվի առանց իր կամքին: Տարեկան 140 000 արշի գումարը հատուցվելի հետո, պատրիարքը չպարտադրվի ուրիշ գումար ևս վճարելու: Հայ քահանաները չպարտադրվին թաղման կարգ կատարելու, երբ կրոնքին պայմաններուն հակառակ ամուսնացող մը մենուի: Պատրիարքը, իր քափութեհան, և իր հետեւորդներին 15 անձ զերծ ըլլան նիգիյենի, ավարիզի և թեքյալիի տուրքերին: Քահանաներուն և վարդապետներուն հաշիվներու ըննությունը պատրիարքին և իր ներկայացուցիչներուն ձեռքով միայն կատարվի: Որևէ փաշա, մյութեսելիիմ, վյովոյա կամ ուրիշ որևէ իշխանավոր չկարենա իսկական հայ ուայաներուն ձեռքեն առնել անոնց ունեցած եկեղեցիներն ու վանքերը և զանոնք տալ ուրիշ դավանանքի պատկանող ու կաթոլիկ կոչված խոռվարարներուն (մուֆիդի): Օտար դավանանքի պատկանող և կաթոլիկ ըլլալու մեղքով (ոռմեր) մեղադրված սուկն խոռվարարներու հանցանքին համար նեղություն չպատճառվի իսկական հայ ուայաներուն: Հայոց պատրիարքին միջոցավ և անոր դեկուցագրով դավանանքի պահանջմանց սահմանին մեջ տնօրինվի անոնց մասին հարկ եղածը: Այդ կարդի խոռվարարներու մասին սահմանված տուգանքեն գոյացող պարտքերու համար ուտնձգություն չըլլա քա-

դաքներու և գյուղերու մեջ զտնվող եկեղեցիներու և վանքերու գույքերուն Թուլլատոռություն շտրվի այն հայերուն, որոնք, հակառակ իրենց գաղեմի ծեսին, կամունալուծվին և կամ երկրորդ կին մը կառնեն, և պատժրվին այդպիսիներու: Միջամտություն ըրլա պատրիարքի ձեռքի ասային: Պետական մուքարան հավաքելու համար ման եկող գարդապետներուն ինչքերուն և կենդանիներուն ոտնձգություն ըրլա իշխանությանց կողմեն ենեղեցիներու հատուկ գույքերն մաքսատուրք (գյումրակ) և անցատուրք (բազ) շգանձի: Եերի հետ առնշություն ունեցող անոնց դատերը հովին ուղղակի կայսերական մեր դիվանին (Դիվանի հյումայուն):

«Բերաթ»-ը, զոր թարգմանաբար համառոտեցինք, գաղափար մը կրնա տալ իրավունքներուն մասին Կոստանդնուպոլսու Աթոռին վրա նստող պատրիարքներուն: Իրավունքները, որոնք ճշտված են ԺԷ դարու այս հրովարտակին մեջ, հավանաբար հարմենան են նախկին տարիներու մեջ հայոց պատրիարքներուն շնորհված իրավասությանց, եթե նույնիսկ տարբերին ինչ-ինչ մանրամասնությանց մեջ: Նույն այս իրավունքները հետագային ալ տրված են հայ պատրիարքներուն, ինչպես կերևա ուրիշ քրերաթթա-բ մը, որ 1831 հոկտեմբեր 4/16 թվականին տրված է Ստեփանոս պատրիարքին սովորան Մահմուդի կողմեն^{262:}

Թե հայ պատրիարքներու տրված «Բերաթ»-ներուն մեջ կնախատեսվեին տուրքերը, զորս անոնք իրավունք ունեին պահանջելու իրենց հոտեն հոտեն, այդ մասին վկայություն կա առքայական ֆերմանի մը մեջ, զոր Մուրադ Դ տված է 1631 հունվար 2/12-ին Զաքարիա պատրիարքին դեմ հայ համայնքին կողմեն տրված բողոքի մը առթիվ: Այդ ֆերմանը, զոր թուրք ծանոթ պատմագետ Ահմեդ Ռեֆիք կիրապարակե, պետական արխիվներին քաղելով երբեմնի «Ստամբուլի կյանք»-ին նվիրված վավերագրերու իր ժողովածուներուն մեջ, մեկն է ամենահին թուրք վավերաթուղթերեն, որոնք հայոց կվերաբերին, կիրագմանենք նույնությամբ.

«Ստամբուլի գատավորին կիրամայլի որ՝ Ստամբուլի հայ համայնքը հոտս գահոյից խնդրանք ներկայացնելով հայտնեց, թե իրենք կպատկանին մեր նախահոր սովորան Մեհմեդի վարքին և [Ստամբուլի] կայսերական գրավումն մինչև աւսօր, այն օրերը, երբ կհավաքվին եկեղեցիներու մեջ ըստ իրենց սոստի (բաթոլ) ծեսին, ամեն մեկը իր կարողության համաձայն դրամ մը կձգեն

262 Ա. Պետրովյան, հիշեած աշխատությունը, էջ 222—227:

անակի մը մեջ, և այդ դրամը հավաքելով հնուց ի վեր կօգնեն իրենց մեջեն անկարներու և գործելու անկարողներու:

Եվ սակայն իրենց ներկա պատրիարքը Զաքարիա, իր շուրջի հոգուրականներն Ավետոսի (հավանաբար Ավետիս), Գրիգորի, Ասֆադիայի (հավանաբար Աստվածատուր) և Սարգիսի թելաղությամբ, սկսած է, բացի այն տուրքերին, որոնք նախատեսված են հիշյալ պատրիարքի «բերաթ»-ին մեջ, գումար վերցնել հիշյալ դրամեն, և եկեղեցիներու պատկանող պարտեզներին պատղատուրք (մելք աբշաբի) պահանջել, և այս կերպով վշտացնել և խրտչեցնել [ժողովուրդը]:

Այս բոլորը հայտնելով, կաշխատեին, որ արքայական հրամանով մը արգիլեմ այդ բանը:

Կհրամայեմ հետևաբար, որ ներկայս ստանալու ուշադիր ըլլաս և եթե ստուգես, որ ասոնք իսկապես հիշյալ վարքին ուայներն են և ցարդ տեղի ունեցած է վերը հիշյածին պիս, իսկ հիմա պատրիարքը, հակառակ ցարդ կիրարկվածին, կմիջամտե վերը բացարկած ձևով, կվշտացնե, կիրտչեցնե և կձնշե, թույլ շտաս, որ ասկե հետո միջամտություն (աշխատ) և ոտնձգություն (թեարշություն) տեղի ունենա ի հեծուկս ցարդ գործադրվածին, նվիրական օրենքին (շերի շերիք) և արքայական հրամանին, արգիլես և վերը տաս, և թույլ շտաս, որ հիշյալ պատրիարքը, իր բերաթ»-ին մեջ նշանակվածնեն և ճշտվածնեն ավելի որևէ բան պահանջեն, ճնշե և ոտնձգություն կատարե:

1040 զեմազուզախեր 8 (1631 հունվար 2/12):

* * *

Հերթական հարցը, որ մեզ կզբաղեցնե, նույնքան շփոթ կներկայանա մեզ:

Ինչպես կանվանեին պատրիարքները:

Հայ եկեղեցին գովարանած ատեն, սովորություն ըրած ենք պարծենալ, թե ժողովուրդապետական ոգին է հիմնական խարիսխը անոր գործունեության, թե ժողովուրդին կա մքովն է, որ հայ հոգուրականները Հայ եկեղեցին վարելու կուգան, թե զանգվածներու հսկողության տակ է, որ կգործեն հայ հոգեւորականները նվիրապետական բոլոր աստիճաններուն վրա:

Եվ արդարեն, Հայ եկեղեցին սկիզբեն ի վեր ժողովուրդեն է առեր իր ուժը, և այդ ուժին է կոթուներ բոլոր փորձություններուն, բոլոր աղետներուն պահուն: Ու փոխարեն՝ հայ ժողովուրդն ալ իր եկեղեցվոր հովանին տակ ապաստան է գտեր իր դժոնդակ օրերուն, և անոր յեց՝ փորձած է տոկալ, դիմանալ:

Օրմանյան, Հայ Եկեղեցին բնորոշելու աշեն, զանց լրներ անոր արժանիքներուն մեջ թել նաև Հայ Եկեղեցվո այդ գիծը²⁶³:

Ժողովրդապետական այդ ողին միշտ չէ որ, սակայն, իր արտահայտությունը պատճ է Հայ Եկեղեցվո կյանքին մեջ: Հայ Եկեղեցվո պատմությունը որքան գրվագներ մեզ կուտա, երբ Հայ ժողովուրդը արժամարժված է եղեր լրիվ, նույնիսկ Հայ Եկեղեցվո ամենեն բախտորոշ օրերուն:

Պոլսո Պատրիարքական Աթոռը, իր պատմության մեջ, ուև էջեր ինքն ալ ունի: Պատրիարքներու ստվար մասը զգեցած է իր կապան դավիրու շնորհիվ, անգիտանալով զանգվածն ու անոր տրամադրությունները և ուրիշ կովան չունենալով, բայց եթե սուլթանին բարեհաճությունը, որուն կտիրացվեր գրեթե միշտ խոտոր ճամբաներով:

Խնձորեստեսանք, Ֆաթիհ սուլթանին կամքն էր, որ իր Աթոռին վրա նստեցուց հայոց առաջին պատրիարք Հովհանիմը: Ոչ հայ ժողովուրդի կամքը, ոչ ալ ցանկությունը դեր ունեցան հոգի եթի հույն կերպին ցանկությունն ալ կար Գեննատիոս պատրիարքի անվանման մեջ, հայ կերը նման հնարավորութենեց դուրկ էր, որովհետև կերպական դաս դեռ հայր չուներ օսմանյան նոր ճայրաբաղադրին մեջ, երբ պաշտոնի կանցներ Հովհանիմ:

Ստույդ տվյալներ չունինք, գիտնալու համար, թե զանգվածները ինչպես կարտահայտեին իրենց կամքը պատրիարքներու ընտրության ատեն, Աթոռին ստեղծման հաջորդող շրջաններուն մեջ: Գիտենք միայն, որ սուլթանին կամքն էր, որ Աթոռ նստեցուց Հովհանիմի անմիջական հաջորդները:

«Կ. Պոլսո Հովհանիմ պատրիարքին մահվանեն ետև՝ Մուհամեդ սուլթան նախ Սեր Մատթեոսը բերավ պատրիարքության համար, երբ սա հրաժարեցավ՝ Տրապիզոնն Արքահամ վարդապետը կապ, երբ ու ալ հրաժարեցավ... Գաղատիային նիւողու առքեափիսկոպոսը բերավ և պատրիարք կառուց»²⁶⁴:

Գաւամքարչան իր տեղեկությունը կրազե հավանաբար Ամիրզովյաթ Ամասիացի բժբշկադիմատին համար 1480-ին ընդորինակված Համբավավոր Սաղմոսարանի հիշատակարանին, ուր գրիոր Մարտիրոս կրու, թե 1479-ին զինք Գարամաննեն «սուլթանուն թերին Պոլս, ուր մնաց «առ ուստ սուլր վարդապետին մերու տէր Մաթէոսի Սերաստացոյ և Արքահամ վարդապետի Տրապիզոնեցոյ, որ և զսու-

263 Օրմանյան, «Հայոց Եկեղեցին», Կ. Պոլս, 1911, էջ 181 և 185:

264 Հ. Գ. Գալիմեյարյան, «Հանդես ամսօրյա», 1911, էջ 478:

րայ ալ խոնդքարն բերել էր վասն պատրիարքութիւնն համար, և սոքա ոչ առին յանձն լաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ ի մարդկանէ»²⁶⁵:

Զգիտենք մինչև ե՞րբ տևեց այս դրությունը:

Կերսի, թե սուլթանները տակավ սկսան հաշվի առնել նաև հայ համայնքի ցանկությունները, իսկ հայ համայնքը ըսելով պետք էր հասկնալ այն վեց հասարակությունները (Ալթը ջեմաթի), որոնք մարմին էին առեր Պոլսո մեջ Ֆաթիհի իսկ օրեն և որոնք հավանաբար ունեին նաև իրենց Եկեղեցիները իւրենց հոգեւոր դասով:

Մինչև Ժի զարու վերջերը և անկե հետո ալ ոչից ջեմաթի»-ները Պոլսո հայ համայնքը կներկայացնեին հաչու պետության, և նաև հաչու հայ համայնքին: Պասմանյան պատրիարք եթե իր հրաժարականը ներկայացնելու համար 1772 փետրվար 22-ին ժողով կհրավիրեց Մայր Եկեղեցվո մեջ, հուն հիշավարվին ոչից ճէօմահաթիք, քահանայթ և իշխանք, և ի բոլոր էսնաֆից ծերունիք և ի խօսից տեսարք, աւելի քան զհազար»²⁶⁶:

Պատրիարքները ձեկանորեն պետք է Աթոռ զային «Ալթը-ջեմաթի»-ներու կամքով: Այսպես էր գոնե թուրք իշխանությանց պահանջը նոր պատրիարքը հաստատելու համար իր Աթոռին վրա:

Հայոց պատրիարքները պաշտոնի չէին կրնար անցնիլ սակայն առանց Բարձրագույն գուան գրավոր հաճության: «Քերաթի»-ը, որով կտրվեր այդ հաճությունը, կշնորհվեր հանուն սուլթանին, սուլթանական թուրքան կրելով ճակատը:

Սովորություն էր, որ պատրիարքին շնորհված սուլթանակամ «քերաթ»-ին մեջ նախ ակնարկությունը ըլլար, թե նոր պատրիարքը ին, պայմաններու մեջ կուզա Աթոռու:

Ան «քերաթ»-ին մեջ, զոր քիչ վերը հիշեցինք և որով 1764-ին սուլթան Մուսթաֆա Գ Գրիգոր Պասմանյան պատրիարքին ընտրությունը կհաստատե, կըսե, թե Կոստանդնուպուսու և ենթակա շրջաններու հայոց պատրիարքը Հակոբ [Նալլան], որ 24 տարին ի վեր կվարեր պատրիարքությունը կայսերական հրովարակի մը հիման վրա, հաստատամտության և ուղղամտության կատարյալ պատմաններու մեջ, կայսերական դիվանին ուսուված գրությամբ մը կհայտնե, որ իր հիշանդության պատճառով այլևս ի վիճակի չէ

265 Դոկտ. Վ. Թուրգման, «Հանդես ամսօրյա», 1895, էջ 247:

266 Բարզին ծայրագույն վարդապետ Կյուկիսեյան, «Հիշատակարան Պասմանյան Գրիգոր պատրիարքի», էջ 95:



պատրիարքությունը վարել և որ կուզե իր պաշտոնը փոխանցել իր իսկ ձեռնանալներեն և իր անթերի վարքութարքով ծանոթ երուաղեմի պատրիարքական փոխանորդ Գրիգոր վարդապետին:

«Արդ, — կավելցնե «բերաթ»-ը, — վեցյակ հասարակությունը (Ալթը շեմաաթ) կոչված հայ ուայացությանց վարդապետներն ու քահանաները (ուահիպ վե փափազ), հասարակության ղեկավարները (միլլեթ բաշը) և տուներնին տեղերնին ծանոթ էսնաֆներու ծերերը (էսնաֆ իխրիյարերի) միահամուռ հարմար զատած ըլլալով հիշյալը պատրիարքական պաշտոնին համար, հաճություն կորպվի տեղի ունեցած փոխանցման», և այլն²⁶⁷:

Ստեփանոս պատրիարքի պաշտոնը հաստատող «բերաթ»-ին մեջ ևս կակնարկվի ընտրության պարագաներուն, բայց շատ ավելի անորոշ ձևով մը: Հիշյալ «բերաթ»-ը կըսե, թե հայոց Կարապետ պատրիարքը հիմնության պատճառով հրաժարած ըլլալով, հրամավեցավ ուրիշ մը ընտրել տեղը և հետեարար «հայոց ազգին անհրաժեշտ սեպվող անձերը» (էրմենի միլեթին լազրմ գելեներ) Պատրիարքարան հավաքվելով ընտրած են Ստեփանոսը²⁶⁸:

Բայց Վեց շեմաաթներու կամքը իրականին մեջ հարցնող չկար: Բարձրագույն դռան ցանկությունն էր որ կտնօրիներ հաճախ ամեն բան: Եվ այդ ցանկության մեջ կիսաղար առավելապես օրվան փաշային անձնական շահագործությունը:

Եվ ամեն փաշայի կռնակը հայ ամիրա մը կար, որ իր կամքը կը շնորհած անոր ականջին, իսկ ամեն ամիրա իր նախընտրած եպիսկոպոսը ուներ:

Եվ իթե ասոր վրա ավելցնեք ամոթալի կոփվները, զորս Պատրիարքական գահուն թեկնածուները կմղեին Աթոռը իրարու ձեռքե հափշտակելու համար՝ պատկերը կը լլա ավելի լրիվ:

Պետք է մոտենանք անցյալ դարու կեսերուն, որպեսզի զանգվածներու ձայն ալ գրտնենք պատրիարքներու ընտրության մեջ: Եվ այդ՝ առանց պայքարելու շեղավ՝ Բայց արդեն տարբեր նյութ է այդ:

* * *

Սկզբնական շրջանին «պատրիարք» բառը չեն գործածած հայերը. Պոլսու իրենց հոգեոր պետին համար, տիտղոս, զոր կրեին Օրթոդոքս եկեղեցվո հոգեոր պետերը Պոլսու մեջ ինչպես Ֆաթիհն առաջին գործառությունը մասին, և զոր տեսանք ավելի վերեւ:

267 Ա. Պերպերյան, «Պատմություն հայոց», էջ 228,

268 Անդ, էջ 222.

չեն հետո, և զոր կրած էին ու շարունակեցին կրել մյուս հոգեոր պետերը ևս Անտիոքի, Աղեքսանդրիո և Երուսաղեմի մեջ: Պոլսու մասին հայ աղբյուրներու մեջ «պատրիարք» բառին չենք հանդիպիր գրեթե ամբողջ դար մը: Զեռագիրներու հիշատակարաններուն մեջ առհասարակ «հայրապետության» ըսված է պատրիարքության պաշտոնին համար:

Այսպես, Պոլսու առաջին հայ պատրիարքին համար «ի հայրապետութեան Տէր Յովակիմայ արքեպիսկոպոսին» կարե Ամիրդովլաթի Ամիամկական գիրք»-ի հիշատակարանը 1474-ին²⁶⁹:

Ամիրդովլաթի «Անգիտաց անսկէտ»-ի հիշատակարանին մեջ ևս, 1477-ին, «ի հայրապետութեան մայրաքաղաքն ի Կոստանդնուպոլիս Տէր Նիկավայոսին» ըսված է Հովակիմի հաջորդին համար:

«Ի հայրապետութեան Տէր Կարապետին քաղաքին Կոստանդնուպոսի» կրսե նույնապես Պալաթի եկեղեցին պահված Սկլուպյի Ավետարանին հիշատակարանը, ակնարկելով նիկողոսի հաջորդին²⁷⁰:

Առաջին անգամ պատրիարքը բարին կհանդիպինք դար մը հետո միայն: Մաղաքիադպի, արձանագրելով Արգար Ելդրոկիացիի փորձերը Պոլսու մեջ տպարան հաստատելու համար, հիշեն, որ Պոլսու մեջ տպագրված առաջին հայ գիրքը, «Փոքր քերականութիւն»-ը, լույս տեսավ 1567-ին; «ի շորրորդ ամի պատրիարքութեան Յակոբ բարունապետի Կոստանդնուպոլույց»²⁷¹:

Դժբախտաբար հայոց վերաբերյալ թրքական հին վավերաթուղթեր չեն հասած մեղի, որպեսզի գիտնայինք, թե պաշտոնապես ե՞րբ է սկսած «փաթրիք» (պատրիարք) կոչվի Պոլսու հայոց հոգեոր պետը: Ամենահին վավերագիրը, ուր «փաթրիք» բարին հիշատակությունը կգտնենք, 1631 թվականին է միայն: Կակնարկենք այն փերմանին, զոր Մուրադ Դ ուղղեց Կոստանդնուպոլս դատավորին՝ հայոց «Զաքարիա փաթրիքին ապօրեն գանձումներուն» մասին, և զոր տեսանք ավելի վերեւ:

2. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒ ԱԹՈՒԹԵ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պոլսու մեջ հայ Պատրիարքության հաստատման պահուն և անկե հետո ալ դեռ շատ երկար ատեն ծշտված չէր անշուշտ Պոլսու հայ պատրիարքին դիրքը Հայ եկեղեցվոն վի-

269 «Երկրագունդ», 1884, էջ 551:

270 Հ. Հ. Տաշյան, «Մայր ցուցակ...», էջ 189:

271 Հ. Գ. Զարգրիմանալյան, «Պատմութիւն հայ տպագրութեան», Վենետիկ, 1895, էջ 47:

րուպետության մեջ, եվ այդ շատ բնական էր: Պոլսու հայ Պատրիարքությունը մարմին կառավար և ամի հայ ժողովուրդի կամքեն անկախ, և Հայ Եկեղեցվո ազգեցության սահմաններեն դուրս: Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը հազիվ երկու տասնյակ տարիե ի վեր փոխադրված է չգմիածին, ի վիճակի չէր օսմանյան կայսրության սահմաններեն ներս տարածելու իր հոգեությունը հեղինակությունը. իսկ Սիսր, որ կարունակեր դեռ կաթողիկոսական հավակնությանց ցանց մը պահել, մինչև Պոլսու չեր կրնար հասցնել այդ հավակնությունները: Այնպես որ Պոլսու մեջ հայ Պատրիարքությունը կստեղծվեր Հայ Եկեղեցվո պիտակը վրան, բայց անոր շրջագծեն դուրս: Բնականոն չէր անշուշտ երևույթը, և այդպես ալ պետք էր ըլլալ, որովհետև ան ի հայտ կուգար ոչ բնականոն պայմաններու մեջ:

Օրմանյան ընդհանուր բառերով միայն կուրվագծե անբնականոն այդ կացությունը: Ան կգրե պարզապես, թե Պոլսու առաջին հայ պատրիարքին՝ «Հովակիմի ստացածը նոր պաշտոն չէր, զի արդին Արևելյան Փոքր Ասիս և Հարավային Եվրոպի օսմանյան գավառներու առաջնորդն էր, և ինչ որ Ֆաթիհն կստանար քրիստոնյաներու համար կազմակերպված նոր կացության գործադրությունն էր Միայն առավելությունը, զոր հայեր կստանային, պատրիարք անունով պատված և պատրիարքի իրավունքներով ճոխացած պետ մը ունենալն էր Սակայն գրված պատրիարքությունը լոկ արտաքին պատիվ է իրավունք էր, Եկեղեցական նվիրապետության տեսակետով Պատրիարքական Աթոռ մը հաստատել վեհապետական կարողութենեն վեր էր, և բարձրագույն Եկեղեցական իշխանութենե մը այդպիսի իրավասություն կամ աստիճան հաստատված չէր: Վասնզի ոչ Սիսր և ոչ չգմիածնի Աթոռները, որչափ որ գիտենք, Կոստանդնուպոլսով զբաղած շենք²⁷²:

Այս շփոթ կացության մեջ, անորոշ կմնար բնականաբար Պոլսու պատրիարքին իրավասության շրջանակը ևս: Տրամաբանական է մտածել, որ այդ իրավասությունը ընդգրկեր օսմանյան բռվանդակի հողը այն օրերու իր սահմաններուն մեջ, և ընդլաներ՝ քանի կրայիննային պետության սահմանները:

Պոլսու Պատրիարքությունը առաջին իսկ օրեն հոգեպես կապված կգտնենք սակայն չգմիածնա Մայր Աթոռին: Պոլսու գրավումն հետո գրված ամենածին Հայ Ճեռագիրներեն երկուք՝ Ամիրդովլաթի «Գիրք ուամկօրէն»-ը և «Անդիտաց անպէտ»-ը, 1474-ին և 1478-ին չգմիածնի Սարգիս կաթողիկոսն է որ կհիշեն իրեւ ամենայն հայոց հայրապետ:

Էջմիածնի հեղինակությունը հետզհետե ամրապնդվեցավ, մինչ Կիլիկիո Կաթողիկոսությունը կծծատեր Միջերկրականի ափերուն վրա, իսկ Աղթամարինը ազդեցության դուրս շրջանակ մը միայն կպահեր: Այդ ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հոգեությունը տարածվեցավ երուսաղմի և Կոստանդնուպոլսու զուգ Պատրիարքությանց և անոնց թեմերուն վրա, ու Հայ Եկեղեցվո նվիրապետությունը վերջնականապես իր կերպարանքը գտավ:

Այդ նվիրապետության մեջ Կոստանդնուպոլիսը էջմիածնի հոգեությունը հեղինակության ննթակա Աթոռը մը մնաց: Բայց այդ շարգիլեց իրեն, որ երկար դարեր ան ազգային կեղորն մը մնա հայ ժողովուրդին համար, իր վարչական իրավասություններուն ենթարկե հաճախ օսմանյան կայսրության սահմաններուն մեջ գոյություն ունեցող մյուս Աթոռները՝ երուսաղմի Պատրիարքությունն ու Կիլիկիո և Աղթամարի կաթողիկոսությունները, և հայ ժողովուրդի վերջին դարերու պատմության մեջ կատարե բացառիկ դեր մը:

3. ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒԾՈ ԱԹՈՌԻՆ ՈՒ ԻՐ ԹԵՄԵՐԻ

Կմտնենք դարձյալ կնճոռու գետին մը: Իրո՞նք էին Պոլսու Պատրիարքության իրավասության սահմանները և ի՞նչ թեմեր գոյություն ունեին հոն:

Հարցումը սակայն իր որոշ պատուխանը կգտնե, եթե նկատի ունենանք, որ այդ սահմանները լայնցան քանի ընդլայնեցավ օսմանյան կայսրությունը ինքը, և որ հայ թեմերը ևս անցեցն այդ սահմաններուն հետ:

Կնճիրը սակայն միշտ կմնա կնճիր, երբ ստիպինք քննել, թե ի՞նչ կներկայացնեին այդ թեմերը ինքնին, և ի՞նչ էր անոնց կապը Պատրիարքության հետ:

Երբ Ֆաթիհ Պոլսու մեջ Պատրիարքարան կհաստատեր 1461-ին, օսմանյան պետության սահմանները կտարածվեին Փոքր Ասիս մեջ Բրուսայի, Այդընի, Քասթեմունիի, Էնկուրիի և Սպազի շրջաններուն վրա, իսկ այս շրջաններուն մեջ երեք հայ հոգեություններ կային միայն՝

ա. Սեբաստիան իր Ս. Նշան վանքով,

բ. Էնկյուրիի իր Ս. Աստվածածնի վանքով,

գ. Բրուսան, Կուտինան և Քարամանը, զորս Հավանաբար միակ եպիսկոպոս մը կհովվեր:

Ֆաթիհի օրով օսմանյան կայսրության կցվեցան Տրապիզոնը 1461-ին և Ղրիմը 1475-ին, որոնք նույնպես հայ հոգեություններ էին, և որոնք ևս բնականաբար պիտի մտնեին Պոլսու Պատրիարքության հոգեության տակ:

Պոլսոն Հայոց Պատրիարքության իրավասության շրջանակը ավելի ևս պիտի ընդարձակվեր, երբ սուլթան Սելիմի օրով (1512—1520) կայսրության սահմաններուն մեջ պիտի մտնեին Կիլիկիան, Սուլիան, Միջազգետքը, Բաղեշը, Մալաթիան, Պաղեստինը և Եփթափոսը, և այս հաղթություններով կ. Պոլսոն Պատրիարքության բարոյական հեղինակությունը պիտի աճելու հանդեպ Կիլիկիա Կանողիկոսության և Երուսաղեմի Պատրիարքության, որոնք իրենց ամբողջությամբը, իբր նույն ազգության մաս, կ. Պոլսոն Պատրիարքության մերությ կնկատվին Ֆաթիհի հրովարտակին զորությամբը, թեև մինչև այս դրության նվիրագործումը Երկար ատեն անցած ըլլա»²⁷³: Նույնը պիտի պատահեր Արևելյան թեմերուն համար ալ, որոնք ի սկզբան էջմիածնի Աթոռին անմիջական իրավասության տակ էին, և որոնք հետագային Պոլսոն Պատրիարքության հնթարկվեցան տակավ երբ այդ շրջանները օսմանյան տիրապետության անցան վերջապես:

ԺԳ դարու ընթացքին Պոլսոն Աթոռին իրավասության պետք է անցած ըլլան Մուշն ու Տիգրանակերտը իրենց հարակից վիճակներով, իսկ ավելի հետո, նույն դարու վերջեն սկսյալ, երբ Զալալիներու արշավանքին և թուրք և պարսիկ բախումներուն պատճառավ դերջանցի, երգնակացի, կամախցի, ակնցի և դիվրիկցի գաղթականներ պիտի գային զետեղվիլ Մարմարայի զույգ ափերուն մոտ, հոգնոր կեղրուններ պիտի ստեղծվեին նիկումիդիու շրջանին մեջ, Արմաշը ունենալով իբրև առաջնորդանիստ, ինչպես և Ռուսությունի և Ադրիանուպոլսու մեջ:

ԺԸ դարու սկիզբը Կոստանդնուպոլսու Աթոռու թատր եղավ ամոթալի վեճերու, որոնք Պոլսոն հայ գաղութի պատմության մեջ թողուցած են սև էջ մբ:

«Կոստանդնուպոլսու Պատրիարքության սկիզբները բոլոր օսմանյան կայսրության վիճակները, գոնե մայրաքաղաքին որոշ հեռավորությամբ շրջանակի մեջ, ուղղակի պատրիարքին վիճակը կնկատվեին, և թեմական իրավունքներ անոր կպատկանեին, և վանքերու ու քաղաքներու մեջ գտնվող եպիսկոպոսներ ու վարդապետներ թեմակալ չէին, այլ պարզապես իբր մուռախիսան կամ պատվիրակ կնկատվեին և պատրիարքին իրավունքը հՀարգեին: Առաջին անգամ Խով Հովհաննեսի, Վանեղի Զաքարիայի և Դարանաղեցի Գրիգորի միջև կատարված բախու-

թյը, որ ուղղակի իրավունքներու վայելքին համար էր, սկիզբ տվակ առաջնորդական վիճակներու կամ թեմակալությանց բաժանման, որ պատահական առիթե ծագում առնելով, հաստատուն իրավունքի փոխվեցան»²⁷⁴: Եվ սակայն որոշապես չենք գիտեր ոչ թեմերու իսկական թիվը և ոչ ալ անոնց իսկական սահմանները:

Ցուցակը²⁷⁵, զոր Ոսկան վարդապետ կազմեց Ժէ դարու կիսերուն, իբրև պատեհերը Հայ Եկեղեցը նվիրագետության վիճակներուն, առաջին փորձն էր հայ թեմերու վիճակագրությունը կազմելու, բայց այդ փորձը հնոր էր թեմերուն իսկական պատկերը տալիք, և չէր կոմիներ փաստական տվյալներու վրա: Օրմանյան սա բացատրությունը կուտա Ոսկանի կազմած ցուցակին մասին: «Արևմտյան Եկեղեցը նվիրագետության արքեպիսկոպոսարաններու կանոնագոր բաժանման դրությունը տեսնելով, և յուր Եկեղեցքովուն պատիվը պահելու նախանձանությամբ, նմանօրինակ ցուցակ մըն ալ կազմած է Ոսկան Հայ Եկեղեցը նվիրագետության համար, թեպետ մենք կարծենք, թէ իսկականին և իրականին ճիշտ պատկերը պիտի ըրլա յուր ցուցակիը: Հայոց նվիրագետության արքեպիսկոպոսական նահանգներու կամ մետրոպոլություններու և անոնց ենթարկյալ եպիսկոպոսարաններու բաշխված ըլլալը, ոչ միայն կանոնավոր ցուցակներով մեզի համած չէ, այլև ունաց կարծիքով Հայ Եկեղեցին այսպիսի դրություն ունեցած չէ: Մենք շունենալուն համակարծիք չենք, ապաթե ոչ գժվար կըլլար բացատրել նահանգներու անունով կոչված եպիսկոպոսները, զոր օրինակ Սյունյաց, Սոփիաց, Աղձնյաց, Մոկաց, Տայոց և այլն, երբ նույն նահանգներուն գավառներն ալ և քաղաքներն ալ հատուկ եպիսկոպոսարաններ ունեցած են: Ասով մեկտեղ կանոնավոր ցուցակներ շունինք նվիրագետության կազմությունը քաղելու համար, մանավանդ Ոսկանի ապրած դարուն մեջ, ուր այլևս նահանգներ ու գավառներ ալ բարաքական նշանակություննին կորուսած էին, և կաթողիկոսներ ըստ հաճույս և ըստ բերման թեմականներ կամ առաջնորդներ կծենադրեին: Մենք կիրենք գնահատել Ոսկանի դիտումը, որ ուղած է յուր Եկեղեցին կարգավորյալ ներկայացնել լատին աշխարհին առջև, և իրականը կանոնականի մերձենելով ցուցակ մը կազմած է: Ասով մեկտեղ այդ ցուցակը կարելոր կնկատվի, գոնե ժամանակին տիրող մեծ բաժանումները, և

273 Ա. Ալպոյանյան, «Թուրքիու Հայոց Պատրիարքություն», «Ընդարձակ օրացուց Ազգային հիմանդանության», Կ. Պոլիս, 1908, էջ 292.

274 «Աղղապատում», թ. էջ 2360:

275 Հ. Ալիշան, «Այրարատ», էջ 231.

նույն ատեն գտնվող նվիրապետության պատկերը գիտնալու համար»²⁷⁶:

Արդ, Ոսկանի կազմած ցուցակը Հայ Եկեղեցու 140-ե ավելի վիճակները երկու կաթողիկոսությանց վրա կրաժնե, էջմիածնի ենթակա ցուցնելով 17 արքեպիսկոպոսարաններ 105 եպիսկոպոսական թեմերով: Այդ 17 արքեպիսկոպոսարաններն են Երևան, Քչնի, Հաղբատ, Կարմիր վանք, Ս. Նախավկա, Մակու, Տաթի, Ասպահան, Վան, Աղթամար, Ամիդ, Խարբերդ, Մուշ, Կարին, Սեբաստիա, Կեսարիա և Եվգոնիա: Միսի Կաթողիկոսության կենթարկե 6 արքեպիսկոպոսարաններ (Կոստանդնուպոլիս, Երուսաղեմ, Թերիա, Թեսալոնիկե, Կիարոս և Տարտոն) և 6 ալեպիսկոպոսարաններ (Անարգարա, Աղանա, Մոպսուստիա, Թիանա, Նեռկեսարիա և Անկյուրիա): Ասոնցմե զատ Ոսկան հՀիշե 25-ի չսփ հեպիսկոպոսարաններ, որոնք անձանոթ են կամ զագրած, ինչպես և 5 պատվակալ արքեպիսկոպոսարաններ «Համարինացլալ հայք» անվան տակ (Նախիջևան, Կաֆա, Մարաղա, Տփղիս, Սովորանիե), վերջին 4-ը «Հնջված» ցուց տալով:

Ինչպես կտեսնվի, իրականության անհամապատասխան ցուցակ մըն է Ոսկանի կազմածը, ինչ որ Օրմանյան կվերագրե Ժէ դարուն Հայ Եկեղեցու ներկայացլության մականական կիրարկին:

Ժէ դարու վերջերն է միայն, որ Կոստանդնուպոլսո Պատրիարքարանը իր իրավասությունը կտարածե Ամասիա-Մարզվանի, Եղեսիո և Կեսարիո շրջաններուն վրա ալ, իսկ հաջորդ դարուն անոր կենթարկվին Արարակիրը, Երզնկան, Ակնը, Եվգոնիան, Խարբերդը, Կարսն ու Ախալցխան, առանց հիշելու հոգեվոր այն կեղրունները, որոնք այս կամ այն վիճակն անշատված են առանձին կեղրուններ կազմելու համար:

Ժէ դարեն մնացած հիշատակարան մը, որ Սարգիս դպիր Հովհաննեսիանի ձեռագիր «Տեղագրության» է և որ «Հնագույն վավերագիրն է կ. Պոլսո Պատրիարքության թեմագրության վրա խոսող», հետևյալ 20 առաջնորդությունները կթվե. էդրենե, Թեփիրդաղ, էնկյուրյու, Ղայսերի, Ամասիա, Բրուսա, Թոքատ, Սրվազ, էկին, Շարբին-Գարահիսար, Թոմարզա, Տրապիզոն, Երզնկայան, Դիարբեքիր, Ուրֆա, էրզրում, Ղարս, Ախալցխա, Ուռումելու մուխաթյան (Ղրիմ, Խեսարարիա և այլն), Արմաշու մուխաթյան (Նիկոմիդիա և այլն)²⁷⁷:

276 «Ազգապատում», Բ, էջ 2546.

277 Ա. Ալպոյանյան, հիշված աշխատությունը, էջ 294—295:

Պետք է գալ մինչև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը՝ թեմերու գասավորման հանդիպելու համար: Արդարեւ, Սիմեոն կաթողիկոսն է, որ առաջին անգամ իր «Զամբռու-ին մեջ»²⁷⁸ Հայ Եկեղեցու առաջնորդական վիճակները նվիրակությանց կրաժնե, որոնցմե 4-ը պարսկահայ նվիրակություններ են (Սպահան, Գավրիք, Նախիջևան և Երևան), 6-ը ուղղակի էջմիածնի ենթակա տերունի թեմեր են (Զյուռնիա, Բաղդագ-Բասրայի վիճակը, Գիւլնի երկիրը, Տփղիս բովանդակ Վրաստանի հետ, Հաշտարխան և էջմիածնի հատուկ տերունի գյուղերը), իսկ 10 նվիրակություններ ալ տաճկահայ վիճակները կներկայացնեն (Կ. Պոլիս, Աղրիանուպոլիս, Ղրիմ, որուն հետ են Բեսարարիան, Վալաքիան, Մողովան և Բուլղարիան, Եվգոնիա, Անկյուրիա, Կարին, Կարս, Բայազեղ, Վան և Դիարբեքիր):

Եվ սակայն Սիմեոն կաթողիկոսի կատարությալ դասավորումն ալ դատապարտված էր թուղթի վրա մնալու: Դեպքերը թույլ չւ-վին, որպեսզի Մայր Աթոռը իր հեղինակությունը կիրարկե, այնպես որ թեմերու բաժանումը շարունակեց միշտ խառնակ մնալ:

Պոլսո Պատրիարքարանին մեջ 1834 թվականով արձանագրություն մը հետևյալ 36 վիճակները մաս կնկատե Թուրքիո հայոց Պատրիարքության. Աղրիանուպոլիս, Ռոդոստո, Նիկոմիդիա, Վանա-Շումանու, Բրուսա, իղմիր, Բանդրմա, Կուտինա, Մարզվան-Ամասիա, Եվգոնիա, Թամզարա, Գաղատիա, Կեսարիա, Սեբաստիա, Զնքուշ և Աստիշ, Շարին-Գարահիսար, Երզնկա, Ակն, Արարակիր, Եղեսիա, Զարշամբա, Տրապիզոն, Կարին, Արդըն, Բարերդ, Բալու, Դաղեմ (Խարբերդ), Վան, Ածալուսեր, Մուշ, Բուլղանըի, Խնուս, Դյուկոս, Մատնավանից թեմ, Ս. Դանիել Կեսարիո:

Պոլսո հայ Պատրիարքության կապված թեմերուն ճշգրիտ պատկերը գտնելու համար պետք է Ազգային Սահմանադրության օրերուն գալ:

Ազգային Սահմանադրությունը Թուրքիո պատրիարքության ենթակա հետևյալ 50 առաջնորդական վիճակները կնախատեսեն: Երուսաղեմ, Եգիպտոս, Բերիա, Կիպրոս-Տարսոս-Սիս, Մարաշ, Հաջըն, Զելիթուն, Աղանա, Եղեսիա, Տիգրանակերու, Քրդստան, Բաղդադ, Բաղեշ, Վան, Աղմամար, Կարս, Մուշ, Երզնկա, Բարերդ, Կարին, Խորեն, Ակն, Դիարբեքիր, Բալու, Կեղի, Աղմաշու մուխաթյան (Ղրիմ, Խեսարարիա և այլն), Արմաշու մուխաթյան (Նիկոմիդիա և այլն)

278 Սիմեոն կարողիկոս Երևանցի, «Զամբռու, գիրք, որ կոչ յիշատակարան արձանացուցիլ», Վաղարշապատ, 1873:

279 Ա. Ալպոյանյան, հիշված աշխատությունը, էջ 295—297:

Մալաթիա, Կյուրին, Անթեք, Քիլիս, Շաբին-Գարահիսար, Սերաստիա, Եվդոկիա, Մարզպան, Ամասիա, Տրապիզոն, Զանիկ, Յողատիա, Կուտինա, Զմունիա, Բրուսա, Բանդրմա, Նիկոմիդիա, Բողոսոսո, Ադրիանուպոլիս, Վալաքիա, Մոլովլա, Վառնա²⁸⁰:

Համիդի օրերուն հետևյալ 45 թեմերը կային Պոլսո Պատրիարքության իրավասության տակ. Կոստանդնուպոլիս, Աղրիանուպոլիս, Ռողոսոս, Նիկոմիդիա—Արմաշ, Բրուսա, Բանդրմա—Բալքեսիր, Քյոթահիա—Աֆիոն-Գարահիսար, Գաղատիա, Զմյունիա, Գոնիա, Քաստեմունի, Կեսարիա, Սերաստիա, Եվդոկիա, Ամասիա—Մարզպան, Զանիկ, Տրապիզոն, Կարին, Դերջան, Բասեն, Քղի, Բարերդ, Երզնկա—Կամախ, Բայազիդ, Վան, Լիմ—Կոտոց, Հեքիյարի, Բաղեշ, Մուշ, Սղերդ, Տիգրանակերտ, Բալու, Արղնի—Զնքուշ, Խարբերդ, Զմշկածագ, Զարսանչաք, Ակն, Արարէկիր, Եղեսիա, Բաղդադ, Եգիպտոս, Բոլղարիա, Ռումանիա, առանց հիշելու չորս հոգեոր հովուությունները (Սելանիկ, Կրետե, Աթենք և Աֆրիկյան Տրիպոլիս):

Սույն շրջանին Կիլիկիո Կաթողիկոսությունը ուներ տասներեք թեմեր, որոնք էին. Սիս, Աղանա—Բերեգիթ, Հաջոն, Հալեպ—Խոկենդիրուն—Քիլիս, Այնթար, Անթաքիա, Մարաշ, Զեյթուն, Մալաթիա, Յողատի, Կյուրին—Մանըլիս, Դիվրի:

Հայ Եկեղեցվո թեմերուն ամբողջական պատկերը, զոր Օրմանյան կոտա Հայոց Եկեղեցի»-ին մեջ²⁸¹, Պոլսո Պատրիարքության ենթակա հետեւյալ առաջնորդական վիճակները կնշանակե.

1 պատրիարքական վիճակ (Կ. Պոլիս).

14 արքեպիսկոպոսական վիճակներ (Նիկոմիդիա, Բրուսա, Զմյունիա, Գաղատիա, Կեսարիա, Սերաստիա, Կարին, Վան, Տարոն, Տիգրանակերտ, Խարբերդ, Եգիպտոս, Բուղարիա, Ռումանիա).

27 եպիսկոպոսական վիճակներ (Աղրիանուպոլիս, Ռողոսոս, Բիլեջիկ, Բանդրմա, Կուտինա, Քաստեմունի, Խոնին, Եվդոկիա, Ամասիա, Շաքին-Գարահիսար, Մամոսոն, Տրապիզոն, Երզնկա, Բարերդ, Բասեն, Դերջան, Քղի, Բայազիդ, Բաղեշ, Սղերդ, Բալու, Ակն, Արարէկիր, Զմշկածագ, Զարսանչաք, Եղեսիա, Բաղդադ.

7 վանական թեմեր (Արմաշ, Լիմ—Կոտոց, Աղանա, Զնքուշ, Կիպրոս, Արղնի, Կամախ).

²⁸⁰ Ա. Պերպերյան, «Հշված աշխատությունը», էջ 425—426.

²⁸¹ Ա. Ալպոյանյան, «Հշված աշխատությունը», էջ 259—262.

²⁸² «Հայոց Եկեղեցին», էջ 259—265.

. 2 տեսչական թեմեր (Սելանիկ, Հունաստան):

Օրմանյան 15 առաջնորդական վիճակներ ենթակա ցուց կուտա Կիլիկիո Կաթողիկոսության.

1 Կաթողիկոսական վիճակ (Սիս).

2 արքեպիսկոպոսական վիճակներ (Աղանա և Մարաշ):

10 եպիսկոպոսական վիճակներ (Հաջըն, Փայաս, Բերիա, Զելիթուն, Այնթար, Անտիոք, Մալաթիա, Յողատի, Կյուրին, Դիվրիկ):

2 վանական թեմեր (Ֆոնուու և Դարենդի): Իսկ Աղթամարի Կաթողիկոսությունը, որ վաղուց անվանական դարձած էր արքեն, երկու վիճակ միայն ուներ ըստ Օրմանյանի ցուցակին.

1 կաթողիկոսական վիճակ (Աղթամար).

1 եպիսկոպոսական վիճակ (Խոլզան):

Ավելորդ է ըսել, որ մեծ սպանդեն հետո, որ բնաջնջեց Թուրքիո Հայությունը և ողջ մնացողները ցրվեց աշխարհի չորս հովերուն, ոչ չոտ մնաց և ոչ հովիկ Թուրքիո գավառներուն մեջ: Քանի մը փոքր Համայնքներ միայն կմնան երբեմնի շեն հայ թեմերուն տեղ: Անոնք հետևյալներն են. Գայսերի, Դիարրեի, Խաթարեի, Խսկենդերուն, Դերիք և Հաթայ²⁸³:

4. ՀԱՅ ԱՌԱՋՈՐԴՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԹԵՍՄԻՆ ՄԵՋ

Օսմանյան տիրապետության տակ պետական կառուցին մաս կկազմեին գավառի հայոց առաջնորդներն ալ և հետևարար անոնց պաշտոնները ևս կնվիրագործվեին կայսերական «բերաթ»-ով:

Գավառի հայոց առաջնորդներ ևս իրենց որոշ առանձնաշնորհումներն ունեին, զորս կհիշտակեր իրենց անվանման «բերաթ»-ը: Մարտերին տակ ունինք 1254 ռեզեր 3 (1838 մարտերի 10/22) թվակիր «բերաթ» մը, որ իրուք Բալուի առաջնորդ կվավերացնե Գևորգ Եպիսկոպոս Օգեմիշցին, հետագային առաջնորդ ուումեն իշխանակետությանց մեջ: Սույն «բերաթ»-ը²⁸⁴ կըսե, թե Պոլսո և ենթակա շրջաններու (Քելվարի) հայոց պատրիարք Ստեփանոս դիմում կատարած է Բարձրագույն ողուու Բալուի և շրջականերու Հանգուցյալ առաջնորդ Պետրոսի տեղ, որ ժամանակին առաջնորդ ընտրված էր 600 ստակ (աթշե) նվեր (Փեշէնի) տալով և համապատասխան «բերաթ» ստանալով, առաջնորդ կարգված է Գևորգ, և կիսնդեր, որ հիշալ նվերը հնչուն կերպով պետական գանձին հանձնվելու պայմանով, «բերաթ» շնորհ-

²⁸³ «Ալեքսանդրություն պատղամավորական ժողովի (11 հոկտեմբեր 1961). պաշտոնական հրատարակություն Աղքային Պատրիարքարանի», 1961, էջ 4:

²⁸⁴ Արմենիկ ուումանահայ թեմի, թիվ 44:

վի անոր: Արդ ստուգված ըլլալ վ, կրսե «բերաթ»-ը, որ Բալովի առաջնորդները նույնքան փեշից կվճարեին և որ Գևորգն ալ այդ գումարը ամբողջությամբ հանձնած է պետական գանձին, կշնորհվի անոր խնդրված «բերաթ»-ը և կհրամայիի, որ Բալովի և շրջականերու մեջ զանգվոր հայերը, մեծ ու պատիկ, զայն առաջնորդ (մերժասա) ճանչնան, իրենց ծեսին վերաբերյալ խնդիրներու մեջ անոր խոսքն գորս շելին, որևէ ընդդիմություն կամ միջամտություն տեղի չունենա երբ ան առաջնորդության ենթակա վայրերուն մեջ քահանա նշանակե կամ պաշտոնանկ ընել տեղը անվանելով ուրիշը, առանց անոր գիտության և արտոնության գյուղերու քահանաները որևէ պսակ շկատարեն հակառակ իրենց ծեսին, առաջնորդեն կամ իր փոխանորդեն զատ որևէ մեկը չմիջամտե եթե կին մը իր ամուսինը թողու հեռանա կամ այր մը ձեք իր կինը, բեյրովմալը կամ քասամը և կամ ուրիշներ շկարենան միջամտել եթե նույն առաջնորդը անժառանգ մեռնող քահանաներուն կամ մայրապետներուն գույքը առն պատրիարքին կողմէ պետական գանձին հանձնվելու համար, ընդունելի նկատվի եթե մեռնող քահանաները կամ մայրապետները և կամ որևէ հայ ըստ իրենց ծեսին որևէ կտակ ընե ալբատներուն, պատրիարքին կամ առաջնորդին, հիշյալ առաջնորդը կարենա արգիլել և պատճել որևէ հայ քահանա, որ առանց եկեղեցի կամ լանք ունենալու, տեղե տեղ ման կուգա և խոռվություն կգրգռե, հիշյալ Գեորգը ևս կարենա տիրանալ այն բոլոր պարտեղներուն, այգիներուն, ագարակներուն, շաղացքներուն, այազմաներուն, արտերուն, վանքերուն և նման գույքերուն և գվարներուն, որոնք եկեղեցիներուն վարք եղած են, ճիշտ այնպես, ինչպես տեր եղած են իր նախորդները, և ինչպես որ կտնօրինե պատրիարք իր կնքյալ գրությամբ:

Իրավունքները, որոնք կնախատեսվին սրբն «բերաթ»-ին մեջ, հավանաբար հարազատ կրկնությունն են այն իրավասությանց, զորս նախկին սուլթանները տված են գավառու հին առաջնորդներուն, և միենույն ատեն շատ շեն տարբերի անոնցմե, որոնք կտրվին պատրիարքներուն:

Իսկ թե որքան ի վիճակի էին գավառներու հայ առաջնորդները կիրարկելու սուլթանական «բերաթ»-ով շնորհված այս իրավասությունները, միամտություն պիտի ըլլար կարծել, որ այդ իրավասությունները կկիրարկվեին իրավես, օսմանյան կայսրության այն օրերու պայմաններուն մեջ, երբ գավառները կտանվեին սեփական բռնապետներու տիրապետության տակ, որոնց չէր հասներ երբեմն կեղոնի ուժը:

Սիմեոն Լեհացի գավառի հայաշատ կեդրուններուն մեջ կատարած իր ուղևորության առթիվ կդրե, թե «այնպէս չար էին եանշարին, որ բրիտանէից չի տային ձի հեծնաւ, ոչ զորի, ոչ լաւ չուփանել, ոչ այգի, ոչ տուն մեծ, այլ զամենայն հափշտակէին ի ձեռաց: Նաև առաջնորդաց շտային քննել հաս-շաս կամ օրէնք պահել զի թէ ոք կամէր կին առնուլ և շհասութք լինէր, շերթային առ հովիւ կամ առաջնորդ, այլ [երթային առ] ենշարի մի և տային կաշառ, և նա զայր իրիցուն թօփուղով պսակ տայր առնել. և նա ակամայ պիտէր խօսիցն չելնէր. ապա թէ ոչ բաղում չարիս անցուցանէր ի գլուխն և վնաս և տուգանք ձգէր զնոսա. այլ և եկեղեցեաց և վահօրէից: Եւ թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են, ապա հարբերդ առաւել քան զամենայն»²⁸⁵:

Առաջնորդները տվյալ գավառին մեջ հոգեոր հեղինակություն մըն էին իրենք ալ, սահմանափակ շափով մը վայելելով այն միենույն իրավունքները, զորս պատրիարքը կվայել Պոլսու և իր հոգմոր իրավասության ենթակա սահմաններուն մեջ, ելզ ոժվար չէ եղրակացնել, թե այն միենույն կապերը, զորս պատրիարքը Պոլսու մեջ ուներ Բարձրագույն դռան հետ, առաջնորդներն ալ գավառի փաշաներուն հետ ունենին, մեջն ըլլալով նաև նյութական պարտականությունները, զորս ուներ ույա հոտի մը պետք գեպի իր տերու:

Առաջնորդներու պարտականություններն մեկն ալ պատրիարքին հատկացված եկամուտներու հավաքումն էր: Անոնք պարտական էին գանձել և Պոլսու հասցնել մուշաքանակ, զորս պատրիարքները ստիպված էին հատուցանել Բարձրագույն դռան:

Առաջնորդական թեմերը միենույն կարևորությունը չէին ներկայացներ սակայն բոլորն ալ և հետեւաբար միենույն ազգեցությունը չունեին բոլոր առաջնորդները: Այդ ազգեցությունը կախում ուներ թեմին ընդարձակութենեն, հասուլթներու առատութենեն և տվյալ շրջանի փաշալին իր իսկ վայելած հեղինակութենեն:

Առաջնորդներու շնորհված հին «բերաթ»-ներ հազվագեպրեն հասած են մեզ: Տարակուս չկա, որ անոնք միենույն բովանդակությունն ունեին ինչ կվերաբերեր առաջնորդներու նյութական պարտականությանց օսմանյան կառավարության հանդեպ և անոնց վայելած իրավունքներուն իրենց թեմին սահմաններուն մեջ: Պատրիարքներուն տրված «բերաթ»-ներուն պիս շատ քիչ փոփոխություններ կրած են անոնք ևս դարերու ընթացքին:

285 Սիմեոն Լեհացի, «Ռուսական պատրիարքություն», էջ 193:

Սեր ձեռքին տակ ունինք պատճենը «բերաբթ»-ի²⁸⁶ մը, զոր սուլթան Մահմուդ թ 1838 սեպտեմբեր 22-ին (1254 ռեշեթ 3) շնորհած է Գևորգ եպիսկոպոս Օղեմիշցիի՝ այս վերջինին Բալուի առաջնորդ անվանման առթիվ: «Բերաբթ»-ը հՀիշշատակեն նախ, որ Պոլիս և իր ենթակա շրջաններու հայոց պատրիարք Ստեփանոս Աղավնի հաղորդած է Հոտս կայսերական գահոյից, որպեսզի հանգույցյալ Պետրոս Հոգևորականին տեղ, որ 600 աքչեն վեշտին վոխարեն կվարեր Պոլսոն Պատրիարքության ենթակա թեմերեն Բալուի և իր շրջականներու առաջնորդությունը, առաջնորդ կարգված է Գևորգ անուն Հոգևորականը՝ 600 աքչեն վեշտինը կանխիկ վճարելու պայմանով և խնդրած է «բերաբթ»-ի մը շնորհումը հիշյալի անվան: «Բերաբթ»-ը կավելցնե հետո, թե դիվանական արձանագրություններեն հաստատված ըլլալով հանգույցյալ Պետրոս Հոգևորականին պարագան և ստուգված ըլլալով, որ հիշյալ Գևորգը արքունական գանձին հանձնած է ամբողջությամբ 600 աքչենի այդ գումարը, կշնորհվի անոր անվան խնդրված «բերաբթ»-ը, և հետևաբար կհրամայվի, որ հիշյալ Գևորգը իր նախորդներուն պես վարե Բալուի և շրջականներու հայոց առաջնորդությունը. իր առաջնորդության ենթակա վայրերուն մեջ գտնվող հայերը, մեծ ու պատիկ, զայն իրու իրենց առաջնորդ ճանշման և իրենց ծեսին վերաբերյալ խնդիրներու մեջ դրւու շելլեն անոր խոսքեն. որևէ միջամտություն ըլլա եթե հիշյալ հոգևորականը հրաժարեցման արժանի քահանաները իրենց պաշտոններ զրկե և փոխարինեն ուրիշներով, առանց հիշյալ հոգևորականին գիտության ու կամքին, գյուղական քահանաները շնամար-

ձակին որևէ պսակ կատարել. պսակյալներու բաժանման վերաբերյալ գործերուն մեջ իրմեն իր փոխանորդներն զատ որևէ մեկը չկարունա միջամտել. անժառանգ մեռնող վարդապետներուն, քանանաներուն և մայրապետներուն թողոնը հիշյալ առաջնորդը առնե՞ պատրիարքին կողմե արքունի գանձին հանձնելու համար, և այդ բանին բեյթ-ուլմալն ու քասսամը չկարենան միջամտել. ընդունելի ըլլա կտակը, զոր մեռնող վարդապետներն ու մայրապետները կընեն իրենց եկեղեցվու աղքատներուն, պատրիարքին և առաջնորդին. առաջնորդը իրավունք ունենա պատժելու և արգիելու այն հոգեորականները, որոնք որևէ վանքի և եկեղեցին շեն պատկանիր և սակայն կթափառին վայրի վայր գրգռությանց տեղի տալով. հիշյալ առաջնորդը կարենա տեր ըլլալ, իր նախորդներուն տեր եղած ձեռվ, իրենց եկեղեցվուն պատկանող այգիներուն, պարտեզներուն, աւարակներուն, շաղացքներուն, այազմաներուն, արտերուն և վանքերուն, ինչպես նաև եկեղեցիներուն վայրի եղած գույքերուն և հոտերուն, ինչպես որ խնդրված է պատրիարքին կողմե մատուցված գրության մեջ, և այս առթիվ միջամտելու իրավունք չունենա որևէ մեկը:

Գևորգ եպիսկոպոս Օղեմիշցիի տրված այս «բերաբթ»-ին մեջ մատնանշված իրավունքները տարակույս չկա, թե վայելած են նախորդ գարերու հայ առաջնորդները ևս գավառներու մեջ, տեր գառնալով հեղինակության մը, որ եթե իր հետ բերած է պատասխանատվություններ և հոգեր ալ, խայծ մը եղած է շատ հոգևորականներու համար թեմի մը տիրանալու, և հաճախ սանդուղք դարձնելու համար

286 Ռումանահայ թեմական արխիվ, թիվ 44:

(Շարունակելի)



Հ. Եղիսաբերթոն

ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԸ

Ա. ՊԱՏՄՈՒԱՆ ՀԱՄԱՌՈՒՏ ԱՅԽԱՐԿԻ

Հավուց թառի նշանավոր վանքը գտնվում է այժմյան Կոտայքի շրջանում, Գառնի գյուղի մոտավորապես 4 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Գառնի գետի ձախ ձորաեզրին։ Վանքն իր անունը ստացել է նրա շուրջը տարածվող նույնանուն գյուղից, որի ավելակ-ների մասցը կերպությանը, ընդարձակ տարածության վրա, մինչև այսօր էլ պահպանվել են։ Մատենագրական ազրյուղներում վանքը կոչվում է Հայոց թառ, Հավու թառ և Հավուց թառ անուններով։ ամենից գործածականը Հավուց թառ անունն է։

Վանքը բաղկացած է երկու խումբ հուշարձաններից, որոնք գտնվում են իրարից քառորդ կիլոմետրաշափ հեռավորության վրա։ Արևմտյան խումբը գտնվում է անմիջապես ձորաեզրին եղած բլրածե բարձրության վրա, ըստ որի ձորի աշակերտ նայողին թվում է, թե մի մեծ, թե առարած հավք թառել է բարձունք՝ կատարին։ Խոկ արևելյան խումբը գտնվում է սարահարթի վրա, անտառի եզրին։

Ոմանք այդ երկու խմբերը տարբեր վանքեր են ենթադրում՝ արևմտյան խումբը՝ համարելով Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը, իսկ արևելյան խումբը՝ Հավուց թառի Ամենափառագույն անհիմն է, որովհետև ինչպես հայտնի է, Աղջոց Ս. Ստեփանոսի վանքը գտնվում է Հավուց թառի վանքից ավելի քան

7 կիլոմետր դեպի արևելք, ելլիցա նախկին գյուղին մոտիկ, Վեդու շրջանում։

Թե ե՞րբ է հիմնադրվել այդ հոչականուն մենաստանը, ստույգ հայտնի չէ։ «Ճօնապատճառ» վերտառությունը կրող մի ձեռագրի հիշատակարանում, որը վերագրվում է ժԴ գարին, ասվում է. «Եինեցաւ սուրբ և հոչակատր բազմաժողով մեծ մենարէ ան յն Հայոց թառ ի սուրբ թարգմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հայոց և ի Մեսրոփ վարդապետէ Դօ և ի Ի ամի ծննդեանն Քրիստոսի, ի թագաւորութեան Հայոց Կումշաավ(հ)ոյ, ի թագաւորութեան Հոռոմոց Արկադեոսի և Ոներիոսի, և ի պատրիարքութեան Յոհաննու Ուկերեարանի»։

Ինչպես հայտնի է, Հայաստանի մի շարք վանքերի, զրանց թվում նաև Հավուց թառի և դրան մոտիկ գտնվող Այրիվանք—Գեղադավանքի և Աղջոց Ս. Ստեփանոսի վանքերի հիմնադրումը ավանդաբար վերագրվում է Ս. Գրիգոր Լուսավորչին և Ս. Սահակ Պարթևին։ Վերը մեջ բերված հիշատակարանն էլ, ամենայն հավանականությամբ, պետք է գրված լինի այդ ավանդությունների հիմասիրաց։ Պետք է նշել նաև, որ Հավուց թառի վանքի սահմաններում կատարված հնագիտական հետազոտությունները շնորհական աշխատավայրի այնպիսի մնացորդներ, որոնք հաստատեին այդ ավանդության պատմական հիմքերը։

1 Լ. Ս. Խաչիկան, «ԺԴ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., էջ 351։

Մխիթար Ալյոհվանցու վկայությամբ Հայոց թառի վանքը կառուցում է Քեղո Գեղորգ իշխանը. «Ենի և Հայոց թառն ի Գէռգեալ իշխանն Քեղոյց², դնելով դրա կառուցումը 1001—1011 թվականների ժամանակաշրջանում:

Վանքում եղած մի արձանագրության համաձայն, որը մեջ ենք բերում ստորև, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին՝ 1013 թվականին այստեղ կառուցում է մի կրկին եկեղեցի՝ ամենափրկիչ մասունքը պահելու համար. «Թուին նկի. ի թագաւորութեանն Գագկայ և ի հայրապետութեանն Տեառն Սարգսի ևս Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, նաև ի տէրանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն և ամենայն կազմութեամբ որ ի սմա քառադէմբ շորս անկեամբ յաջամբ և ահեկամբ ի դիմանց և ի թիկանց. Կ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով և աշխարհակալ թագաւորի թղթովն և կայսերական կնքովն հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամական: Եւ ի նաւակատիս տաճարիս զոր շինեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցույ», որ է Հայոց թառ, հանգստարան և աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Ցիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Ցովհաննու աւետարանշին, հրամանաւ Մօր Տեառն մերոյ Սուրբ Աստուածածնին. և նորոգեալ հաստատեցաք վերստին զուրբ ովատս վերջինս քան զառաջինն. աստ եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցոյ Գրիգոր Վահրամ պատանին»:

«Վերոյ գրեալ արձանս գրեալ կայր ի վերայ Սուրբ Ամենափրկիշին արքայաշէն դարպասին, դուրս կոյս հարաւակողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանէն խախտեալ կայր: ՌՃՀ (1721) թուին Աստուածատուր կաթողիկոսն կամեցաւ վերըստին նորոգել. ի քակելն՝ ևս մեղաւոր ծառայ սուրբ տանս՝ Թուրդ Ցովհաննէս, իմ ձեռամբս վեր առի զարձանս զայն և գրեցի աստո»³:

Վերոդիշյալ արձանագրությունը տեղում պինակու, ինչպես և նրա գտնվելու տեղի և արտագրելու հանգամանքների մասին՝ վանքի միաբան Քուրդ Հովհաննեսի տեղեկությունները մեջ ենք բերում Ալիշանից:

Արձանագրության մեջ նշված «վերստին շինեցի զեկեղեցիս» և «զոր շինեցաք զհայ-

² «Մխիթարայ Ալյոհվաննեցոյ Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860 թ., էջ 57.

³ «Ալյոհատ, բնաշխարհ Հայաստանեալց», տեղագրեալ Հ. Ալիշան, Վենետիկ, 1890 թ., էջ 354—355.

րենիս մեր սուրբ եկեղեցույ», որ է Հայոց թառով գարձվածքները որոշակի կերպով ցույց են տալիս, որ մինչև Գրիգոր Մագիստրոսի կողմից հիշյալ եկեղեցու կառուցումը, արդեն գոյություն ունեն վանքը, ինչպես այդ մասէն վկայում է Մխիթար Ալյոհվաննեցին: Թագի այդ, Գրիգոր Մագիստրոսը այդ եկեղեցին շինում է որպես «հանգստարան և աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Ցիսուսի Քրիստոսի որ ի փայտին: Դրանից էլ հետևում է, որ հենց այդ ժամանակներում պետք է Ամենափրկիչը մասունքը Դարույնի Ամենափրկիչը և կեղեցուց բերված լինի Հավուց թառի վանքը, որից հետո սկսել է կոչվել նաև Ամենափրկիչը Հավուց թառի վանք:

Հաշորդ տեղեկությունը Հավուց թառի մասին մենք գտնում ենք վանքի պարսպի արեվելյան պատի մեջ, մուտքից վերև դրված մի խաչքարի վրա, հետեւլու ձևով. «Յիշէք Քրիստոս զշարան զորդի Մըրատա զծառա... և ողորմեա ամէն-ամէն: Թվ. : Շէ, էր» (1081):

Վարդան Բարձրբերդցի պատմիլը տեղեկացնում է, որ «պատանին Ցովսէփ... որ էր պարսիկ ազգա ի գեղշէն, որ նորաշէն կոչի ի սահմանս Դունայ», 1168 թվականին նահատակելով Դվինում, ոմն Սարգսի նրա դին բերում և թաղում է Հավուց թառի վանքում»:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Զաքար սպասալարի կողմից 1205 թվականին կոչի քաղաքում Հրավիրված ժողովին, ի թիվս այլ երևելի հոգմորականների, մասնակցում էր նաև Հավուց թառի առաջնորդ Եղիսա եպիսկոպոս:

Այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն ԺԹ-ԾԳ դարերում, ինչպես այդ ցույց են տալիս հնագիտական ուսումնասիրությունները, պետք է կառուցված լինեն վանքի գավիթը, Ս. Կարապետի անվան եկեղեցին, դամբարան-զանգակատունը, միաբանության բնակելի շենքերի մի մասը, որոնց կառուցման մասին բացակայում են մատենագրական և վիմագրական տեղեկություններինչպես և բարձունքի վրա եղած խմբում գտնվող խաչարձանը՝ 1211 թվականին, Ս. Կարապետ կոչվող մատու-դամբարանը՝ 1213 թվականին, մի տապանագրը՝ 1246 թվականին՝ համաձայն նրանց վրա փորագրված արձանագրությունների, որոնց ավելի հանգամանորեն կանդրադառնանք համապատասխան տեղում:

ԺԳ դարի վերաբերյալ Հավուց թառի մա-

⁴ «Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 168:

⁵ «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի հանգամանորեն կանդրադառնանք համապատասխան տեղում:

սին առանձին տեղեկություններ են պահպանվել նաև ձեռագրերի հիշատակարաններում. մեջ էնք բերում դրանցից անհրաժեշտ տեղերը կամ նշում աղբյուրները՝ ժամանելիագրական կարգով.

«Աստուած ողորմի կազմողի սորայ Գերգայ և իւր ծնողաց, ամէն»: Թվականութիւնս Հայոց Զի՞ (1294): Զապատական քահանէ զԱմենաւագ որ հալալ վաստակոց իւրոց ըստացաւ սայ յիշատակ իւր և ծնողաց, որք կարդէք ասացէք Աստուած ողորմայ իւր և ծնողի իւրոյ, ամէն...»:

Ես անարժան և մեղուցեալ սուտանում կուլցեալ Ամենաւագ հալալ արդեանց իմոց զնէց յի զուրբ զԱւետարանս ի գաւաւ[ո]չն Գառնու ի վանացն Հաւու թառ...»:

«Ի թւականութեանս Հայոց Զի՞ (1297), ի թագաւորութեանն բարեպաշտ և աստուածասէր թագաւորին Հայոց Տեթմոյ՝ մեծի և յաղթողի. և ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի. և յաշխարհակալութեան Ղազան ղանին, և ի մերոյս նահանկի տերութեան Խոշաբին և Զաքարիայի որդոյ նորին և ի տերութեան մերոյ սուրբ ուխտիս Հայոց թառայ պարոն Բիսութային և Խոյանձալիին... ի գառն և յանրարի ժամանակի աւարտեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Գրիգորոյ նուաստ և փցուն գրչի, յոզնամեղ և փանաքի եղբար. ի սուրբ և ի հոչակաւոր և յաստուածաբնակ ուխտիս Հայոց թառ յորշորշելոյ՝ ընդ հովանեաւ Կաթողիկէ եկեղեցոյ Սուրբ Սիոնի և աստուածքնկալ Սուրբ Ամենափրկչիս...»:

Վասն որոյ ես մեղաւոր Գրիգոր գրիշ աղաշեմ յիշել ի Քրիստոս և զիս և զծնաւզսն իմ: զԱրքահամ ուսուցիչն իմ և զՄխիթարիշ Հայր իմ...»:

....Գրեցաւ աղաւթամատոյցս այս ձեռամբ [Գր] յիգորոյ: ի թիվ: Զի՞: (1298). ի մեծ մհնստանիս Հայոց թառ, ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչիս...»⁶:

Ստեփանոս Օրբելյան պատմիշը, խոսելով ժողովարի վերջերին Հայ Եկեղեցու ներսում ծագած դավանաբանական վեճերի մասին, տեղեկացնում է, որ Հայոց Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի դեմ 1296 թվականին գրած թուղթն ստորագրել է նաև Հավուց թառի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը⁷:

ԺՌ դարին վերաբերող Հավուց թառի վանքի մասին ոչ մի հիշատակություն չի պահպանվել:

6 Գարեգին արքավիսկոպոս Հովսեփյանց, «Հավուց թառի Ամենափրկչիս և նոյնանուն հովանձաներ հայ արքանուն մեջ», Երևանագեմ, 1937 թ., էջ 90—91:

7 «Պատմութիւն նահանդին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքավիսկոպոսի Սիմեաց», Թիֆլիս, 1910 թ., էջ 461:

Հավուց թառի մասին նկատելի շափով շատ են ժեղարեն եկող տեղեկությունները, մասնավանդ ձեռագրերի հիշատակարաններում: Այդ իսկ տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում 1423 թվականին Գեղարդավանքում գրված մի ձեռագրի Մաշտոցի հիշատակարանում պարունակվող տեղեկությունները: Մեջ ենք բերում այդ հիշատակարանը օրորչ կրծատումներով.

«...Աւրհնութեանց արցնաբեր գիրքս այս Մաշտոց մեք նուաստ և անպիտանք Սարգիս քահանա և Դավիթ ստացանք... յիշատակ ծնողաց մերոց և մեզ: Սարգիս ծերունի և պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւուց թառ զիւղթն պատրաստեաց, և ես՝ անյիշելի Դավիթ գրեցի գգիրքս...: Եւ ընծայեցաք զսա ի սուրբ ուխտն Հաւուց թառ, ի դուն Սուրբ Կաթողիկէին, և Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Յարութեան, և ամենազօր Սուրբ Ամենափրկչին և այլ սրբոց: Եւ եղեգորդութիւն սորա ի նախադրական սուրբ ուխտն՝ ի մեծ Այրիվանս, և կատարումն գրոց՝ յաստուածապահ գիւղաքաղաքս Գառնի, առ դրան սուրբ և հրաշափառ Կաթողիկէիս և այլ եկեղեցեացս, ի թվին ՊՀՅ (1423), ի հայրապետութեան Տեառն Պաւոսի Գառնիցոյ՝ սրբազն կաթողիկոսի, և ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Հաւուց թառ՝ հեղանոգի և սրբասէր և մաքրամիտ և մեծազգի արհապատի եպիսկոպոսի Տէր Զաքարիա:... Յիշեցէք ի սուրբ պատրաստ զՍարգիսիս, և զծնողսն նորա զՄեհնանն և զԱստղիկն, և զիս զրազմամեղ սուտանուն քահանայ զԴավիթ գրիշ, և զծնողսն իմ...»⁸:

Սանահնի վանքում 1424 թվականին գրած մի այլ ձեռագրի Ավետարանի հիշատակարանում նույնպես տեղեկություններ են պարունակվում Հավուց թառի մասին:

«...Սպիտակացեալ ալեաւը և լուսափայլեալ հոգով, ի տես համբակաց մաքուր կուսութեամբ սրբասէր քահանայս Մատթէոս, յԱյրարատեան գաւառէս, սնընդեամբ ի բարձրադիտակ յականաւոր և ի գերահուշակ սուրբ ուխտէն Հայոց թառոյ, առ որ մեծաւ փափագմամբ ցանկացող եղեալ այսմ աստուածաշունչ կտակի և Աւետարանի...»:

Արդ, եղեկ զրաւ գրչութեան սորա ի շրջագայութեան Հայկազեան տումարի ՊՀՅ (1424), յամի որում եղեկ սաստիկ մահաւաժամ, առ ի խրատ մեղաց մերոց: ի թագաւորութեանն Վրաց Ալէքսանդրեա, և ի բռնակալութեան տանս Հայոց թուրքման Սրանդարի, և մեզ թագաւորելոյ՝ Քրիստոսի

8 Ա. Խաչիկյան, «Ժն դարի հայերին ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401—1450 թ. թ.), Երևան, 1955 թ., էջ 303—304:

Աստուծոյ, ի հայրապետութեան Տեառն Պաւոսի: Յաստուածապահ գաւառիս կաւոյ, ի յերկնահանդէս, մեծարգոյ և ի գերահոչակ ուխտի Սանահին վերածայնելոյ...⁹

Թովմա Մեծոփեցին տեղեկացնում է, որ ինքը և իր ընկերակից աշակերտները, իրենց ուսուցիչ՝ մեծանուն վարդապետ Հովհաննես Մեծոփեցու հետ միասին այցելել են Հավուց թառի վանքը¹⁰: Տեղում պահպանված մի արձանագրությունից իմացվում է, որ Հովհաննես Մեծոփեցու՝ իր աշակերտների հետ Հավուց թառ այցելությունը տեղի է ունեցել 1407 թվականին: Այնուհետև Թովմա Մեծոփեցին տեղեկացնում է, որ երբ վախճանվում է Հովհաննես Մեծոփեցին, նրա աճյունը բերում և ամփոփում են Հավուց թառի վանքում, որ հանգստարանի նոր վկային Ցովսէփայ և Եղիա վարդապետին ի մեծահանդէս ուխտն Հայոց թառաւ¹¹:

Նույն Մեծոփեցու վկայությամբ, 1441 թվականին Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ընտրությանը մասնակցում էր նաև Հավուց թառի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը: Իսկ դրանից երկու տարի հետո՝ 1443 թվականին, նույն Զաքարիա եպիսկոպոսը ակտիվ մասնակցություն է ունենում Կիրակոս կաթողիկոսին Հայրապետական Աթոռոց զրկելու և Գրիգոր Մակվեցուն կաթողիկոս ընտրելու գործում¹²:

Հավուց թառի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1458 թվականին՝ մի ձեռագիր շարականի հետեւալ հիշատակարանում:

«...Գրեցաւ ի Զէ. (1458), ի հայրապետութեան Տեառն Գրիգորի, և սուրբ և ի գերահըռչակ ուխտու, որ կոչի Հայոց թառ, ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչի, և երկնանման սուրբ խորանաց, և հրաշափառ սուրբ Կաթողիկէիս, և լուսոյ Մաւր Սուրբ Աստուածածնի, և սուրբ Աջոյն Թաղէոսի առափելով և Սուրբ Յակոբ Նշանին, ձեռամբ փծուն գրչի Ստեփանոս կրամատորի, ի խնդրոյ և յարդեանց Ցովհաննէս կրօնաւորի»¹³:

Հավուց թառի մասին առանձնապես հետաքրքիր ու արժեքավոր է 1464 թվականին

⁹ Լ. Ս. Խաչիկյան, «Հիշված աշխատությունը, էջ 315—316:

¹⁰ «Պատմութիւն Հանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցոյց, Փարիզ, 1860 թ., էջ 53:

11 Նույն տեղում, էջ 61:

¹² «Թովմա Մեծոփեցու հիշատակարանը», Թիֆլիս, 1892 թ., էջ 52, 78:

¹³ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկորդ (1451—1480), Երևան, 1958 թ., էջ 99:

Հավուց թառում գրված ձաշոցի հիշատակարանը, որը մանրամասն տեղեկություններ է պարունակում ժամանակի քաղաքական դրության և վանքի ընդհանուր վիճակի մասին:

«... Արդ, այսքան և այսու ամենայնիւ լցեալ ի բարի յարմատոյ յառաջ եկեալ սուրբ վարդապետն Դանիէլ եկն ի սուրբ ուխտու Հայոց թառ և միաբան եղի Սուրբ Ամենափրկչի շիս և այլ սրբութեանց: Եւ մեծաւ յուառյ և փափաքմամբ սիրով ձեռն էարկ զսուրը և բրկնանման և փառաւոր Կաթուղիկէ եկեղեցիս. և վերստին կրկին վարդարեաց և սալից և նորոգեաց...»:

...Արդ, և ես՝ անարժան ու սուտանուն աբեղայ Ստեփաննոս, որ ի վաղ ժամանակաց կայր բնական սէր և եղբայրութիւն, որ և մի վարպետի աշակերտեալ էինք ի տղայութենէ հասակից և ի պնակիտս, և սա խնդրեաց զսուրը տառս և զգանձս աստուածային. և ես՝ անարժանս՝ հարկեցայ և գրեցի զՍուրբ գիրքը՝ զգանձս աստուածային վասն սիրոյ նորա տկար անձամբ իմով ի դառն և ի գժուար ժամանակի, որ ի մեղացն եկն ի վերայ մեր ի յանաւրինաց և յալլակրամնից և ի շար բըռնաւորաց. ի խանութեան Զահանշահին՝ որդոյ Ուսուփին, որ մտաւ ի Խորսան, և է (7) տարի զաշխարհս սահան և երերուն պահեաց՝ ի հարկապահանջութիւն, ի տառապանս և ի շարշարանս, այնպէս և հայր զորդիս ուրանային. ի հայրապետութեան Տեառն Գրիգորի, որ նորոգեաց զՍուրբ էջմիածինն... ի թվիս Հայոց Ձօդ (1464), ի սուրբ յԱթոռու Ամենափրկչիս, ի սուրբ ուխտու Հայոց թառ: Գրեցաւ սուրբ տառս ձեռամբ Ստեփաննոս անարժան աբեղայի, ի սէր Դանիէլ վարդապետի: Արդ, որք աւգուիք ի մանէ կարդալով կամ աւրինակելով, լիշեսչիք զստացող սուրայ զվարդապետն... և զմիարանքս Սուրբ Ամենափրկչիս՝ զՏէր Սարգիս փակակաւ, զՏէր Յակոբ, զՏէր Մաթէոս, և զսիրասնունդ որդիքս մեր և հոգելից աշակերտութիւն կուակարաւն սուրբ քահանայքս, զկազմող սորա զՏէր Յովլ սէփի և զՏէր Յովհաննէս...»¹⁴:

Թուրք-թաթարական տիրապետության դաժան ժամանակներում, երբ ողջ ժողովուրդը և եկեղեցին տնքում էին ծանր հարկերի տակ, ուր հայրն անգամ ուրանում էր իր հարազատ զավակներին, այսպիսի անսաելի դառն պայմաններում Հավուց թառի վանքը ոչ միայն պահպանելիս է Եղել իր գոյությունը, այլև շարունակել է իր մշակութային-կրթական հանրօգուտ աշխատանքը:

Հավուց թառի մասին այնուհետև հիշատակվում է 1465—1471 թվականներին Եղ-

14 Նույն տեղում, էջ 214:

վարդի և Հավուց թառի վանքերում գրված Ավետարանների հիշատակարաններում¹⁵:

Հավուց թառի վանքը նկատելի շափով ուժեղանում է ԺԵ դարի վերջին քառորդում, ահա թե ինչ է հազորդում այդ մասին Սիմեոն կաթողիկոս Երևանցին.

«Արդ, վանքու այս ի յերկրոցս ունի զթեմ և զվիճակ յատուկ, զերևան քաղաքն, զկոնդ, զնորագեօղ, զԵնզաւիթ, զՁրվէժ, զգիւղաքաղաքն Գառնի, զԿոխոդ, և զՃայոց թառ: Ունի և զմլբատու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասնէն մէկ, որք են այսորիկ...»:

Այնուհետև Սիմեոն կաթողիկոսը թվում է ըստ անունների բոլոր զուլերը, թվով ինը հատ, որոնք վանքի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը գնել է 5000 դինարի ԶԼԶ (1487) թվականին: Ապա թվում է բազմաթիվ հողաբաժիններ, որոնք նույնպես կազմելիս են եղել վանքի սեփականությունը¹⁶:

Զաքարիա եպիսկոպոսի մահից հետո, սեղծված քաղաքական աննպաստ պայմանների հետեւանքով, Հավուց թառի վանքը խիստ թուլանում է. նրա կալվածների մեծ մասը հափշտակում են թաթար խանները, զյուղացիությունը հրաժարվում է տասանորդ վճարելուց: Որոշ զյուղեր ամայացել ու անմարդաբեր էին դարձել: Զաքարիային հաջորդող Համազասպ եպիսկոպոսին հաջողվում է մասամբ վերականգնել նախկին կալվածները, սակայն վանքն իր առաջվան հզորությանն այլևս չի հասնում¹⁷:

ԺԴ դարում Հավուց թառի մասին եղած տեղեկությունները շատ սահմանափակ են: Գրիգոր Դարանաղեցին տեղեկացնում է, որ Հայոց Բարսեղ կաթողիկոսի դեմ դարի կեսերին աստամբած եպիսկոպոսների թվումն էր և Հավուց թառի եպիսկոպոս՝ առանց անունը հիշատակելու.

«Նաև մեծամեծ հոչակաւոր վանորէից հպիսկոպուքն եղեն ապստամբք ի կաթողիկոսէն Բարսեղ և եղին հակառակ կաթողիկոսք, որպէս Յոհաննավանացն և Կեշառուն և Հազարձան և Հաւուց թառին...»¹⁸:

Այդ ժամանակաշրջանի վերաբերյալ Հավուց թառի մասին առանձին տեղեկություններ պարունակվում են նաև որոշ ձեռագրերի

¹⁵ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Երկրորդ (1451—1480), Երևան, 1958 թ., էջ 232, 314, 315.

¹⁶ Սիմեօն կարապիկոս Երևանցի, «Զամբոր, Վաղարշապատ, 1873 թ., էջ 277—280:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ «Ժամանակագրության Գրիգոր վարդապետի Կամոխցայ կամ Դարանաղեցյա», Երևանագետ, 1915 թ., էջ 303:

հիշատակարաններում, որոնցից մեջ ենք բերում անհրաժեշտ մասերը.

«Արդ, վանքու այս ի յերկրոցս ունի զթեմ և զվիճակ յատուկ, զերևան քաղաքն, զկոնդ, զնորագեօղ, զԵնզաւիթ, զՁրվէժ, զգիւղաքաղաքն Գառնի, զԿոխոդ, և զՃայոց թառ: Ունի և զմլբատու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասնէն մէկ, որք են այսորիկ...»:

Արդ, գրեցա ի հայրապետութեան ազգիս Հայոց Տեառն Գրիգորի և ի յարհի եպիսկոպոսութեան մեծ նահանգիս Արարատեան Տէր Ստեփանոսին...»¹⁹:

Այնուհետև Առաքել վարդապետ Գավրիիֆեցին հիշում է Հավուց թառի Մանվել եպիսկոպոսի անունը, որը գերի է տարվում Աստվածատուր եպիսկոպոսի հետ Սպահան, պարսից Շահարաս առաջին թագավորի մոտ:

Ապա Գավրիիֆեցին հիշատակում է Հավուց թառի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոսին, որը մասնակից էր Մահակ կաթողիկոսին գոած հրավիր-նամակին, որն այդ ժամանակ դշոնքում էր Պարսկաստանի Խոյ քաղաքու՞²¹:

Այդ նույն Մահակ կաթողիկոսի հայրապետության ժամանակ (1624—1629) Դավիթիցին հիշում է Հավուց թառի և Երևան քաղաքական գոած հրավիր-նամակին, որն այդ ժամանակ դշոնքում էր Պարսկաստանի Խոյ քաղաքու՞²²:

Համազասպ եպիսկոպոսից հետո Հավուց թառի առաջնորդ է հիշվում Մկրտիչ եպիսկոպոսը:

Նույն դարի կեսերին, Փիլիպոս կաթողիկոսի՝ աթոռակալության ժամանակ (1633—1656), Հավուց թառի առաջնորդ է հիշվում Սիմեոն վարդապետ Զուղայեցին, որը ժամանակի նշանավոր փիլիսոփաներից և ուսույալ անձնավորություններից մեկն էր: Առաքել Դավրիիֆեցու վկայությամբ, Երևան քաղաքի բնակիչները դիմում են Փիլիպոս կաթողիկոսին, խնդրելով նրան, որ իրենց առաջնորդ նշանակի հիշյալ Սիմեոն վարդապետին²³:

Սիմեոն վարդապետ Զուղայեցուց հետո Հավուց թառի առաջնորդներ են հիշատակ-

¹⁹ Գարեգին արքապիկոպոս Հովսեփյանց, Նշված աշխատությունը, էջ 93:

²⁰ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւիթիցայ», Վաղարշապատ, 1884 թ., էջ 10:

²¹ Նույն տեղում, էջ 179:

²² Նույն տեղում, էջ 228:

²³ Նույն տեղում, էջ 313:

վում Հովհաննես եպիսկոպոսը 1658 թվականին, Մատթեոս Զուղայեցի վարդապետը 1671 թվականին, ապա Մարկոս վարդապետը մինչև Ժէ դարի վերջերը:

1679 թվականի մեծ երկրաշարժից քանդվում են վանքի համարյա բոլոր կառուցածքները: Չնայած դրան, վանքը շարունակում է իր գոյությունը՝ որպես մենաստան:

Աստվածատուր կաթողիկոսը, ցանկանալով վերակառուցել վանքը, 1722 թվականին ձեռնամուկն է լինում այնտեղ մի նոր եկեղեցու կառուցմանը, սակայն հյուսիսային լեռների արշավանքների պատճառով մնում է անավարտ: Բայց և այնպես վանքը որևէ կերպ դեռ շարունակում է իր գոյությունը:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին, թվելով արքունի վավերագրերով վանքերին պատկանող կալվածները, Հավուց թառի մասին հիշատակում՝ է, որ պարսից շահ Սուլեյմանի և հայոց Եղիազար կաթողիկոսի ժամանակով, տաճկաց ՌՃՂ թվականին, «Ղզլվանք որ է Ամենափրկիչն՝ [ունէր] Ա այգի յԵրևան և Ա շրադաց ի Գառնի»:

Խսկ շահ սուլթան Հուսեինի թագավորության և հայոց Աստվածատուր կաթողիկոսի հայրապետության ժամանակ՝ տաճկաց ՌՃՂ և Հայոց ՌՃԿԶ (1717) թվականներին, «Սրբոյ Ամենափրկիչ վանացն՝ Ա այգի ի Շնգափիթ, և Ա այգի ի նորագեղ, և Ա այգի ի Պղտիկ գեօղն, և Ա շրադաց ի Գառնի»²⁴:

1679 թվականի մեծ երկրաշարժից հետո, Հավուց թառի առաջնորդներ են Հիշատակվում Ստեփանոս վարդապետը 1696 թվականին, Մաղաքիա վարդապետը 1708—1726 թվականներին, որի առաջնորդության ժամանակ Աստվածատուր կաթողիկոսը ձեռնարկեց վանքի վերակառուցմանը, Հովհաննես վարդապետը 1745 թվականին, Ազգարիա վարդապետը 1749 թվականին:

Այդ Մաղաքիա, Հովհաննես և Ազգարիա առաջնորդները, ինչպես տեղեկացնում է Սիմեոն կաթողիկոս Երևանցին, վանքի համար Երևան քաղաքում գնում են այգիներ և առանձնատներ իրենց պարտեզներով: Խսկ Երևանի բնակիչ ոմն Մատթեոս, անզավակության պատճառով քաղաքում ունեցած իր այգին 1747 թվականին նվիրում է Հավուց թառի վանքին²⁵:

Արքահամ կաթողիկոս Կրետացին պատմում է, որ ինքը Հայաստանի հեռավոր վայրերը ուխտի գնալու առնչությամբ (1734—1735 թվականների ժամանակաշրջանում)

այցելում է նաև Հավուց թառի վանքը և երկու գիշեր մնում այստեղ²⁶:

Ժէ դարի երկրորդ կեսի սկիզբներին, հյուսաւային լեռնցիների կրկնվող արշավանքների պատճառով, Հավուց թառի վանքը լքվում է և ամայանում:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին 1763 թվականի համար գրում էր, որ «ամայի էր վանքս այս»: Անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիեն 1813 թվականին այցելելով Հավուց թառ, որը ինքն էլ տեղական այլազգի բնակիչների ձևով անվանել է Կըզլ-կալա (կարմիր բերդ): Գտել է այն ամայի վիճակով²⁷:

Գեորգ Դ կաթողիկոսը 1868 թվականին հատուկ կոնդակով Գեղարդավանքի վանահայր Սիքայել վարդապետին միաժամանակ նշանակում է Հավուց թառի վանահայր, հանձնարարելով նրան վերակառուցել և վերականգնել վանքը: Սակայն Վեհափառի այդ կոնդակը մնում է անիրազործելի²⁸:

Հավուց թառի վանքը Արևելյան Հայաստանի նշանավոր կրոնական կենտրոններից մեկն է, նա եղել է եպիսկոպոսանիստ վայր, ունեցել է իր հատուկ թեմը, որի կազմի մեջ մտել է նաև Երևան քաղաքը, ուստի որպես կանոն Հավուց թառի առաջնորդը միաժամանակ հանդիսացել է Երևան քաղաքի առաջնորդը և ներգործուն դեր է խաղացել ներկեղեցական կյանքում:

Մատենագրական աղբյուրները պրադրագիտակ, ականատոր և գերաճուշակ սուոր ուխտա, «Հովհակաւոր, բազմաժողով մեծ մենաստան», «Հովհակաւոր, աստուածաբրնակ ուխտա, «Երկնահանգէտ և սուոր ուխտա», «Հովհակաւոր, ամեծ մենաստան» և այլ մեծագով անուններով են կոչում այն: Խսկ Կիրակոս Գանձակեցի պատմիլը այն դասում է Արևելյան Հայաստանի գիւտակոր վանքերի շարքը, ասելով. «... Եւ գլխաւոր վանորայքն Սանահինն, և Գետիկ, և Հաւարծին, և Կեշառուս, և Հաւուց թառ...»²⁹:

Հավուց թառի վանքը նշանավոր է եղել նաև իր հատուկ դպրոցով: Ժէ դարի նշանավոր եկեղեցական գործիչ և հայտնի գրիչ Մանվել Բջնիցին, Հավուց թառի ամենահիմնական պատճառով վանքերի շարքը, ասելով. «... Եւ գլխաւոր վանորայքն Սանահինն, և Գետիկ, և Հաւարծին, և Կեշառուս, և Հաւուց թառ...»²⁹:

26 «Արքահամ կաթողիկոսի Կրետացայ Պատմութիմ անցից իրոց և նադր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870 թ., էջ 6:

27 Հ. Հակոբյան, «Ուշկորություններ, Զ. Ճանապարհորդությունների թագավորից Երևան» գաղաքական պատճենների մասնակին նվիրած իր ընդարձակ գանձում վանքի մասին գրում:

28 «Ամենափրկիլ մենաստան ի Հայոց թառ», «Արքահամ», 1871 թ., № 8, էջ 331:

29 Կիրակոս Գանձակեցի, էջ 295:

24 «Ճամբռ», էջ 140—141:

25 Նույն տեղում, էջ 279:

«Յընծա հրաշարան,
Ով համալսարան,
Ուխտ հոչակ անուան,
Սուրբը մենաստան,
Հայու թառ անուան,
Թառ թարգմանութեան»:

Բազմաթիվ ձեռագրեր գրվել և արտագրվել են Հավուց թառում, կամ գրվել ուրիշ տեղ, առայց նվիրվել են այդ վանքին: Զեռագրերի ջիշտատակարաններից պարզվում է, որ մեծ թիվ են կազմել այստեղ գրիչներն ու աշակերտները: Հատկապես նշանավոր են եղել գրիչներ և ուսուցիչներ Դավիթ քահանան, Մխիթար ուսուցիչը, Գրիգորը, Ստեփանոս Կրոնավորը, Ստեփանոս արեղան, Հովսեփ և Հովհաննես կուսակրոն քահանաները, Եղիա Ջյուս Գրիգորը, Դանիել վարդապետը, Քակալավ Հովհաննես քահանան, Ամյուս Հովսեփը, Վարդը, Պողոսը, Սիմեոն Վիկիլիսոփա վարդապետը և շատ ուրիշներ: Դպրոցն ունեցել է նույնիսկ իր թուղթ պատրաստղները, գիրք կազմողներն ու նկարապարդողները: Այստեղ ուսումնասիրվել են այլ միայն կրոնա-բարոյական և աստվածաբանական գիտություններ, այլև բնագիտություն, փիլիսոփայություն, քերականություն, երգ-երաժշտություն, նկարչություն և այլ առողջապահություն:

Երգ-երաժշտության ասպարեզում մեծ հոչակ է վայելել վանքի առաջնորդ Եղիա եպիսկոպոսը, որի մասին Կիրակոս Գանձակեցին հետեւյալն է գրում.


«Եղիայ ի Հաւուց թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց որպէս թէ ամեննցունց ընդ մի բերան հնչել, եթէ բարձր և թէ ցած, և ոչ հարստահարել ընկեր զլնկեր»^{30:}

Առանձնապես հոչակված է եղել Սիմեոն Զուղայեցի վարդապետը որպես փիլիսոփա, բնագիտ, բննադատ, քերականագիտ, հոետոր և թարգմանիչ: Դրա մասին շատ գովեստով է խոսում Առաքել վարդապետ Դավիթիցիցին.

«... Արդ՝ նոյն Սուրբ Հոգին պառէւհաց նմա բան վճիտ և գերապանծ և շնորհալի՛ ի քարոզութիւնս, ի հակածառութիւնս, ի մեկնութիւնս Աստուածաշունչ Գրոց, կամ արտաքին գրոց, ի բնական քննութիւն, և ի փիլիսոփայական արուեստ, անհամեմատ և գերի վերոյ եղեկ քան զամենայն վարդապետս ժամանակիս այսր, որ ամեններեան խոնարհեալ առ նա ուսանէին ի նմանէ դասիւ և այլ կերպիւ...»^{31:}

³⁰ Կիրակոս Գանձակեցի, լ. 2 162:

³¹ Առաքել Դավիթիցի, լ. 309—314:
(Եարունակելի)



Մ. Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

ԶԵՅԹՈՒՆ ԵՎ ԻՐ ՇՐՋԱԿԱՅՔԸ
(Պատմա-աշխարհագրական տեղեկություններ)

Կիլիկիո Հայոց թագավորության անկումնն
(1375) հետո, երկրի անմատչելի վայրերու մեջ կարգ մը կիսանկախ հայ գաղութներ իրենց գոյությունը ժամանակ մը ևս կարողացան պահպանել: Ժե դարու սկզբին հիմնը վեցան նոր բնակավայրեր, ինչպես Հաջըն, Զեյթուն և Կիլիկյան այլ հայաբնակ նոր գյուղեր և գյուղաքաղաքներ:

Զեյթուն գյուղաքաղաքը հայերու կողմէ հիմնված է 1375—1409 թվականներուն միջև՝ Տուղատիրօղուու իշխանության շրջանին: Նախքան Ռուգինյան իշխանության կիլիկիո մեջ հաստատվիլը, Զեյթունի տեղը բյուզանդական բերդ-ավան մը կգտնվեր հունական բնակչությամբ և քանի մը հունական մատուռներով: Հույն բնակչությունը Զեյթունը Հովիպուլիս կանվաներ: Հայերու կողմէ Զեյթունի հիմնադրության մասին առաջին տեղեկությունները ստացված են Զեյթունի եկեղեցիներու և վանքերու մեջ գրված հունարեն ձեռագիր մատուռաններու հիշատակարաններեն, բյուզանդական բերդի հունարեն արձանագրութեաններեն և նախապես հույներուն պատկանած Ս. Աստվածածին եկեղեցիի հունարեն արձանագրություններեն: Հունական շրջանի այս հիշատակները հայերու ձեռքն անցնելով, ինամբով պահպանված են:

Գրականության մեջ շատ հաճախ Զեյթուն կամ Ուլիս տեղանուններուն կհանդիպինք: Հայոց Զեյթուն գյուղաքաղաքի հին անունը Ուլիս էր, տրված Ռուգինյան իշխանության շրջանին հայոց կողմէ: Ուլիս աղճատված ձևն է Բյուզանդական Հովիպուլիս տեղանունին:

Հրշանին, Կիլիկիային հույներու վտարվելեն հետո, հայոց ձեռքն անցած և Ուլիսիա բերդ անվանված է: Ապա Կիլիկիո հայ թագավորուներու հրովարտակներով շնովացիներ ընակեցված են Զեյթուն և շրջակայքը: Նույնիսկ Կապանի անցքեն երթենկող շնովացի վաճառականներուն կարգ մը մենաշնորհներ արված էին: Այսպիսի շահավետ կեղրոններու մեջ, ապահովության համար, շնովական փոքր գաղութներ կազմված էին:

Կիլիկիո հայոց Ուլիսիան մեծ հավանականությամբ եկրոպացիներու բերնի մեջ աղճատվելով Օլիվիա կամ ասոր մոտ լատիներեն ձիթենի կամ ձիթապտուղ նշանակող անունի մը փոխված է¹: Զեյթուն անվան առաջին անգամ 1409 թվականին Զեյթունի մեջ Սարգիս գրչի ընդօրինակած ձեռագիր մատյանի մը մեջ հեանդիպինք, ուր կըսե.

... Արդար, գրեցաւ զսուրբ տառս Մաշթոցի ի քաղաքի Զեյթուն կոչի:

Ընդ հովանես Սուրբ Աստուածածնի

և Սուրբ Սարգսի զօրավարին,

ի թվան ՊՄ (1409)²:

Կապածի, թե Զեյթունն և շրջակայքը գյուղուն ունեցող ձիթենիները հտալիային եկած շնովացիները տնկած էին:

Ափսոս, որ այժմ հայոց Զեյթունն ալ այրած, կործանած է, և հությունները, ձեռագրերը, այն ամենը, որ հայոց անցյալի հիշատակներուն հետ կապ ունեց կողման մեջ:

¹ Olinter — օլիվի (Փր.), ձիթենի:

² Առև. Ս. Խաչիկյան, «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401—1450 թ. թ.), Երևան, 1955:

Հատուկնատ զեյթունցիներ ալ սփյուռքի մեջ ցիրուցան եղած, տարածված էն: Այժմ Զեյթունը հայոց համար արծիվներու կործանած հետավոր բույն մըն է:

Նորագույն շրջանի հայոց պատմության մեջ Զեյթունի անունն ու դեպքերը հայ աղատագրական շարժման համար մեծ դեր է նշանակություն ունեցած էն: Զեյթունի հերոսամարտերու արդյունքը այն եղած է, որ զարերով հայ աղատագրական շարժման մշտավառ չահը չէ շիջած: Զեյթունցի հայու տիպարը պատկերված է իբրև բռնության, անիրավության, ճնշումի, նվասաւացման և աղատագրիման դեմ բողոքող, զեն ի ձեռին պայքարող ժողովուրդի մը փոքր հատվածի ներկայացուցիչը:

Զեյթունի վերջին ավանդը ապագա սերունդներուն փոխանցելու գործը այժմու սերունդի ուսերուն վրա ծանրացած է:

Զեյթուն գուղաքաղաքը կգտնվեր արևմբայան 36° 50' լայնության և հյուսիսային կիսագնդի 37° 16' երկարության աստիճաններու վրա, Մարաշ քաղաքին 38 կմ. դեպի հյուսիս-արևմուտք և Ձի՛ռուն գետեն 13 կմ. արևմուտք, լեռներով շրջապատված, դժվարամատչելի, թեք դիրքով վայր մը³: Տարսոս և Սև լեռներու (Ամանոսներ, Կյավուր դաղլարը կամ Սուրբ լեռներ) իրար խաչաձև այս լեռնային միջավայրը բաղմաթիվ լևոնանցքներով, գետանցքներով կարատված է: Զեյթուն գուղաքաղաքը հիմնված է Ձի՛ռուն գետի օժանդակ Շուղը (Զեյթուն-դեր) և Զոր գետակներու միացած տեղը, երկուքին միջև բարձրացող շեղ կողի մը վրա, որ հյուսիսին դեպի հարավ կիշնե և մոտավորապես ունի 300—400 մետր տարածություն⁴: Այս նեղ հողամասին վրա Զեյթունի հայերը խիտ առ խիտ կառուցած էին 1100-ի ավելի բնակարաններ և գործատեղիներ: Զեյթունի արևելյան կողմեն կրաքրանան Պերզնկա, Աղդաղ լեռները և Սաղիրի բլուրները: Հյուսիսին՝ Պերիտ բարձրաբերձ լեռան⁵ հարավը գտնվող

³ Հեռավորության չափերը կմ. ըլլալով, ուղիղ թոփ, թափանակած էն:

⁴ Զեյթունի կործանումն է 30 ըունիս 1921 թվականի վիշտական պարզումն հնատ, Զեյթուն գյուղաքաղաքի ավելաներն 4 կմ. Հարավ: Անենոր և Շուղը զետակեներու միացած տեղի հովիար, զեյթունցիներու այգիներու տեղը նոր բնակավայր մը հիմնված է փոխան ավելակ Զեյթունի, Սյույյամակը անունու Սյույյամը եղած է 1915-ին Զեյթունի հայերու վրա հարձակող բանակի սպա, որ զնվականարված է Ս. Աստվածածին վանքի գոռան փրած պատի առաջ, վանքի պաշտպան ամբակի կրակոցի ժամանակ:

⁵ Պերիտ լեռան 3014 մետր բարձրություն ունեցող ամենաբարձր զաղաթը Զեյթունի ավելաներն դեպի

Տիքենլի-դաղ (2830 մետր) լեռը կբարձրանա: Արևմուտքեն՝ Կանկոստ լեռը, հարավ-արեմուտքեն՝ Սոլագ-դեղի լեռը: Զեյթունի հարավային կողմը կա Շուղը գետակի կազմած նեղ գետանցքը, որ Զեյթունի կարեսոր միակ մուտքը կներկայացներ: Քանից Զեյթունի վրա խուժող ուժեր այս գետանցքի վրա գարանակալ սպասող զեյթունցիներու կողմի ջախչախված էն: Զեյթունի շուրջի այս անմիջական և բնական պատնեշներն զատ, շրջակայրը կան նաև բնական պատվարներու տարբեր շարաններու: Զեյթուն գյուղաքաղաքը բնական և անմատչելի պատնեշներու շնորհիվ, երկար գարեր կարողացած էր իր կիսանկախ դիրքը պահպանել:

Զեյթուն դժվարամատուցյա ճամբաններով և արահետներով կապված էր շրջակա գյուղերուն և գյուղաքաղաքներուն: Զեյթուն, Մարաշ նահանգին մաս կազմելով, գյամալորապես Մարաշ քաղաքին հետ մշտական շփման մեջ կատնվեր: Մարաշի և Զեյթունի միջև երթևեկության ձեռնատու քանի մը ճամբաններու կային:

Թեև Զեյթունը կարեսոր մեծ առեւտրական և առգմական ճամբաններու վրա չէր գտնվեր, բայց ուներ շրջակայրի հետ երթևեկության արահետներու լայն ցանց: Այստեղ պետք է նշել, որ Զեյթունի եկամուտներն մեկն ալ Զեյթունի բազ շրբեպաններու վարած կարավաններու երթևեկութենեն մնացած շահն էր: Տավրոսներու այս լեռնային շրջաններուն մեջ առեւտրականներու ապրանքներն ու փոխադրությունը, առեւտրու մեծ շափով զեյթունցի շորեպաններու միջոցով կկատարվեր: Քարավանները զեկավարելու և պաշտպանելու գործը զեյթունցիները իրենց համար յուրատեսակ արհեստի մը վերածած էին: Զեյթունի քարավաններուն՝ Ասորիքի, Պաղեստինի, Երուսաղեմի, Կեսարիի, էլափիստանի, Սիսի, Աղանայի, Մերսինի և Կույզիսկ մինչեւ Կոստանդնուպոլս պես հեռավոր քաղաքներու մեջ հանգիպիլ կարելի էր: Զեյթունցի շորեպանները լավ անասնաբույժ ըլլալով հանդերձ, հետիւնն երկար հեռավորություններ քալելու ալ վարդ էին:

Զեյթունի լեռնային դիրքի պատճառով, գյուղատնտեսության մեջ միայն պատարուծության և անասնաբուծության ճյուղերը զարգացած էին: Արմատիքը և այլ սննդամթերքները շրջակայրի գյուղաքաղաքներն ծախու կառնեին: Զեյթունցիները կօգտագործեին մոտակա Պերիտ լեռան կարարի, արձաթի և հատկապես գագաթը գտնվող երկաթի հանքերը, որոնք լեռան հյուսիսային հուսիսի 10 կմ. հեռավորություն ունի. Պերիտ լեռան և Զեյթունի միջև գտնվող Տիքենլի-դաղ լեռը, զեյթունցի հայերը կողմէ Պերիտի հարավի կողերը կնկատվեր:

Երեսին կգտնվեին: Այս պատճառավ Զեյթունի մեջ շատ զարգացած էին դարբնությունը, Զեյթուն շինված երկաթյա առարկաներ շրջակա քաղաքներուն շուկաները կվաճառվեին: Բացի քանի մը հողատերերե, դրամատերերե և իշխաններե, զեյթունցիներու մեծամասնությունը նյութական նեղ պայմաններու մեջ կապերե: Աշխարհագրական և նյութական նեղ պայմաններու պատճառավ, մեծ թվով զեյթունցի երիտասարդները պանդիստության մեջ կգտնվեին:

Զեյթունը ուներ նաև Կոկիսոնի և Էլպիսատանի հիմնող Հյուսականացին ճամբաններ, որոնք լեռնային գվարարամատչելի վայրերե կանցնեին: Աթոլուղու անցքը կգտնվի Զեյթուննեն 28 կմ. արևմուտք՝ Թեքիր գետակի արևմտյան եզերքը⁶: Չուքուր-Հիսարեն դեպի Հյուսիս-արևմուտք երկարող Կոկիսոնի ճամբան այստեղեն կանցնի: Զեյթուննեն 8 կմ. Հյուսիս-արևելք կգտնվի Օդ գայարա կիրճը, որ Չոր գետակի վերին հոսանքներու մոտ սեպ ժայռերու կողքեն անցնող արահետ մըն է: Օդ գայարա կիրճը հազիկ կենդանիի մը անցնելու շափ լայնություն ունի: Վարը անդունդ, իսկ վերը՝ ցից քարածայուր կրարձրանան: Այս անցքեն անցնելով՝ կարելի է Պերիտ լեռան արևելյան կողերեն էրիշեք գլուզը հասնիլ և անկե ալ կանոնավոր ճամբով՝ էլպիսատան: Կա նաև ուրիշ արահետ մը, որ կանցնի Պերիտ լեռան արևմտյան կողերեն և, 1975 մետր բարձրությամբ Զավերքել կիրճն ու Քանդիլ-դաղ լեռան ստորոտեն անցնելով, էրիշեք ցյուզը կհասնի: Կոկիսոնի ճամբան կանցնի Կապան բերդի ստորոտեն: Կապանի և Կոկիսոնի միջև կան Մերյեմ շիլ, էյեր-բելի և Զինչին-բողազը⁸ կիրճերը, որոնք զինեն ի վեր առևտրական և ուղմական նպատակներով օգտագործված են երթևեկի համար:

Զեյթուն, գտնվելով երկու մեծ և կարևոր բնական ճամբաններու մեջտեղը, բավական օգուտ քաղած է առևտրական և ուղմորական գործունեություններե: Այս կարևոր ճամբաններեն առաջինը Զեյտունի գետանցքն է, ուրկե Մարաշ-Էլպիսատան ճամբու մեծ մասը Զեյտունի գետեղերքեն կընթանաւ: Այս ճամբան դեռ հիթիթական կալսորության շրջանին կօգտագործվեր: Հիթիթական կարևոր կեղուննե-

6 Հետիուն ճամբու հաշվով 7 ժամվան հեռավորություն:

7 Չուքուր-Հիսարը հայոց կանչի բերդն է, ուր Ստեփանոս Ուշեցին նահատակված էր: Մոտը կար Ս. Ստեփանոսի նշանավոր հին վանքը:

8 Կիրկիր հայոց ծանոն բերդը կիշխեր Զինչին-պողազը լեռնանցքին: Կապանի և Կոկիսոնի միջև երկարող զին ճամբան պաշտպանված էր բաղմաթիկ բերդերով:

թեն էլպիսատանը և Մարաշը այս ճամբան կմիացներ: Զեյտուն գետի եղերքեն երկարող այս ճամբուն վրա կա նշանավոր կիրճ մը, որ կիուշի Ղուկի կիրճ կամ Քըսրգ-պողազը (նեղ անցք): Այս կիրճը կգտնվի Զեյտուն գետի ձախ ափին, Զեյթունի հարավ-արևելյան կողմը, անկե մոտավորապես 16 կմ. կամ, հետիուն ճամբու հաշվով, 6 ժամ հեռու Այս կիրճը կգտնվի Ընկուռուա լեռան (2822 մ.) արևմտյան կողմի ստորոտը, Գարամանլը զյուղի մոտ: Մարաշի գաշտավայրեն, Զեյտունի վարին հոսանքներու կողմեն, դեպի հյուսիս, էլպիսատանի դաշտավայրը բարձրանալ ուղղվները անպայման Քըսրգի կիրճեն պարտավոր են անցնիլ:

Զեյթունի շրջակայրեն անցնող երկրորդ կարևոր և մեծ ճամբան Մարաշեն Կոկիսոն երկարող ուղին է, որ մինչև Կեսարիա կերպարի: Մարաշեն դեպի արևմուտք երկարող այս ճամբան, Ցունկութի՞ն նշանավոր հին կամուրջեն Զեյտուն գետը անցնելով, Զեյտունի և Արգենի գետանցքներեն անցնելեն հետո, Աղարիկենց ձորի և Ֆոնուղի գետանցքներու ճամբու կյուսիս-արևմտյան ուղղությամբ լեռներու մեջեն ընթանալով Կոկիսոն կհասնի: Այս ճամբու վրա են Արեգնի բերդի կիրճը, Ֆոնուղի կիրճը, Պենիկիրի կիրճը, որ կգտնվի Կյուրեմինի արևմուտքը, Ալի-գայարի ետերը: Ալի-գայան հայերը Մեծ-քար կանվան նեն:

Զեյթունի արևելյան կողմը, Ս. Փրկիչ վանքի արևմուտքը, կա Սանդուի կամ Սանտուի կիրճը 7 կմ. կամ հետիուն 1½ ժամ հեռու Զեյթունի հարավի ճամբան կանցնի Ալարաշը գամբան կանցքն: Զեյթունի արևելյան կողմը, Զեյտուն գետի վրա, ժթ դարու սկիզբներուն կար նեղ կամուրջ մը¹⁰, Նմանապես Ֆոնուղի գետակի վրա, Ֆոնուղի մեջ, Արեգնի գետակի վրա ալ Արեգինի մեջ (Ալարաշ) կային կամուրջները Զեյթունի մեջ Շուղը գետակի վրա կային Շուղը, Կարսի, Էրիֆեյի կամուրջները: Շուղը կամուրջը ալժմ փլած ըլլալով, կգտնվի ավերակ Զեյթունի արևմտյան եղերքը, կիսակործան բերդին քիչ մը հարավը: Զեյթունի արևելյան կողմն ալ կային կամուրջները, որոնցմե Կոտորածի կամուրջը և Պաղ-աղբյուրի կամուրջը հիշատակության արժանի են: Զեյթուն գետի վրա կա քարուկիր կա-

⁹ Ցունկութի կամուրջը կգտնվի Մարաշի հյուսիս-արևմտյան կողմը, 11 կմ. կամ հետիուն հաշվով 3 ժամ հյուսիսակության վրա:

¹⁰ Այս նեղ կամուրջը հայերը Մարաշ կամուրջ կանինին. Քըսրգ կիրճի մոտ կգտնվիր: 1819-ին Զափանօղուի մարդիկ այս կամուրջն անցնելով գերի ինկան:

մուրջ մը, որ կկոչվի Համբիդիյե: Այս կամուռ-ը կառուցված էր ոչ թե սովորական Համբիդի օժանդակությամբ, այլ Օքսյուլյան Հովհան-նես եպիսկոպոսի կողմէն և կկոչվեր Վարդա-պետին կենդերէն (վարդապետին կամուրջը): Վարդապետին կամուրջը կտոնվեր Զեյթունին Հարավ-արևելք ուղղության վրա՝ 16 կմ. կամ, ջորիով ճամբու հաշվով, 3 ժամ հեռա-վորության վրա:

Զեյթունը շրջակալիքի հետ կապող ճամբա-ներու և արահետներու մեծ մասը նեղ կիրճե-րե, գետանցքներե, կամուրջներե, գետավնե-րե և զժվարամատչելի բարձունքներե անց-նելոն պատճառով, Զեյթունի հայերը որոշ կետերու վրա նախապատրաստվելով՝ կրցած են Զեյթունի վրա հարձակելու դիտում ունե-ցող թշնամիի առաջինացքը կասեցնել և զայն պարտության մատնել:

Զեյթունի դարերով կիսանկախ վիճակին պահպանմանը նպաստած էին ոչ միայն անոր աշխարհագրական և սազմագիտական դիրքը, այլ նաև Զեյթունի իշխաններու և հոգևորա-կաններու միաբանության, խորհուրդի, հա-վատարբության գոյությունը: Զեյթունի աշ-խարհական և հոգեոր պետերը քաջությամբ և ձեռներեցությամբ պարտավոր էին ապացու-ցանել իրենց կարողությունը, որովհետև Զեյ-թունի բնակիչները անձարակ առաջնորդնե-րեն չեին ախորդեր և անոնց իշխանությունը չեին ճանչնար: Այս պատճառով Զեյթունի աշխարհական և հոգեոր պետերը նախ և ա-ռաջ փորձառու ուղղմավարների կրնտրվեին: Ընտրությունը ժողովուրդը կրներ: Զեյթունի կիսանկախ իշխանությունը ժողովրդական տեսակ մը ավատապետներե (ֆեոդալներե) կազմված էր: Թեև իշխանները ժառանգական կարով կիշխանին, բայց իշխանի ընտրությունը ժողովուրդի կողմէ ժառանգորդներեն լավագույնը ընտրելով կըլլար: Իշխողը միշտ ամենեն ճարպիկը, ուղղմավարը, խոհեմը կըլլար: Զեյթուն գյուղաքաղաքի հետ առնչու-թյուն ունեցող որոշումներու մեջ Զեյթունի առաջնորդ հագնորդականներու դերը մեծ եղած է: Վերջին դարերուն Զեյթունը ուներ իշխա-նական ընտանիքներ և կազմված էր 4 իշ-խաններու խորհուրդ, որ որոշումներ կուտար ամրող Զեյթունը հետաքրքրող հարցերու մասին: Կարենոր հարցերու լուծման համար հոգեորականներու աջակցությունն ալ պետք կըլլար:

Տավրոս լեռներու և Զորրորդ Հայքի հարա-վային այս մասերուն մեջ քրիստոնեական հավատքը ուժեղ կերպով ամրացած էր հայոց մեջ զեղ վաղ դարաշրջաններուն: Դ—Ը դա-րերուն Կոկիսոնի, Ուլիմիայի և շրջակա վայ-րերու մեջ ապրող հայոց մեջ քրիստոնեու-թյունը շատ տարածված էր:

Պատերազմներու ժամանակ իշխաններու հետ մեկտեղ վարդապետներ, եպիսկոպոս-ներ ալ պատերազմի կմասնակցեին: Այս է պատճառը, որ զեյթունցի կտրիձները իրենց պետերու նկատմամբ մեծ վստահություն և հնազանդություն ունեին: Զեյթունի ուղղմա-կան կարգապահության և ձեռներեցության համբավը տարածված էր շրջակա բնակա-վայրերու մեջ և սարսափ կազմեր շրջակա հայ գյուղերը թալանել մտադրողներուն:

Զեյթունի մեջ և շրջակայքը եղած են բաղ-մաթիվ նշանավոր վանքեր և անապատներ, որոնք հայ գրչության և մտավոր գործունեու-թյան զարգացման մեծապես նպաստած են: Այս վանքերու մեջ գրված բաղմաթիվ ձեռա-գիր մատյաններ մինչև մեր օրերը հասած են:

Զեյթունը ուներ երկու նշանավոր վանքեր, որոնցին մեկը կկոչվեր Զեյթունի Ս. Փրկիչ կամ Ս. Ամենափրկիչ վանք, որ Զեյթունի հարավ-արևելյան կողմը 1½ ժամ հետիւնն ճամբու հաշվով հեռու է, և Ավագ լեռան կո-ղին, բարձրագիր գիրքով կիշխին Զերմուկի լեռնադաշտին: Զերմուկի դաշտը 40—60 րո-պե հեռավորությամբ (ճամբու հաշվով) Զեյ-թունի հյուսիս-արևելյան կողմը կտոնվի: Այժմ Զերմուկի դաշտը ըլքած օվա կան-վանեն: Ս. Փրկիչ վանքի եղած տեղեն մոր-թային հիվանդություններ բուժող պաղ ջուր մը կրիսեր: Ժողովրդական ավանդությունը կպատմե, թե Զեյթունի Ս. Ամենափրկիչ վան-քի տեղեն բխող ջուրը Ս. Բարթողիմենոս ա-ռաքյալի կողմե ցայտեցված է: Կկարծվի, թե վանքը Ժ—ԺԱ դարերուն հիմնված է: Վանքի վանահայրերը վարդապետներ կըլլային: 1862 թվականին Ս. Փրկիչ վանքը Ազգի փա-շայի բանակի կողմե կողոպակեցավ: Բաղ-մաթիվ հնություններ և ձեռագիր մատյաններ փշացան: 1895-ի Զեյթունի նշանավոր պա-տերազմի ընթացքին, դեկտեմբեր 2-ին Ս. Փրկիչ վանքը ամբողջովին այրեցավ և թնդա-նոթի ոռութերով ավերվեցավ:

Զեյթունի երկրորդ նշանավոր վանքը Ս. Աստվածածինն է, որ առաջնորդ արքեպիսկո-պոսներու աթոռանիստ վայրն էր: Այս վան-քը հին ժամանակ անառիկ դիրքի մը վրա կառուցված ըլլալով, ամուր վանքերեն էր: 1209 թվականի շինության կամ վերանորոգ-ման վիմաքանդակ մը ուներ դռան վրա: Զեյ-թունի Ս. Աստվածածին վանքը մինչև 1915 թվականը երբեք թշնամու ձեռքը չէր անցած: 26 մարտ 1915 թվականին Զեյթունի վրա գործված հարձակումներեն մեկի ընթացքին վանքը թուրքերու կողմե այրվեցավ:

Զեյթունի Ս. Աստվածածին վանքը, անա-ռիկ դիրքի վրա կառուցված, կտոնվեր Զեյ-թունի հյուսիս-արևելք, Պերզնկա լեռան ստորոտը, զառիթափին վրա: Զեյթունին ու-

ներ 1,5—2 կմ. հեռավորություն, հետիոտն ճամբու հաշվով՝ 15—20 րոպե հեռավորությամբ: Ս. Փրկիչ վանքի դիրքը ավելի բարձրադիր էր: Ս. Աստվածածին վանքը քանից թշնամիներու հարձակումները ետ մղող ամրոցի դեր կատարած է: Այս վանքը հին շինություն ըլլալոն, իր մեջ ամփոփված էին թ-ժ դարերեն մինչև ժիշտ գրված ձեռագիր մատյաններ, որոնց մեկ մասը հունատառ հայերեն էին: Ինչպես կերևս կարդ մը դեպքերի և տվյալները, նախքան Ռուբինյան իշխանության հաստատվելը, Կիլիկյան հայության մեջ բավական լայն տարածում գտած էր հունական մշակութիւնի ազգեցությունը:

Զեյթունի Ս. Աստվածածին վանքը Ռուբինյան իշխանության շրջանին մինչև մեր դարը հասած ձեռագիր գրշության կեղրոն հանդիպացող սակավաթիւն վանքերեն մեկը եղած է:

Զեյթունի այս երկու վանքերեն զատ կար նաև Ս. Կարապետի վանքը, որ կտնվեր Զեյթունի հարավ-արևելյան ուղղության վրա, մոտավորապես 4 կմ. հեռավորությամբ, կամ այժմու Սյովեյմանլըի հյուսիս-արևելյան կողմը, 3 կմ. հեռավորությամբ: Կթվի, թե նախքան Ս. Կարապետի վանքը, եղած է Ս. Կարապետի մատուռը, Անեծորի սկզբնական հայ բնակչության աղոթատեղին: Ս. Կարապետի վանքը կտնվեր Ս. Փրկիչ վանքին գործող և նախ Անեծոր հաստատվող հայերը հիմնած կամ հունականին վերափխան Ս. Կարապետի մատուռը, Անեծորի սկզբնական հայ բնակչության աղոթատեղին: Ս. Կարապետի վանքը կտնվեր Ս. Փրկիչ վանքին գործող և նախ Անեծոր հաստատյան ուղղության վրա: Զեյթունի Ս. Կարապետի վանքի անունը շփոթված է Ֆոնուզի Ս. Կարապետի վանքին անվան հատ:

Զեյթունի Ս. Կարապետ վանքի անունը եղած է ձեռագիր մատյան, որուն անունը նշված է հիշատակարանին մեջ: Կիարծվի, թե Անիին գործող և նախ Անեծոր հաստատվող հայերը հիմնած կամ հունականին վերափխան Ս. Կարապետի եկեղեցին, ապա վանքի վերածած: Ս. Կարապետի վանքին մոտ, Զերմուզի դաշտավայրի հարավային ծայրը, Անեծոր գետակի ափին, կտնենվին հին շինությանց մնացորդները, սրբատաշ եկեղեցիի քարեր, սյունի կտորներ, բնակավայրերու հետքեր¹¹: Ահա այստեղ է Անեծորը,

11 Նախքան անեցի հայերու Անեծոր հաստատվելը, այստեղ եղած էր հունական բնակալայր մը: Զերմուզի գաշտի չերմուզները շահագործելու նպատակով բարձրանակն շրջանին շինված բաղնիքներու և հարակից շենքերու վլատակներու տեղը գտնված շինությանց քարի մասերու հետ մեկտեղ շրջանակի մեջ գրված հունարեն վիմագրությունները ալ կային: Ինչպես Հարգանը հիմնող սաստացի իշխանները Պատիմոնի ավերակները օգտված էին, նույնպես ալ անեցիները, Անեծորի շիրմուներու մոտակա ավերակներեն օգտվելով, բնակավայր հիմներ և հաստատվեր են:

Զեյթունի հայոց առաջին նշանակելի բնակավայրը:

Զեյթունի ամենահին և նշանավոր եկեղեցին Ս. Աստվածածինն էր: Այս եկեղեցին բյուզանդական շրջանին հունական եկեղեցին եղած և ապա հայոց ձեռքն անցած է: Եկեղեցվոյ մոտ կար Ս. Թորոսի մատուռը, որ նույնպես հունական շինություն էր: Եկեղեցին պատուի մատուռը, որ նույնական արձանագրությունները հունարեն էին և մինչև վերջին օրերը կպահվեին եկեղեցվոյ պալանդատունը: Ս. Աստվածածին եկեղեցին 1884 թվականի Զեյթունի մեծ հրդեհն այրվելի հետո հայկական ոճով վերաշինված է:

Զեյթունը ուներ նաև ուրիշ եկեղեցիներ ալ, բայց անոնք պատմական մեծ նշանակություն չեն ունեցած:

Զեյթունի շրջակայքը կան նշանավոր քանի մը վանքեր և: Ֆոնուզի Ս. Կարապետ վանքը հիմնված է Ռուբինյան իշխանությունն շառապաջ: Ռամիկ ժողովուրդը հավատար ուներ, թե Ֆոնուզի Ս. Կարապետ վանքը հիմնված է Զեյթունի Ս. Փրկիչ վանքին պես, Բարթողիմեոս Առաքյալի կողմէ: Ս. Կարապետի վանքը օրերուն այրվեցավ:

Ֆոնուզը կտնվի Զեյթունի հարավ-արևմըստյան կողմը, անկե ուղիղ 23 կմ. կամ, հետիոտն ճամբու հաշվով, 7 ժամ հեռու, Շատալաքի և Չուքուր-հիսարի մեջտեղ, Չուքուր կողմէն եկող թիքիր-սու գետակի հյուսիսային կողմի եկեղեցը և Դրախտիկ բարձր լեռան ստորոտը, գետանցքի մը վրա: Ֆոնուզի արևելյան կողմը, 1½ ժամ հեռվեն, Կոկիսոն-Մարաշ գլխավոր ուղին կանցնի:

Ֆոնուզի հյուսիս-արևելյան կողմը, անկե 2—3 կմ. հեռու, բլուրի մը վրա, կտնվի Ֆոնուզի Ս. Կարապետ վանքը: Այս հին վանքը նշանավոր եղած է Ռուբինյան իշխանության շրջանին վանքը եղած է հայ գրչության և մշակութիւն կեղրոններեն մեկը Ս. Կարապետ վանքի արևելյան կողմը, մոտավորապես 1 կմ. հեռավորությամբ, կամ նշանավոր Ֆոնուզի իշխանանիստ բերդի ավերակները: Ֆոնուզի հայ իշխանը Մեծն Լոռնի թագաղորության հանդեսին ներկա գտնվողներու մեջ էր: Ֆոնուզի բերդը կպահտպաներ Ֆոնուզի Ս. Կարապետ վանքը և Ֆոնուզի կիրճը, ուրկե կանցնին Ֆոնուզի գետակը և Կոկիսոն-Մարաշ հին գլխավոր ճամբան: Այս բերդը իր հսկողության տակ կպահեր նաև Կանչի բերդի կողմեն, հյուսիսեն, հյուսիսարևելյան, հարավին եկող ցանցը այն ճամբաներու, որոնք կմիանալին գլխավոր ճանապարհին: Ռուբինյան իշխանության շրջանին, Ֆոնուզը բերդավանը կտնվի բժիշկ Ժին գեղ անվանած Ֆոնուզ բերդի հայերուն Հին գեղ անվանած Ֆոնուզ բերդի

տեղը: Փամանակի լոնթացքին հին Ֆռնուզը տեղափոխվելով վերոհիշյալ տեղը, շարունակեր է Ֆռնուզը անունը¹² պահել՝ իբր գյուղաբազար: 1921 թվականի գարնան, Զեյթունի վերջին աղետալի դեպքերու ընթացքին, Ֆռնուզը այրվելով բնաշնչվեցավ: Ֆռնուզը Զեյթունի մոտակա ամենեն կարևոր հայաբնակ գյուղաբազարն էր: Այժմ հայաբնակ Ֆռնուզն աւ, Զեյթունի պես ոչնչացվելով, բարտեղներն հանված է: Այժմ Ֆռնուզի և Զեյթունի շրջաններու համար միացյալ Մուլյամանը շրջանը հիմնված է:

Ֆռնուզի բերդը, որ մինչև բաներորդ դարու սկիզբները կիսականուն էր, կամարակապ գոտն վրա ուներ «Հեթում թագաւոր հայոց...» բանդակված վիմագրության բեկոր մը:

Մինչև այժմ Ֆռնուզին շրջակալիքի թաղամասերը երկարող հին արահետներու հետքերը կերեան: Այրված Ֆռնուզի շրջակալիքը կան այժմ կարդ մը գյուղեր, հյուսիս-արևելյան կողմը կա Գարավազած գյուղը, զոր հայերը և երեղեճ կամ Խարազած կանվանեին: Չաղլյան գյուղը, որ հայոց Կուչեղ անվանձն է, կատնի Ֆռնուզին 4,5 կմ. հեռավորությամբ հյուսիս-արևելյան կողմը և Գրախափիկ լեռան հյուսիսային լանջի վրա, Ֆռնուզի գետի արևմայան կողմին բարձրահայոց գիրքով: Ֆռնուզի հյուսիսային կողմը կունվին Բանըը և Տենիկել թթարնակ գյուղերի:

Զեյթունի շրջակա հին վանքերն մեկի ավերակը կանվեր Զեյթունի հարավային ուղղության վրա 13 կմ. հեռավորությամբ, Զեյթունի գետի արևմայան կողմի լեռան գագաթի մոտ, Արեգինի հյուսիսը: Զեյթունի հարավային ուղղության վրա և եպի կամ Վանք գյուղը նղած է միջնադարյան շրջաններու դյուակ և վանք: Այժմ գյուղը կուշի Ֆենք: Այսուել ժամանակին գրված են ձեռագիր մատյաններ: Այժմ Ֆենք գյուղի դյուակն է վանքին ոչ մեկ հետք չէ մնացած: Վանք գյուղի և Արեգինի միջև երկարող հին համբան կանցնի Անդրեասենց կամ Ալավողանենց գյուղեն, որ Վանք գյուղին 4 կմ. հարավ-արևմուտքն է:

Ոմանք կկարծեն, թե Անդրեասենց անապատը կդանվեր Անդրեասենց կամ Անդրեասենց գյուղի եղած տեղը. այս կարծիքը սխալ է, որովհետև Անդրեասենց անապատը Վանքի մոտերը կդանվեր:

Կանակ Ֆենք անոնով ուրիշ վայր մը, ո՛ղ կդանվի Զեյթունի հարավային ուղղության վրա, Դերելոյի մոտ: Բարձրավանդակի վրա վանքի ավերակներ կտեսնվին: Վանքի

գտնված բարձրավանդակի ստորոտեն Ֆենքաւան վանքը կրիսի: Վանքը կդանվի Հովտի լեռան այժմ Գարլը-թեփի կուշած 2 100 մետր բարձրություն ունեցող զագաթի շրջակայքը: Ռուբինյան իշխանության շրջանի նշանավոր Հովտի վանքն է այս, որ Հեթում Ա թագավորի և Զարել թագուհիի կողմէ Տևունյան հյուրընկալ ասպետներուն 1236 թվականին տրված էր իբրև կալված:

Զեյթունի հարավ-արևմտյան ուղղության վրա, 25 կմ. հեռու, Թերքիր գետակի ափին կանանավոր Զուգուր-հիսար կամ Հայոց Կահանա Բերգավան գյուղը: Սույն Բերգավանը ուներ Կանչի հայաբնակ և Զուգուր-հիսար թրբարնակ իրարմէ անցատ գյուղերը: Կանչի մէջ է, որ Ստեփանոս Ուլնեցին և 34 բրիտանյա հարավատները, 18 օգոստոս 362 թվականին, կրապաշտ հոռմայեցիներու կողմէ նահատակվելով, Ուկնիա թաղված են: Բյուզանդական կայսրության շրջանին Կանչի մէջ Ս. Ստեփանոսի վանքը կառուցված էր: Քրիստոնեության տարածման նախնական շրջաններուն, հայերու և հուներու միջն խարություն լրացլուն՝ Ս. Ստեփանոս Վանքի սկզբնական շինությունը հայկական թե բյուզանդական ըլլալը մեծ նշանակություն մը է՝ ունեցած: Համենայն գետս Ստեփանոս Ուկնացին հայ եղած է և հուներն ալ հայոց պես նահատակը սուրբերու կարգին անցուցած են: Ս. Ստեփանոսի վանքը կիլիկիո հայկական ամենահին վանքերն մին էր:

Զուգուր-հիսարի Կանչի կամ Կանչին բերդը կիլիկիո հայոց թագավորության կարևորագույն բերդերն մեկն էր: Հոռմեական շրջանին շինված այս բերդը հայոց ձեռքն անցած էր զեռ Պարոն Թորոս Բ-ի ժամանակ: Կանչի բերդը կհսկեր Թերքիրի գետանցքի ճամբուլ Մարաշին գետի Կոկիսոնի դաշտը ելուղ ճամբուլ:

Զեյթունի շրջակայրը գտնվող Կոկիսոն, Էլպիստան, Մարաշ, Անդրբըն, Դյունկելե և այլ գյուղապատճերը ճամբաներու կարևոր հանգույցներ են: Կոկիսոնի և Էլպիստանի ընդարձակ դաշտերն կանցնեին Միջին Փոքր Ասին և Հյուսիսային Սսորիքի միջն երթեկող առևտորական քարավանները:

Հին, ամուր բերդավան Կոկիսոնը այժմ խեղճուկրակ գյուղապատճար մըն է: Իր հին նշանակությունը և կարևորությունը կորուցուցած է: Կոկիսոնը հին հայոց Կոկաց երկրի կեղրոնն էր: Կոկիսոնը և շրջակայրը մեր թվականի սկզբնական դարերն սկսյալ հայաբնակ եղած են: 404 թվականին Կուտանդնուպոլսւն Կոկիսոն աքսորված Ս. Հովհաննես Ուկիերեան հայրապետը իր գրած նամակներու մեջ Կոկիսոնի և շրջակայրի հայոց բարեսրտության և հյուրասիրության մա-

¹² Որպեսզի նոր Ֆռնուզ գյուղաբաղարը հին Ֆռնուզի պահապանի, Խոնոց:

սին գովասանքով արտահայտված էր: Նմանապես Հռոմի նշանավոր ատենաբան և Հոետոր Պրոյերեսիոսը կոկիսոնցի հայ մընէր (Կոկիսոնցի Պարուղը), որու կիսանդրին Հռոմի հրապարակներեն մելուն վրա կանգնեցած էին: Կանչի բերդի մոտ նահատակված Ս. Սաեփանոս Ովկնեցին ալ կապացուցանե, թե հայերը Տավրոս լեռներու մեջ բնակություն հաստատած էին դեռ հեթանոսական շրջանեն, հավանաբար Մեծն Տիգրան Բ-ի Կիլիկիա և Ասորիք արշաված շրջաններուն: Այս կողմերը ամենաքիչը 2000 տարվա բնակություն հաստատած հայը քսաներորդ դարու առաջին քառորդին հայաշինչ կոտորածներու պատճառով վերջնականապես Կոկացերկեն վերցավի: Հայաշինչ կոտորածներու նախօրյակին, Կոկիսոնի մեջ մնացած էր 80 տուն հայ բնակչություն: Խոկ Կոկիսոնի շրջակա գյուղերեն Քիրեջը ուներ 100 տուն, Դեյիրմենդերեն՝ 120 տուն, Դաշուլուքը՝ 135 տուն, Թեքիրը՝ 30 տուն, Գյոլփոմար, Ջամուս-Հյոյուք և Հայք (Հյոյուք) գյուղերը՝ 20-ական տուն հայ բնակչություն: ունեին: Կոկիսոնը Զեյթունի հյուսիս-արևմտյան ուղղության վրա, 32 կմ. հեռու, Կոկիսոն գետակի մոտ հիմնված է:

Զեյթունի հյուսիս-արևելյան կողմը, 45 կմ. հեռու, Էլպիստան գյուղաքաղաքն ալ կարեղու և հին բնակավայր մը եղած է: Էլպիստանի շրջակայքը կտեսնվին հիշիթթական շրջանի քաղաքի մնացորդները: Էլպիստանը վերոհիշյալ աղետալի թվականներուն ուներ 4000 հայ բնակչություն: Էլպիստանի արևելյան ծայրամասի Գյավուրքյոյը ուներ 25 տուն հայ բնակչություն: Էլպիստանի մոտակա էֆուս հին գյուղաքաղաքը, որ հինեն ի վեր հայարնակ ավան մը եղած է, ուներ 2000 հայ բնակչություն: Էֆուսը Բյուզանդիոնի հայագիտ Մորիկ կայսեր (582—602) ծննդավայրը էր և Հուն Եկեղեցվո կարևոր կեդրոններեն մեկը:

Էլպիստանը, Դուլգատիրուղու բռնապետներու իշխանանիստ մայրաքաղաքը ըլլալով հանդերձ, մոտակա Զեյթունի հայերը լրիվ իր տիրապետության տակ չեր կրցած առնել: Այսպատճառավ, շրջակա թուրքերուն աշքին փուշ դարձած էր Զեյթունի և շրջակայքի հայությունը:

Կիլիկիո, գլխավոր 4 գետերեն մին եղող Զիհուն գետը սկիզբ կառնե էլպիստանի մոտակա ակերեն, էլպիստանի և Կոկիսոնի շրջակա գյուղերը թթվախառն կամ միայն հայաբնակ եղած են: Խոկ գետի հարավ, Զեյթունի ավելի մոտ շրջաններու գյուղերը գրեթե գուտ հայաբնակ եղած են: Կանչի մեջ գյություն ուներ երկու գյուղ, մեկը թթվաբնակ Զիհունի սկիզբը-հիսարն էր և մյուսը՝ կողքի

Կանչի հայաբնակ Ալաջաջօնք գյուղը, որ ուներ 35 տուն բնակչություն:

Զեյթունի արևմտյան կողմը, Կանչի և Զեյթունի միջև, կային բազմաթիվ հայ գյուղեր, որոնցմեն Ղողձըղաղը ուներ 27 տուն, Զաշիդերեն՝ 53 տուն, Սիրոնեն՝ 25 տուն, Զերմիյեն-ջը՝ 73 տուն, իսկ Կուչեղը բոլորովին հայաբնակ էր:

Կոկիսոնի հարավը և Կանչի արևմտյան կողմը կա հայոց նշանավոր Կապան բերդը, Կոկիսոննեն դեպի հարավ հոսող Կապան հատակի գետանցքի վրա, բարձրաբերձ քարագումի մը վրա կառուցված: Կիշխի գետանցքին և անարուն: Կապանի և Կոկիսոնի միջն կա նեղ և երկար լեռնային կարեւոր ճանապարհ մը: Դժվարամատչելի և դժվարակոխ այս ճամբան կանցնի էլերեթի և ճանան (Զինչին բողազը) կիրճերեն: Միջնադարյան այս կարևոր ճամբուն կասկեին Կոկիսոնի, ճանան և Կապանի բերդերը: Կանչի և Կոկիսոնի միջև երկարող լեռնային ճանաբան թեքիր գետակի նեղ գետանցքն ի վեր Աթոլուղու և Թեքիրի կիրճերեն անցնելե հետո, Կապան-Կոկիսոն ճամբուն միանալով, էլերեթի կիրճեն դեպի հյուսիսի կերկարի: Այժմ այս լեռնային ճամբան արդի երթևեկության միցներուն ձեռնտու անցալու լըլլալուն համար լքված է: Միջին դարերու աշխարհակալ բանակներու և առևտրական քարավաններու երթևեկության գլխավոր ուղին էր Կոկիսոննեն դեպի հարավ՝ Կիլիկիա և Ասորիք երկարող ճանապարհներու անցք տվող այս լեռնանցքը:

Կապան բերդավանը Զեյթունի հարավարևմտյան կողմը կտանի և անկե 38 կմ. հեռու է: Հավանական է, Կապան բերդը և շուրջի բնակավայրը հիմնված են Բյուզանդական կայսրության շրջանին, այս կողմերը հնուց ապրող հայերու կողմե, որովհետեւ բյուզանդա-արաբական (Բ-ՓԱ դարեր) պատերազմներու շրջանին Կապան բերդի անունը բաղմից անգամներ Կառութեռքու (Քարնիսրերդ-Կապանուրերդ) ձևով արձանագրված է: Բյուզանդական շրջանի հայանուն Կապան բերդի անունը, բարի ստուգարանությամբ, կնշանակե կապանք, փակոց, կապ, նեղ կիրճ, կիրճի փակոց: Ռուբրինյան իշխանության շրջանին Կապանի բերդը երկիր կարևորագույն ամրություններեն մեկն էր: Կապանի մեջ կար հյուսիսային սահմանի մաքսատուն: Կապանի մաքսատան եկամուտը Սիսի արքայական գանձարանին կպատկաներ: Կապանի բերդակալները Սիսի պալատի ամենեն վստահելի իշխաններեն կըլլային: Կապանի բերդը երկիրը կպաշտպաներ հյուսիսի թշնամի սելցուկներու հարձակումներեն:

Կապան բերդի հյուսիսը, 1 ժամ հեռավորությամբ, կգտնվի անառիկ ձանձող բերդը, որ կիշխն կիրճին և գետահովտին: Կապան բերդը Կիլիկիո Հայոց թագավորության վերջնական անկումնեն հետո իր անկախությունը երկար ժամանակ կրցած է պահպանել¹³: Կապան բերդը ձեռք անցնող Շահսուարի առօն Սիսի ճամբար մասամբ բացված էր: 1217-ին սելջուկ սուլթան Իզզեդին Քելբաուսը, Կապան բերդը ձեռք անցնելով, կշանար Անդրսունի վլայալ Սիս մայրաքաղաքը իշխել: Նույն տակտիկան Շահսուարը գործադրեց, բայց ա'լ Կապան բերդի Հայոց օգնող Մեծն Լևոն թագավոր մը ըլլալուն, Կապանը Դուկադիրուններու ձեռքն ինկալ: Շահսուար Կապանեն հետո հերթով Անդրսընը գրավեց, ապա այժմու Գաղիրիկի շրջանին մեջ Կովկասի Կարս քաղաքն առաջեցված թուրքմենները բնակեցնելով՝ Գարսպուլզադրիյե անունով գյուղաքաղաք մը հիմնեց: Գարսպուլզադրիյեն Սիս 40 կմ. հեռավորությամբ և ուղիղ ճամբար կար: Սիսը ա'լ ավարառուններու առաջ բաց էր, և այնպես ալ եղալ: Սիսի Հայությունը Շահսուարի հարձակումներին շատ կորուստներ ունեցավ:

Կապան բերդը թուրքմեններու ձեռք անցնելեն հետո, բերդի հայ բնակչությունը այնտեղեն վտարվեցավ և անկե 1 ժամ հեռու հարավ-արևելյան կողմը դաշտի մեջ նոր Կապան բնակվայրը հիմնվեցավ: Ծնշումներու և բռնություններու պատճառավ, Կապանի կարգ մը հայեր իսլամ կրոնը ընդունելու պարտավորվեցան: Կապան բերդի և Կապան հայ գյուղի միջև Կապանի իսլամ գյուղը կազմվեցավ: 1921 թվականի աղետալի օրերու նախօրյակին, Կապանի հայ գյուղը ուներ 400 տուն հայ բնակչություն: Կապանի և Կանչի միջև կային Զուբուրբոզ և Դեյիրմենբաշը հայ գյուղերը:

Կապանի հարավը կային բազմաթիվ հայ գյուղեր, որոնցմե գլխավորն էր Բունդուքը՝ 200 տուն հայ բնակչությամբ, Զեյթունի հարավ-արևմտյան ուղղության վրա, 32 կմ. հեռու: Բանդուքի հարավային կողմը կար Սիսնե գյուղը 25—30 տուն հայ բնակչու-

¹³ Կապան բերդի հայերը կիլիկիո Հայոց թուրքիան թագավորության անկումնեն (1375) հետո, 90 տարի շրջակա խամատ տարբերու շարունակական ճնշումներուն դիմարդեցին: 1465 թվականին՝ Կիլիկիո հայ բնակչության գլխուն պատուհան Դուկադիրովով բնակեաներն Շահսուարը, (1465—1472) երկարառու պաշարումներու հետո, Կապան բերդը հայոց ձեռքներ իւնեց: Քիլ ժամանակ անց, ժամանակը սկիզբներուն, Զարմանուշի անունով բաշ կին մը 300 հայ կորիններով Կապանի, Ֆոնուղի, Կանչի, Զեյթունի և Սրեգինի կողմերուն 35 տարի տիրեր է:

թյամբ: Կապանի հարավը, այժմու Դավուդ գյուղի մեջ, կրնակեին 70 տուն հայեր, որ գյուղը կկոչվեր Դավութենց, որ Զեյթուննեն մոտավորապես ունի 42 կմ. հեռավորություն: Դավութենց գյուղի շրջակայքը կային Շիվիկի, Տըրդատենը և Քարիկաչայը հայկական գյուղերը, առաջինը՝ 150, իսկ երկրորդը՝ 80 տուն բնակչությամբ:

Կապան բերդեն 17 կմ. հեռու, հարավային ուղղությամբ, Շիվիկի և Դավութ գյուղերու մոտք, Կապան—Անդրսընին ճամբառն վրա, Կապան գետակի արևմտյան կողմը, գաշտի մը մեջ կտեսնվի Կիլիկիո Հայոց նշանավուր Շողական բերդը, կիսակործան վիճակով: Թուրքերը այս բերդը Ազտղ-գալե կանվանեն, որ Սմբատ սպարապետի Տարեգրի մեջ նշանաված իզմի բերդն է: Շողական բերդի շուրջ, 1217 թվականին, Հայոց և սելջուկ սուլթան Իզզեդինի բերդությանը միջև տեղի ունեցած ճակատամարտին մեջ հայերը աղետայի պարտության մատնվեցան: Մեծն Լևոնի հիվանդություննեն և ծերութենեն օգուտ քաղերու և սելջուկներու բազմիցս հայերեն կրած պարտություններու վրեժը լուծելու մտադրությամբ, սելջուկ սուլթանը մեծ բանակով մը Կոկիսոննեն իջնելով Կապան բերդը պաշարեց, բայց պաշարման գործողությանց մեջ անհաջողության մատնվելով, բանակը Շողական բերդի դաշտը քաշեց: Հայկական հետևակնու հեծելազորը մոտակա լեռան վրա դիրք բռնած էին: Ճակատամարտի սկիզբը հայոց բանակի մեջ խառնաշփությունը հառաջ եկալ: Մեծ իշխաններեն հունասեր կուսակցության ներկայացուցիչ Ատոմ Պայլը, թշնամու թվի գերակշռությունը պատրվակելով, ազգային կուսակցության ներկայացուցիչ էամբրոնի տեր Կոստանդին Պայլի ուժիոր թշնամու դիմաց մինակ և աննպաստ դիրքի վրա ձգելով, ետ բաշվեցավ: Ավատապետական շրջանի մարդոց համար սովորական իրադարձություն կնկատվեր այսպիսի դավագրությունը: Շողական բերդի առջև հայկան բանակը մեծ կորուստ և շատ գերիներ ավագ: Երբի ինկած էին բազմաթիվ իշխաններ, զորավարներ, որոնց մեջ Ատոմ Պայլը և Կոստանդին Պայլը: Սելջուկ սուլթանը այս հաղթանակեն ուրախ, Կապան բերդի պաշար տուժության ուժուղայուց: Շողականի պարտության գույքը երբ Սիս հասավ, Մեծն Լևոնը մայրաքաղաքին մեջ գտնվող հեծելագունդով շատ արագ զնացքով անպաշտպան սելջուկներու երկիրը արշավեց: Երկիրը սուրի, հուրի, թալանի մատնելով ասպատակեց: Երկրին խորքերը միարձվելով, անցած տեղերեն հուրի և արյունի ակոս մը բացավ, մեծ ավարով երկիր վերադարձավ: Սելջուկ սուլթանը իր երկրին մեջ կատարվածեն անտեղյակ: Կապան

բերդի առջև ժամանակ կանցներ: Մեծն Լոռնի
ըրած գործերը իմանալով, Կապաննեն իր եր-
կիրը քաշվեցավ և հայոց հետ հաշտություն
կնքեց: Մեծն Լոռն իր իշխանները գերութենի
ազատելու համար, մեկ տարի հետո սելլուկ-
ներուն բերդիր և ընդարձակ հողամասեր տալ
պարտավորվեցավ:

Մեծն Առողջի մահեն (1219) հետո, Կիլիկիո
Հայոց թագավորության գահի շուրջ ծալր
տվող մրցակցություններու ընթացքին, Կոս-
տանդին Պայլը հաջողեցավ սպաննել տալ
դավադրող Առոմ Պայլը:

Միշնաղարյան Հայը, բնությամբ լեռնային
երկրի ժողովուրդ ըլլալով. անձնական ապա-
հովությունը բերդերու, ամրոցներու պաշտ-
պանության մեջ կինառեր: Նմանապես հա-
յաշատ կեդրոններու մոտերը, ամրոցներու
հովանագորության տակ կարևոր վանքեր
ալ կտննվեին: Կիլիկիո մեջ ալ շատ բնական
երևութ պետք է նկատել հայկական բերդե-
րու և վանքերու շրջակայքը հայ գլուխերու
գոյությունը:

Վերոհիշյալ Ֆնոնուզ բերդավանի և Վանք
ավանի շրջակալքը կային բազմաթիվ հայ
գյուղեր։ Ֆնոնուզ գյուղաքաղաքը ուներ 300
տուն հայ բնակչություն։ Ֆնոնուզի հարավը
գտնվող գյուղերեն Աղալուն ուներ 120 տուն
հայ, Պուղուրլուն՝ 40 տուն հայ, Թելեմելիք՝
89 տուն հայ բնակչություն։ Գարատութ, Մա-
շարլը, Սոլաթը գյուղերն ալ հայ բնակչու-
թյուն ունեին։ Զեյթունի և Ֆնոնուզի միջև Խե-
րեղեց (այժմու Գարաղաճ) գյուղը 70 տուն,
Ազարիկենց գյուղը 12 տուն, Ավագկալ կամ
Մըխալ գյուղը 150 տուն հայ բնակչություն
ունեին։ Զեյթունի հարավային կողմը մինչև
Մարաշ քաղաքը հոծ հայ բնակչությանը
գյուղեր կային։ Ասոնցմե Ղալաճը գյուղը
ուր հին բերդի մը մնացորդները կպնդվեի։
ուներ 13 տուն, Զեյթուն գետակի և Թեքիր-
Ֆնոնուզ միացյալ գետակներու իրար խառն-
ված տեղը գտնվող Շատալաք գյուղը՝ 16
տուն, Անդրիսասանց կամ Ալապողանենց
գյուղը՝ 30 տուն, Վանքը կամ Խեպին՝ 2
տուն, և այս շրջանի ամենեն կարմոր և մե-
գյուղը՝ Արեգին կամ Ալապաշ 300 տուն հա-
բնակչություն։ Այս գյուղերու շարքին կպատ-
կանեին Պեհեսնիլիք, Գարաքյություք, Զա-
քորդերը և Տոնիկենց հայ գյուղերը։

Մարաշ քաղաքը կոտորածներն և աքսո-
րին առաջ ուներ միայն 4 500 տոմ հայ-
րնակշոթյուն։ Զելթունի արևելյան կողմի
հայ գյուղերու խումբի մեջ՝ Ավագենք՝ 28
տուն, Ղիշենք կամ Եղիդինք 56 տուն, Նոր-
գյուղը 23 տուն, Ս. Աստվածածին վանքի
կողքի Վանքի գյուղը 104 տուն, Պեշեն գյուղը
50 տուն և Մարզպուղել, Գալուստենք գյու-
ղերը հայ բնակչություն ունեին։

Վերոհիշյալ Հայ գյուղքրեն զատ, Զեյթոնի
Հարավ-արևմտյան ուղղության վրա, Մարաշ
քաղաքի արևմտյան կողմը՝ Զի՞ռուն գետի
երկու կողմը, Հայաբնակ երկրամաս մը կար,
ուր Հայերը դեռ Ռուբինյան իշխանության
շրջաններեն ունեցեր են բերդեր և վանքեր։
Զեյթոնի Հարավ-արևմտյան ուղղության
վրա, մոտավորապես 42 կմ. և Մարաշ քաղա-
քի արևմտյան կողմը, 29 կմ. հեռու, Զի՞ռուն
գետի և Կապան գետակի միջև մնացած երկ-
րամասի վրա կար Հայոց Մեծ գյուղը¹⁴ կամ
թուրքերու Ենիշեզալեն, որ 300 տուն Հայ
բնակչություն ուներ։ Այս գյուղին մեջ կար
կիսակործան բերդի մը մնացորդը, որ Ռու-
բինյան իշխանության շրջանի գլխավոր բեր-
դերեն Նոր Բերդն էր։

Ենիշեպալիի արևելյան կողմը, 4 կմ. Հեռու, կա Մոճուրդի բրեծ գյուղը, ուր հայերը ունեին 300 հոգի (60 տոմ) բնակչություն։ Ենիշեպալիի հարավ-արևմայան կողմը, 6 կմ. և ջիւռն գետի աջ ափին 6 կմ. Հեռու, Դյունկելի¹⁵ գյուղաքաղաքը ուներ 1 000 հոգի (120 տոմ) հայ բնակչություն։ Իրարու մոտ այս երեք հայաբնակ գյուղերու մեջ ժի՞ դարու երկրորդ կեսին իտալացի Ֆրանչևսկյան վանականները (L'ordre des Franciscains de Terre-Sainte) մելքեկ վանք հիմնեցին, և սկսան տեղվույն հայության մեջ կաթոլիկություն տարածել։ Խտալացի այս կաթոլիկ վանականներու կարձ գործունեությունը վերջ գտավ 1895 թվականի նոյեմբեր ամսուն կատարված խժեցություններու ընթացքին։

Հստ Վիեննայի Մթիթարյան ուխտեհ Հ. Հ.
Ուկյանի, ԺԲ—ՁԳ դարերու միջև գործունեու-
թյամբը նշանավոր եղած Այգեկի վանքը
Մշշուղքերեսիի Ֆրանչիսկյան վանական-
ներու վանք շինած տեղը կտտնվեր: Հ. Հ. Ու-
կյան՝ Այգեկի վանքի մասին սապես կը բե.
«Մարաշի մոտ Դումգալա շրջանի մեջ, արդի
ենիշեգալիքի Մոցուգերեսի կոչված տեղը,
կտտնվի հին Այգեկի վանքը: Վանքի նույն
տեղը՝ Գարյուսեն ֆրերները երկու մեծ վա-
քեր շիներ են»¹⁶: Այգեկի վանքը շինված ըլլա-
լու է Ռուբինյան իշխանության 1166—1176
թվականներուն:

բնիշեպալիի (Մեծ գյուղ - Բյուրովքյու) և
Դումքալիի միջև Սուզուկդերեսիի մոտ կար
Զլուրլովպող գյուղը, որ ուներ 60 տուներու

14 Ալժեմ' Մհեր գյուղի վայրում կա Պատրիարքություն
պատճեն:

15 Դլանկելէ, այժմու Դունքալին է, բրդի մը մնացորդ, որ կիշխի ջիւռունի ազափնյա ճամբան: Ար ճամբան Մարտաշը, էլքիստանը և Կոկիսոնը կիսպահութեան և Անհանունութեան ծոցին:

16 Հ. Հ. Ուկոյան, «Կիլիկիայի վանքեր», Վիճակ

բաղկացած 300 հայ բնակիչ: Չյուրյուկգող գյուղի մեջ այժմ ալ կամ ամրոցի մը կիսակործան աշատարակն ու պարխսպները: Ենիշեգալիքի և Չյուրյուկգող գյուղերու միջև կարնակ 50 տուննոց Դիմրեթ հայաբնակ գյուղը: Նմանապես Ենիշեգալիքի մոտն էր Արաբլար հայ գյուղը՝ 15 տուն բնակիչով:

Զեյթոնի հարավ-արևմտյան կողմը, 54 կմ. հեռու, Զիհոն գետի աջ կողմեն անցնող ճամբրու վրա, այժմու Անապատ գյուղին մեջ, կամ Հեսուլյանց անապատի լրված շենքը: Կիլիկիո հայոց թագավորության շրջանի Անտիոք մեծ քաղաքի հայոց առաջնորդ եպիսկոպոսներու նստոցը Հեսուլյանց վանքն էր: Անապատ գյուղեն քանի մը կմ. հարավ, Զիհոն գետի ձախ կողմը, ինչին Դիմրեթոյ գյուղի մոտ, Հովսի լեռան վրա, կամ հայոց Հովսի վանքը, իսկ Անապատ գյուղեն քանի մը կմ. արևմուտք, այժմու Քողֆենք գյուղին մեջ, կտոնվին նշանավոր Շուլը անապատի լրված և ավերված շենքերը:

Ինչպես կերևա, իրարու մոտ դիրքերու վրա կառուցված այս վանքերը մաս կազմեին Ամանոսյան լեռներու հյուսիսային ծայրամասի վանքերուն: Զորի մը մեջ կառուցված Դիմրեթոյը ուներ 140 տուն կամ 850 հոգի բնակչություն: Դիմրեթոյի մոտ, Հյուսիս-արեվելյան կողմը, կար Ֆընդչաք գյուղաքաղաքը՝ 400 տուն կամ 2 500 հոգի հայ բնակչությամբ: Նմանապես Զիհոն գետի աջ կողմը, Մարաշի և Հովսի վանքի միջև, այժմու Դիլիջայ գետակի ափին, Քիշիֆիլ գյուղը ուներ 82 տուն հայություն, և Մարաշի հարավարևմտյան ուղղության վրա, Աստու և Դիլիջայ գետակներու միջև, կտոնվեր այժմու Բեղշեմը գընդողը կամ նախկին Զամուսի պատմութուլ հայոց գյուղը:

Զեյթոնի շրջակայքը, մոտավոր կամ հեռավոր վերոհիշյալ հայ գյուղերն զատ, որիից հայաբնակ վայրեր ալ կային, որոնց մասին գրելը մեր հոդվածը շատ պիտի երկարաձգեր: Այստեղ հայ գյուղերու շուրջ գտնվող թուրք-մեն, քրող և շերքեղ գյուղերու մասին պիտի շանդրադառնանք:

Զեյթոնի հարավ-արևելք, մոտավորապես 18 կմ. հեռու, Զիհոն գետի ձախ կողմը, Ընկուղեկ լեռան արևմտյան կողմի վրա, Գարամանլը գյուղի մոտ, Քըսրդ կիրճին իշխողդիրը կտոնվին նշանավոր Ընկուղու բերդը և վանքը: Ընկուղու բերդը կիլիկիո հայոց թագավորության ամենահարկոր ամրոցներն մին էր: Հայերը այդ բերդը գրաված էին բյուզանդացիներն: Այս բերդը նշանավոր եղած է բյուզանդա-արաբական պատերազմ-ներու շրջանին: Քըսրդի կիրճին անցնի շանացող արարական գորբերուն արգելք հանդիսացող ընկուղու բերդը արաբական աղ-

բյուրներու մեջ Ալ-Զառուղադ անունով հիշված է, որ հայերն Ընկուղուա կամ Ընկուղու կնշանակի: Միջին դարերուն և այժմ Մարաշի և Զեյթոնի շրջակայքը ընկուղենի պուրակներ շատ են:

Զեյթոնի հարավը, 16 կմ. հեռու, Շուրակամ այժմու Շատալաք գյուղի արևելյան կողմը, Զեյթոն-դերե կամ Շուրդ գետակի ձախ ափի լեռան կողին վրա հիմնված է Կյուրետինի նշանավոր դլյակը, որ հասկե գետանցքին, Մարաշ-Կոկիսոն և Մարաշ-Զեյթոն ճամբան բերդի ստորոտը կատալի Կյուրետինի կիրճը: Ոմանք Կյուրետինի բերդի անունին կրատուն կամ կուատուն բառեն սերած ըլլալը կկարծեն¹⁷: Իսկ իմ կարծիքով Կյուրետինը ձևափոխված պետք է ըլլա գրատուն բառեն, որովհետեւ Կիլիկիո հայոց թագավորության այս շրջանին ալ վանքերու և դղյակներու մեջ ձեռագիր մատյաններ կպատրաստվեին: Մոտակա Խեպի վանք-դղյակի, Արեգինի վանքի, Զեյթոնի վանքերու, Յոնովլի Ս. Կարապետ վանքի և հատկապես Թերզուսի մոտակա Մեծ-քար ամուր դպրոց-վանքի մեջ գրված ձեռագիր մատյաններ մինչև մեր օրերը հասած են:

Մինչև այժմ Կյուրետինի բերդի նուրբինյան իշխանության շրջանի հայերեն անունը ստուգ չէ: Ոմանք այս բերդի համար կարծիք կհայտնին, թե «Դղյակն բարձր» կամ «Բարձր դղյակ»-ն է, ոմանք ալ Կաղինա կամ Կայդենի բերդը կկարծեն: Մինչև որ Կաղինա բերդի, բարձր դղյակի, Ըղոկա գետի և Հարակից դիրքերու վերջնական տեղադրումը ստուգ կերպով չհաստատվի, Կյուրետինի բերդի անցյալը մթության մեջ սքողված պիտի մնա: Համենայն դեպք, այս դղյակը ուազմագիտական կարևոր դիրքի մը վրա կառուցված է: Նույնիսկ 1854 թվականին, Զեյթոնի հայերը թուրք-ուստական Ղրիմի պատերազմի ապատճառած առիթեն օգտվելով և ապագա հարձակում մը կանխելու համար, որոշ շեցին Մարաշ-Զեյթոն ճամբու վրայի այս կարևոր դիրքով բերդը վերցված պատրաստվել: Այս պատճառով ալ Մեծիքյան Արծրունի Հովսի աղան Զեյթոնի հարավային ճակատի հայ դիրքը ամրացնելու գործին ձեռնարկեց, բայց դրամի նվազության պատճառով, Ռուսաստանին նյութական օժանդակություն ձեռք բերելու համար Կովկաս ուղղվեցավ: Բայց Կարին (Էրզրում) քաղաքին մեջ թուրքեր ճանցվելով, իրը խոռվարար ասպատամբ և դավաճան՝ մահապատժի ենթարկվեցավ:

Կյուրետինի բերդեն արևմուտք, Զեյթոնի գետակի աջ կողմը, ցցված է խոշոր քարաժայու մը, որ Ալի-գայա կամ հայոց կողմի

¹⁷ Զեյթոնցի, «Զեյթոնի անցկալին և ներկալին», էջ 7:

Մեծ-քար կկոչվի և բնական բերդի մը տեսքը ունի, և կհսկե թեպիրի կիրճին, Ոմանք կկարծեն, որ թերդուակ մոտակա հայոց Մեծ-քար վանքը այստեղ գտնված ըլլա¹⁸: Բայց այս սխալ է, քարաժայոփ Ալի-գայա անոնմը տրված է 1782 թվականին Զելթոնի վրա արշավող օսմանյան կայսրության Մարաշ նահանգի զինվորական ուժերու ընդհանուր հրամանատար Ալի փաշայի կողմե, որ Զելթոնցիներեն վրեժ լուծելու մտադրությամբ, մեծ բանակով մը հայոց վրա քալեց, բայց Կյուրեստինի թերդի մոտակա այս քարաժայոփ կողքին եղած ընդհարումի ընթացքին պարտության մատնվելով, Մարաշ փախավ, և կրած հովումեն կաթվածահար ըլլալով, մեկ ժամեն մահացավ: Ահա այս դեպքեն հետո է, որ քարաժայոփ կոչվեցավ Ալի-գայա, այսինքն՝ Ալիին ժայող¹⁹: Մինչդեռ Մեծ-քար վանքի անոնմը կազմված է Մեծ քարայր-են, որ կրճատվելով Մեծ-քար կամ Մեծ-այր կոչվեր: Ժթ դարուն կառուցված վանքի մը դիրքը, ժթ դարուն պատահած դեպքի վայրի մը հետ պետք չէ շփոթել:

Մեծ-քար վանքը եղած է մեծ քարայրի մը կողքին: Այս պատճառավ վանքը ստացած է Մեծ քարայր բառեն Մեծ-քար կամ Մեծ-այր անոնմու վանքը կառուցված է Ռուբինյան իշխան Պարոն Մլեհի (1170—1175) կողման, որ նույն վանքի մեջ ալ թաղված է: Մեծ-քար վանքի կողքին գտնվող մեծ քարայրը թաղված էին 304 թվականին Անավարդայի մեջ նահատակված երեք քրիստոնյաներ, որոնք հետո Հույն Եկեղեցվո կողմեն սուրբերու կարգին դասված էին: Մեծ-քար ամուր վանքը կառուցված էր հայ մտավորականության զարգացման օժանդակելու նպատակով: Մեծ-քար վանքին մեջ կուսանեին աղնվական դասի գավակներ և հոգևորականության ընծայացուներ: Մեծ-քար վանքը, Կիլիկիու հայոց պետության մեջ, Զերմաղբյուրի վանքին հետ, կրթական երկրորդ կեդրոնն էր: Այժմ Մեծ-քար վանքի դիրքը կարելի է գտնել Մարաշ քաղաքի հյուսիսը, Ախորդաղ լեռան հետու կիրճին թեփե գագաթեն 40—45 րոպե (4 կմ.) հեռու, Մարաշ—Զելթոն ճամբուն վրա գտնվող Խանքինարի ակեն դեպի արևելք 5 րոպե հեռավորության վրա կգտնվի Մեծ-քար վանքի կողքի մեծ քարայրը, ուր ճամբորդները հաճախ ձիերով կիշերեն: Այս քարայրը, թերդիշայ գետակի հարավի կողմը, 1,5 ժամ (8 կմ.) հեռու է: Այժմ ոչ քարայրին մեջը

և ոչ ալ կողքին գերեզմանի և վանքի շինությանց հետքեր չեն մնացած: Բոլորն ալ Զիմնահատակ փլաված և ոչնչացված են:

Պետք է նկատի առնել, որ մինչև քանի բրոդ դարու առաջին քառորդը հրատարակված հայերեն գրականության մեջ թերդուսը կնշանակե ոչ թե գյուղաքաղաքի անուն, այլ թերդիշ-շայ գետակի աջ և ձախ կողմին բարձրացող կողերու և Զիմուն գետի մոտ տարածվող Հովիտի անունն է, որ կապարունակեր այժմու Սարըշուգուր, Մագուլուռ, Թնթիրի, Գարամանը և շրջակայքը մեջը առնող երկրամասը: Ախորդաղի և Ընկուլուտ լիներու կողերեն և թերդիշ-շայ գետահովիտեն կազմված այս երկրամասը կիսվեր թերդուս և կներկայացներ փոքր գավառ մը:

Զելթոնի և Մարաշի միջև երկարող ճամբուն վրա կան նաև բերդ մը և դիտանոց մը: Այս բերդը կգտնվի Մարաշ—Յունկութի կամուրջի հին ճամբուն վերև և Ճանձիկ բերդ կամ Ճանձը բերդ կոչվի: Ճանձիկ բերդը կգտնվի Մարաշին 4 կմ. հեռու, անոր Հյուսիս-արևմտյան կողմը, Ախորդաղ լեռան հարավը, լայնանիստ քարաժայութուրի մը գագաթը, Օլուշաղ լեռնանցքի արևելյան կողմը, բարձրահայաց դիրքով: Այժմու Դելվեպարդան գյուղի մոտ կգտնվին բերդի ավերակները: Լայնանիստ քարաբլուրի կողին կան վիմափոր քարայրներ, որոնք միշին և նախորդ դարերուն իբրև մենաստան գործածված են: Այս բերդը կնակի Յունկութի կամուրջի ճամբուն վրա գտնվող Օլուշաղ լեռնանցքին և Ախորդաղի վրային դեպի հյուսիս երկարող ճամբաներուն:

Ճանձիկ բերդի հյուսիսը, Յելդեկիրմին թեփե լեռան 1854 մետր բարձրությամբ գագաթին վրա կգտնվի ամրոցը, որ կիարծվի, թե դիտանոցի դեր կատարած է: Այստեղին կտեսնվին ամբողջ թերդուս գավառը, Մարաշի դաշտավայրը, Յունկութի կամուրջը և Զիմունի գետահովիտը:

Զելթոնը անցյալին մեջ պատերազմի արհավիրքներեն զատ անցուցած է նաև կարգ մը սոսկալի աղետներ, որոնցմե 1884 թվականի սեպտեմբեր 22-ի ահուլի հրդեհը հրուճարակ դարձուցած է Զելթոնի ամբողջ շուրջան, եկեղեցիները և մեծ թվով բնակարանները: Բնակարանները խիտ առ խիտ կառուցված ըլլալուն՝ վնասը մեծ եղած է: Այս հրդեհին այրած են Զելթոնի մեջ գտնվող բազմաթիվ ձեռագիր մատյաններ, հնություններ և նույնիսկ Զելթոն գյուղաքաղաքի տուրքե զերծ մնալու մասին օմանյան կայսր սուլթան Մուրադին ձեռք բերված նշանակոր հրովարտակը:

¹⁸ Ag h assi „Zeltoun, depuis les origines jusqu'à l'insurrection de 1895”, Paris, 1897, p 19:

¹⁹ Ալիք թուրքերն կնշանակե քարած, մեծ: Այս պատճառավ հայերը թարգմանարար կոչեր են Մեծ-քար:

Զեյթոնի բնական աղետներն մեկն ալ 1544 թվականի հունվար ամսին պատահած կործանարար երկրաշրջն է, որ 6 ամիս անընդհատ կրկնված է: Այս երկրաշրջն Զեյթոնի մեծ եկեղեցին փլեր է, բնակելի տուններն մեկ մասը կողոն ի վար քշվեր, կործաներ է: Այս ցնցումի ազդեցությունը էլքրիստան ալ գգալի եղավ, էլքրիստանի կեսը հողի մեջ ընկլմեցավ և մեծ կորուստներու պատճառ եղավ:

Զեյթոնի մասին գրված հրատարակություններու մեջ Զեյթոնի շրջակա բնակավայրեր և դիրքերու տեղադրական նկարագրությանց մեջ շատ անգամ կարդ մը հեռավորություններ ժամու հաշվով տրված են: Սովորաբար հետիւն մեկ ժամվա հեռավորությունը 5 կիլոմետրի համահավասար է: Խոկ ջորիով կամ ձիով մեկ ժամվան հեռավորությունը ա'լ ավելի մեծ հեռավորության համապատասխան կըլլա: Գրականությանց մեջ նշված ժամվան շափերը ինչ հաշվի հիման վրա տրված ըլլալը ցուց տրված չեն: Այս պատճառով նույն հեռավորության համար տարրեր ժամեր տրված կըլլան:

Ուրուգլայի Մոնթելիլետո քաղաքի Զեյթունի հայրենակցական միության կողմեն հրատարակած «Զեյթոնի պատմագիրք»-ը 1960 թվականին Բուենոս-Այրես տպված է: Այս ստվար հատորը կպարունակի Զեյթոնի մասին հրատարակած գրությանց ամբողջական ժողովածուն:


Այս աշխատության մեջ հաշված գյուղերուն վրա պետք է ավելցնել Զեյթոնի ամենակարեւոր գյուղերներ Արեգինի գյուղախումբը, որ ուներ 300 տուն բաղկացած հայ բնակչություն, տարածված էր Զեյթոնի և Արեգինի գետակի միջև, Շենտեկ լեռան հարավի կողմի ընդարձակ երկրամասի վրա: Արեգինի


գյուղախումբի կնդրոնը կնկատվեր Ալարաշ կոչված վայրը: Արեգինի վանքը կգտնվեր Արեգին բերդի արևելյան կողմը՝ քանի ո՞ւ կմ: Հեռավորությամբ լեռան կողին վրա:

Արեգինի գետակը առաջ եկած է Զեյթոնի Շուղուր գետակի, Ֆոնուզ գետակի և Կանչի բերդի (Չուգուր-հիսար) կողմերն եկող Թեթիր գետակներու միացումնեն: Շատավագ գյուղն մինչև Զիհուն գետին միացած տեղը վերոհիշյալ գետակներու միացյալ հոսանքը կկոչվի Արեգինի գետակ: Կիլիկիոն հայոց թագավորության շրջանի նշանավոր Արեգին բերդը կատար Ալարաշ գյուղի (7-8 կմ.) հյուսիսային կողմը՝ Արեգին գետակի կողմի երեքի բաժնված ցից քարածայերերն մեկուն վրա, անմատչելի դիրքով: Արեգին բերդը կհակեր Մարաշեն Կոկիսոն երկարող ճամբու Արեգին կիրճի անցքը: Բերդը կիշխեր նաև Արեգինեն դեպի Խեպի դշակը երկարող ճամբու: Արեգինի բնական բերդը այժմ լքված և ավերված վիճակով կտեսնվի Շադալագ և Գարաքըություք գյուղերու միջև:

Ինչպիս հայոտնի է, Արեգինի վանահայրերը Կապան քաղաքի առաջնորդները կըլլային և Սիսի կաթողիկոսարանին կողմեն մեծ պատվի կարգանանային: Նմանապես Արեգինի բերդակալ իշխաններն ալ Սիսի պալատին մաշի պատվի էին: Մեծն Լևոնի թագադրության հանդեսին Արեգինի տեր իշխանն ալ ներկա էր:

Հայ ժողովուրդի անցյալին մեջ մեծ նշանակություն ունեցած Արեգինի հայ բնակությունը վերջնականապես 1921 թվականի հայացինց կոտորածներու ժամանակ ոչնչացվեցավ և Ալարաշ գյուղն ալ քանդվեցավ: Զեյթոնի ճակատամարտներուն միշտ նախաճարձակ և օժանդակ եղած է Արեգինի հայ գյուղը:





Ն. ԱՍԿԱՆՅԱՆ Ք. ԿՈՐԿՈՏՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐ

Դարերի խորքից եկող հայ ժողովուրդը, հաճախ ենթակա օտար տիրակալների ծանր լրտծին, ազգապահանման ու գոյատևման իր միջնաբերդն է դարձրել Հայ եկեղեցին, գիրը, գրականությունը և իր ինքնուրուց մշակույթը:

Մեսրոպյան տառերը եկել են հիմնել անկողոպտելի և տևական գրքի իշխանությունը՝ երերուն քաղաքական իշխանության փոխարեն: Մեր ձեռագիր մատյանները իրենց մեջ ամփոփել են ազգային ճոխ գանձեր՝ փոխանցելու համար դրանք սերունդներին՝ հավերժությանը:

Հայրենիքում տիրող քաղաքական անպահով դրության պատճառով, անցյալում Սփյուռքում զարգացել են հայ գաղութներ, ստեղծելով իրենց ազգային մշակույթի կենտրոնները և միշտ վառ ու կենսունակ պահել դրանք: Տպագրության գյուտից հայ ժողովուրդը սկսել է օգտվել շատ կանուխ՝ 1512 թվականից, բայց առաջին հայ տպարանները հիմնվել են ու գործել Սփյուռքում: Ու միայն 1772 թվականին է, որ հայ ժողովուրդը կարողացել է իր Հայրենիքում, էջմիածնում, սեփական տպարան ունենալ:

Հայ տպագրական կենտրոնների ցրված լինելու պատճառով, հայ հնատիպ գրքերը, հայ ժողովրդի նման, թափառել են երկրից երկրի և հանդիպել զանազան փորձությունների:



Այդ գրքերի մի մասը հասել է բանասերների ձեռքը, ուսումնասիրվել և ապա ապահով հանդրվան գտել հանրային գրապահոցներում: Հնատիպ այդ գրքերի մյուս մասը այրվել ու ոչնչացել է դեռ Հայրենիք չհասած հանդիպելով զանազան փորձությունների և կամ ոչնչացվել հայրենի հողում, թշնամու ձեռքով:

Բայց կա հայ հնատիպ գրքի մի ուրիշ մաս, որը չի ոչնչացել, սակայն և ապահով հանդրվանի դեռ չի հասել նա զեռ թափառում է տնից տուն և որոնում է իր իսկական տեղը, որպեսզի հայտնի դառնա բոլորին և ծառայի իր ժողովրդին:

Այս կապակցությամբ կարևոր աշխատանք են կատարել հայ անվանի մատենագետներ և բանասերներ Հ. Գ. Զարբհանալլանը, Հ. Ա. Ղազիկյանը, Թեոդիկը, Լեռն, Գ. Ղևոնյանը և շատ ուրիշներ:

Սակայն վերջին տասնամյակներում հայտնաբերվել են բազմաթիվ հնատիպ գրքեր, որոնք ուսումնասիրության կարիք են զգում և որոնք մեզ հուզում են նոր, ավելի կատարյալ մատենագիտական աշխատություններ ստեղծելու անհրաժեշտության մասին:

Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում Ա. Մասնիկյանի անվան հանրային գրադարանի հայ տպագիր գրքի մատենագիտության բաժինը, որը տարիների ընթացքում հայտնաբերել է բազմաթիվ հնատիպ



Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ» գրքի երկու հրատարակությունների երկրորդ տիշտոսաթերթերը:

գրքեր և դրանց հիման վրա հրատարակության է պատրաստում հայ տպագիր գրքի բազմահատոր մատենագիտությունը։ Բաժնի աշխատակիցները ցարդ տարբեր առիթնենքրով իրենց հոգլածներում խոսել են նորահայտ հնաափակ որոշ գրքերի մասին։

Այստեղ, ընթեցող հասարակության ուշադրությանն ենք ներկայացնում նոր հայտնաբերված հնատիպ մի քանի գրքեր, որոնք կազին գանաղան անհատների կամ պետական հիմնարկությունների գրադարաններում, և որոնք ժամանակին չեն մտել մատենագիտական աշխատությունների ցուցակների մեջ։

1. «ՃԱՐԱԿՆՈՅ ԵՐԱԺԾԱԿԱՆ»; Ամստեղուամ, 1712, 720 էջ; Shառուսաթերթուառութեան պատճեան

¹ Այս գրքերից մը բանիսի հայտնաբերման գործում
մէս օգնել են Ա. Մշանիկյանի անվան հանրային
դրադարանի հայ տպագիր զրքի մատենագիտության
բաժնի աշխատողներ Անահիտ Սավալյանը և Մարգա-
րիա Մինոսյանը:

² Մենք նկատի ունենք մատենագիտներ Հ. Գ. Զարբ-հանալսանի «Հայերն հրատարակություններու (1893 և 1895) ցուցակներ»-ը և «Հայկական մատենագիտություններ», Հ. Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատե-

փակ, պատկերներով և զարդերով։ Հանրային գրադարան, № 3651³, Մատենադարան, № № 1265, 1777, 1731⁴.

Տիւղոս, 1777, 1781:

նագիտությունն-ը, ինչպես նաև մատենագիտական մի շաբթ աշխատություններ՝ Հ. Գ. Զարբհանալյանի «Պատմություն հայկական տպագրության», Թեոդիկի «Տիառ ու տառօ-ը, Անոնի «Հայկական տպագրությունն-ը», Գ. Անոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը», ինչպես նաև «Բյուրակն», «Հանդիս ամսօրյա» և «Արեգիլյան մամուչ» ամսագրերում հրապարակված մատենագիտական հոդվածներու:

ՅԱյս Խշանակում է, որ գիրքը պահվում է Երևանի Մայսանիկովանի անվան ուսուարիկական գրապարանի մեջ օրինակ և Հաջվագլուտ գրեթե գրապահոցում, չըմահ Հայուսակ տակ:

⁴ Այս նշանակում է, որ գիրքը պահպում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) դրադարանի դրա-պահպում, նշված համարի տակ:

Ε Κωνσταντίνος ο Αρχιεπίσκοπος της Κωνσταντινούπολης συνέβη να αποδέχεται την παραπομπή της Εκκλησίας της Κωνσταντινούπολης στην Αγία Σοφία, μετά την άφιξη της στην πόλη της Κωνσταντινούπολης.



«Տետրակ ամենասուրբ ռոպարին» գրքի տիտղոսաթերթը:

տուածայնոց և երջանկաց / սրբոց վարդապետաց / Հայոց քարզմանշաց: / Ձկարգաւորութիւնս եկեղեց/ցայ վայելչացուցանողաց / և Թուոյն Քրիստոսի ձէծքի / և ի Հայոց ՌՃԿԱ. / դեկտեմբեր ամսոյ Ը/ տպեցեալ յԱՄ-ստելօ/տամում Քաղաքի:

Հատված հիշատակարանից.— «... Աւարտեցաւ գիրքս երաժշտական, որ և շարակնոց: Ի տպարանի Սրբունոյ Աստուածածնի...»:

Գրքում տպագրված 49 փորագիր պատկերները (բացառությամբ 405 էշի Ս. Հոփիսիմեկի պատկերի) նույնությամբ վերցված են Ուկան երևանցու առաջին անգամ տպագրած շարակնոցից:

2. «ԿՂԵՄԵՍ ԳԱԼԱՆՈՍ, ՄԻԱՐԱԱՆՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ԸՆԴ ՄԵԾԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՀՈՌՎՄԱՅ: Հու. 2. մաս 1. Հռոմ, տպ. Ուրբանյան, 1658: 44 Համարակալված + 438 = 482 երկսյուն էշ: Տիտղո-

սաթերթը՝ կարմիր և սև տառերով: Բնագիրը՝ Հայ և լատին եկումենիկը: Զարդերով: Հանրային գրադարան, № 470: Ունի երկու տիտղոսաթերթ:

Առաջին տիտղոսաթերթը՝ Միաբանութիւն / Հայոց սուրբ եկեղեցայն, / ընդ մեծի սուրբ եկեղեցայն Հռովմայ: / Conciliationis ecclesiae Armenae cum Romana/ Secunda pars controversialis.

Երկրորդ տիտղոսաթերթը՝ Միաբանութիւն / Հայոց սուրբ եկեղեցայն, / ընդ մեծի սուրբ եկեղեցայն Հռովմայ: / Շարադրեալ, ի յերկուս հատորս. ՚ի պատմական և վիճաբանական / ՚ի կարգէ Թէատինոսաց Կղէմէս վարդապետէ / Երկրորդ հատորին: / Մասն առաջին: Conciliationis Ecclesiae Armenae cum Romana/ ex ipsis Armenorum patrum e doctorum testimonialiis, / In duas Partes, histogramam controversialis divisae. / Pars altera. / Auctore / Clemente Calano / Surrentino/ clericō regulari theologo et S. Sedis Apostolicae ad Armenos Missionario. / Tomus primus. / Romae / Typis sacrae Congregationis de Propaganda Fide. Anno MDCLVIII. Superiorum permissu.

Գիրքը հիշատակարան չունի:

Այս գրքի մասին խոսել են թե՛ Զարբհանալաւնը (էշ 307), թե՛ Ղազիկյանը (Ա, էշ 1323—1324) և թե՛ Թեղդիկը (էշ 49), սակայն նրանցից ոչ մեկը չի նկատել, որ այս գիրքը նույն տպարանում, նույն տարում տպագրովել է երկու անգամ, այսինքն ունեցել է երկու տարբեր հրատարակություն: Այդ երկու հրատարակությունները լրիվ նույն բովանդակությունն ունեն, սակայն շատ բաներով տարբերվում են միմյանցից: Զնայած բովանդակությունը նույնն է, սակայն շարվածքի խոտեթյան և տառերի շափի տարբերության հետևանքով էերի թիվը տարբեր է. մի հրատարակությունն ունի 438 էշ, մյուսը՝ 487: Մի հրատարակության տիտղոսաթերթի «միաբանութիւն» բառը տպված է ձեռագրանման տառերով, իսկ մյուս հրատարակության մեջ խոշոր, երկաթագիր տառերով (տե՛ս նկար 1 և 2): Տարբեր են նաև գիրազարդերը, զարդագրերը և վերջնազարդերը, ինչպես նաև լատիներեն գրությունն ու տառատեսակները. օրինակ՝ մի հրատարակության տիտղոսաթերթում տումս քրիստոնէ, մյուս հրատարակության տիտղոսաթերթում՝ գրության տիտղոսաթերթում՝ տումս քրիստոնէ գրության ձեր (տե՛ս նկար 1 և 2): Այս երկու հրատարակություններից մատենագիրները տեսել և հիշատակել են 487 էշ ունեցող հրատարակությունը, որը պահպում է Հանրային

գրադարանում 752 համարի տակ և գրականության ու արվեստի թանգարանում (Թ. Աղասյանի ֆոնդում) 8127 համարի տակ⁶: Խակ 438 էջ ունեցող Հրատարակությունը, որը հայտնի չի եղել մեր մատենագիտներին, հայտնաբերված միակ օրինակն է և պահպում է Հանրային գրադարանում 470 համարի տակ:

3. «ԵՅՏՐԱԿ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՌՕՁԱՐԻՆ, ԱՅ-ՍԻՆՔՆ ՎԱՐԴԱՐԱՆՆԻՆ»: Վենետիկ, տպ. Միխարյան, 1794, 72 էջ: Տիտղոսաթերթը զարդարակ: Զարդերով և պատկերով՝ 18-րդ հջում: Հանրային գրադարան, № 1945, Գրականության և արվեստի թանգարան (Թ. Աղասյանի ֆոնդ, № 8501):

Տիտղոսաթերթը՝ Տեառակ ամենասուրբ ուօգարին. Այս/ինքն վարդարանին: / Որ ասացեալ լինի ի պատի Ա/մենասրբության Աստուածածին: / Տպեալ յամի Տեառն 1794 / Օգոստոսի 30: / ՚Ի վենետիկ. / ՚Ի վան Սրբյան Ղազարու / հրամանաւ մեծաւրաց:

Գիրքը հիշատակարան չունի: Կաթոլիկ եկեղեցու իշխանության սահմաններում զործող տպարանները իրավունք չունեին գրքեր տպագրելու առանց հոգևոր իշխանության թուլլավության, այդ պատճառով էլ նման գրքերի վրա մենք հանդիպում ենք «Հրամանաւ մեծաւրաց» դարձվածքին:

4. «ԳՈՐԾՔ ԱՐԴԱՔԵԼՈՅՑ»: Վենետիկ, տպ. Միխարյան, Հանուն Անտոնի Բարդուի, 1789, 387+1 շհամարակալված էջ: Տիտղոսաթերթը զարդարակ, պատկերներով և զարդերով: Գրականության և արվեստի թանգարան (Թ. Աղասյանի ֆոնդ, № 8036):

Տիտղոսաթերթը՝ Գործ / Առաքելոց: / Թուլլք Պողոսի / Առաքելոյ: / Թուլլք Կարուղիկայց: / Յայտնութիւն Յովինանու: / Տպագրեալ յամի Տեառն. 1789: / ՚Ի մայիսի 10: / Եւ ի' բուականութեան Հայոց ԱՄ.Լ: / ՚Ի հայրապետութեան Տեառն Ղուկասու / Հայոց կարուղիկոսի: / ՚Ի Վէնէտիկ: / ՚Ի վան Սրբյան Ղազարու: / յանուն Անտոնի Պոռօրի: / Հրամանաւ մեծաւրաց:/

Հիշատակարան չունի: Սկսած 1789 թվականից Ս. Ղազարու Միխարյաններու տպարան են հիմնում և իրենց գրքերը տպագրում են այստեղ: Սակայն ինչ-որ պարտականություններից կամ Հարդանքից ելնելով զեպի իրենց նախկին տպագրի Անտոնի Բարդուին, մի որոշ ժամանակ

⁶ Հայլաստանում կամ Հայլաստանի սահմաններից դուրս ապրող հայ մտավորականները հաճախ իրենց գրադարանները նվիրում են Հանրային գրադարանի: Կամ որեւէ թանգարանի, որտեղ գրքերը պահպում են իրենց անունը կրող առանձին ֆոնդերում:

գրքերի վրա պահպանում են «Յանուար Անտոնի Պոռթօլի» դարձվածքը:

5. «ԱՅՅԲԲԵՆԱՐԱՆՆ»: (բնագիրը հայերեն և գերմաներեն): Տրիեստ, տպ. Միխարյան, 1788, 48 էջ: Զարդերով: Պատմության արխիվի գրադարան, № 297:

Տիտղոսաթերթ՝ ABC / Armenianisch und Deutsch, / oder / Namenbüchlein / zum Gebrauche der armenischen / Jugend in/ Siebenbürgen. worinnen auch die deutsche Auslegung der armenischen Buchstaben mit ihrer / achten Aussprache enthalten sind: für die Liebhaber dieser schönen/ schrift./ Mit keisere. Königl Anergnädigster Freyheit Triest, / gedruckt dye die P. P. Armenier, Mechiariisten. / 1788.

Գիրքը հիշատակարան չունի:

Զարդանալավանը (էջ 27) և Ղազիկանը (Հա. Ա, էջ 134) իրենց մատենագիտությունների մեջ հիշատակում են Տրիեստում 1788 թվականին տպագրված «Հայնակ և Նեմեցնակ» այբբենարանի մասին, որը յի համապատասխանում մեր ձեռքի տակ եղած օրինակի հետ: Ղազիկյանի նկարագրած այբբենարանը ունի 56 էջ, իսկ մերը 48 էջ է: Այնուհետև Ղազիկյանը նշում է, որ իր տեսած օրինակի 22-րդ էջում կան «մանրագիր քանի ուր խոսքը Քրիստոնեականն», իսկ մեր օրինակի մեջ Քրիստոնեականն սկսվում է 24-րդ էջից:

Այբբենարանից հետո սկսվում է Քրիստոնեականը, որը առանձին տիտղոսաթերթ և առանձին իշխամարներ ունի, ուստի մենք այն համարել ենք առանձին գիրք և նկարագրել ենք առանձին (տե՛ս Հաշորդ՝ № 6 գիրքը):

6. «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ»: (Բնագիրը հայերեն և գերմաներեն լեզուներով): Տրիեստ, տպ. Միխարյան, 1788, 48 էջ⁸: Պատմության արխիվի գրադարան, № 297:

Տիտղոսաթերթ՝ Կարենոս / Քրիստոնէական / Կարդապետութիւն. / Հացմունքներով և պատասխաններով / վան պիզարի տղոց: / Der / kleine katechismus / mit Fragen und Antworten / für die / kleinen Kinder / Mit kaiserl. Königl allergnedig-

⁷ Այս խորագիրը բերում ենք գրքի երրորդ էջի գերմաներեն տիտղոսաթերթի թարգմանությունից, որովհետև մեր ձեռքի տակ եղած միակ օրինակի առաջին էջը ընկած է, որի վրա հավանաբար դրված է եղել Հայերեն լեզվով տիտղոսաթերթը.

⁸ Էջերի թիվը ստուգ էլ, որովհետև գրքի վերջից թերթեր են թափակած:

ster Freyheit. / Triest, / gedruckt bey die
P. P. Armenier, Mechitaristen. / 1788. /

Գիրքը վերջից թերի է:

7. ՏՕՆԱԾՈՂՑՅԱ, Կ. Պոլիս, տպ. Աստվածա-
տուր դպրի (1699—1705). 288 զարդափակ
էջ: Տիտղոսաթերթը զարդափակ, պատկեր-
ներով և զարդերով: Հայկական ՍՍՌ Գիտու-
թյունների ակադեմիայի կենտրոնական գրա-
դարան:

Տիտղոսաթերթը՝ Տօնացն/յց. Տէրու/եա-
կան Տօնից: Նայեա ամենայն սրբոց ըստ /
պատշաճի ատարց: / Զոր եփալ է և սահ/մա-
նեալ սրբոյն Խամակ/կայ հայրապետի ըստ /
արարողութեանցն / Հայկագնեայց: / 'Ի Հայ-
րապետութեան / Տեառն նահապետի Սրբ/բա-
զան Կարուղիկոսի / Սրբոյն էշմածնի: / 'Ի
տպարանի տրուպ / Աստվածատուրի:

Հատված հիշատակարանից. «... Որ մըշ-
տահեղ շնորհիմ իւրով և ետ զկարողութիմ
ամենանուաստի պաշտօնէիս, հասանել 'ի յա-
ւարտ սրբոյ մատենիս, որ կոչ տօնացոյց
այսինքն ցուցանոյ տօնի բնաւից սրբոց և
ժամանակագրութեանց նոցին նաև համայնից
տնօրինութեանց Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի: 'Ի օրինակէ լուսաւոր Հոգի Ոսկան վար-
դապետին մեսեղիքն ևս երդինք 'ի միջոյ սո-
րին զի խնդրութեն դիւրաւ գտցեն: Արդ որ
հանդիպիք սրբոյ մատենիս իշխաչիք զաշխա-
տաւոր սոցին զթաթէրն և Յարութիմն:

Գրքի տպագրության տարեթիվը լի հիշա-
տակվում ո՞չ տիտղոսաթերթում և ո՞չ էլ հի-
շատակարանի մեջ: Տիտղոսաթերթում նշված
է, որ գիրքը տպագրվել է նահապետ կաթո-
ղիկոսի հայրապետության ընթացքում: Նա-
հապետ Եղիսաբետին պաշտոնավարել է 1691—
1705 թվականներին: Աստվածատուրի տպա-
րանը իր աշխատանքները սկսել է 1699 թվա-
կանին: Ենելով այս տվյալներից, գիրքը
պետք է հրատարակված լինի 1699—1705
թվականների միջն ընկած ժամանակամիջու-
ցում:

8. «ՀԱՆՆԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻՒ»: Կ. Պոլիս, տպ. Աստվածա-
տուր դպրի, 1731: 376 զարդափակ էջ: Տիտ-
ղոսաթերթը խորանի մեջ, 10-րդ էջում պատ-
կեր, զարդերով: Սատենադարան, № 329:

Տիտղոսաթերթը՝ Գիրք / Պատմութեան /
Սրբոյ և մեծի Քաղաքին Սատուրոյ Երուսա-
ղէմիս, /և սրբոց Տեօրինականց / Տեղեաց
Տեառն մերոյ / Յիսուսի Քրիստոսի: / Հաւա-
նալ վասն խախանութեան Տէրունական /
Ուխտար Մահանեաց: Որք Հաւատով /
Յուսով և Սիրով զիմեն առ սուրբ Քաղաքս /
Երուսաղէմ ծովով և ցամաքով յաղագս հոգե-
տր վահանականութեան անգին Մարգար-
տին, այս է / շնորհացն գանձելոց 'ի սմա. և

ընդունելոյ / զբանարթին մեղաց ի ձեռն Խոս-
տովանութեան / և նղորմութեան: / Խորապէս
շարադրեցաւ 'ի փառ Աստուծոյ և ամենայն /
սրբոցն, և 'ի Պատի ազգին Հայոց, յումեմնէ: /
/ Յովիաննէս Հաննայ վերաձայնեալ գործա-
կալ / ծառայէ սրբոյն Յակոբայ Սալիմացոյ: /
/ 'Ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի
Տեառն Կարապետի / Սրբազն Կարուղիկոսի
ամենայն Հայոց: / Յավիսկոպրասպետու-
թեան Աստուծածյանոյ Երուսաղէմի Առն Աս-
տուծոյ / Տեառն Գրիգորի Մեծի Խարունա-
պետի և Երից Երանեալ Պատրիարքի Քրիս-
տոսածիս սրբոյ / Արքունոյ նղոր Տեառն
Վիճակի ամենայն Հայոց: / Եւ 'ի Պատրիար-
քութեան Կոստանդնուպոլսոյ / Մեծի մայրա-
քաղաքին Տեառն Յովիաննու / Երշանկագոյն
և Աստուծածքան Վարդապետի, և սրբոյ /
Երուսաղէմիս բազմաշխատ այցելուի: / Յամի
Տեառն 1727, և 'ի Թուոյս մերու: 1176: /
Յունվարի Ա. 'ի սուրբ բաղակ Երուսալէմ:

Զնայած գրքի վրա գրված է «Աւամի Տեառն
1727, յունվարի Ա ի սուրբ քաղաքս Երուսա-
ղէմ», բայց գիրքը տպագրվել է Կոստանդնու-
պոլսում 1731 թվականնին: Գրքի վրայի թվա-
կանը վերաբերում է ձեռագրին, իսկ գրքի
տպագրության տարեթիվը նշված է հիշատա-
կարանում, որտեղ կարդում ենք. «... աւար-
տեցաւ տպումն պատմութեան սրբոյ քաղա-
քին Երուսաղէմի ի տպարանի տրուպ Աս-
տուծածքոյ: Ի թուականիս ՌՃՇ: մարտի
հջաման:

9. «ԴՊՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՐՁ ԵՒ ՏԱՂԱՐԱՆ»: Կ.
Պոլիս, տպ. Սարգիս Պարոի, 1709, էջերը զար-
դափակ են: Մեր ձեռքի տակ ունեցած օրի-
նակը միջից և վերջից թերի է, ընդհատվում է
254 էջում: Տիտղոսաթերթը արձանազարդ է:
Պատկերներով և զարդերով: Գրականության
և արվեստի թանգարան (Բ. Աղատյանի
ֆոնդ, № 8049):

Տիտղոսաթերթը՝ Գիրք / Դպրութեան: / Եւ
տաղարան վայելուշ / և գեղեցիկ 'ի զանազա-
նից. / բանաստեղծից շարագրե/ցեալ 'ի
խրախնան հայոց / բարեյարգից և ճշմար/ -
տասիրաց: / 'Ի հայրապետութեան Տեառն
Աղեկ/սանդրի սրբազն Կարուղիկոսի. / 'Ի
թվականիս Հայոց ՌՃՇ: / փետրվարի Ե: /
տպեցեալ 'ի Կոստանդնուպոլիս. ձեռամբ
Սարգիսի:

10. «ԺԱՄԱՆԱԿԻՒԹԻՒՔ»: Կ. Պոլիս, տպ. Սարգիս
Պարոի, 1709?: 600 զարդափակ էջ: Պատկեր-
ներով և զարդերով: Գրականության և ար-
վեստի թանգարան, № 10 041:

Գրքի տիտղոսաթերթը ընկած է, որի հե-
տեւնքով տպագրության տվյալները (տպա-
գրության վայրը, թիվը և տպարանը) վերց-
րել ենք հիշատակարանից: Սակայն հիշա-
տակարանում նշված 1709 թվականը կարող

է տպագրության ավարտման թվականը մինել, իսկ տպագրությունը կարող է սկսած լինել ավելի վաղ:

Մի հատված հիշատակարանից. «... Որ ես կարողութիւն նուաստացելոյ անձինս հասուցանել՝ ի կատար ժամակարգութեան զիրք վայելուս՝ ի պէտս եկեղեցեաց Հայաստանի աց.՝ ի թիվին Հայոց Ռծնդ մարտի թ և մայրաքաղաքին Կոստանդինու պօլոսոյ առաջնորդ տէր Սահակ արքի եպիսկոպոսն: Արդ որք հանդիպիք Աստուածայնոյ երգարանիս, յիշեցէք... զնուաստ Սարգիս տպագրողն և զորդեակն իմ զՄարտիրոսն և Գէորգն և զաշխատաւրոս գործարանիս Պետրոսն...»:

Սատենագետների մոտ Սարգիս դպրի տպագրած ժամագրքերից և ոչ մեկը չի համապատասխանում մեր օրինակի տվյալներին: Զարբհանալլանը իր ցուցակում նշում է 1703 թ. Սարգիս տպագրած մի ժամագրքի մասին, որը մեր կարծիքով 1704 թվականի ժամագրքն է և սխալմամբ դրվել է 1703 թվականի տակ: Այդ է վկայում այն փաստը, որ իր մատենագիտության մեջ նշված 1704 թվականի ժամագրքը չի արտացոլված գրքի սկզբին կցած ցուցակում, իսկ ցուցակի 1703 թվականի ժամագրքն էլ չի արտացոլված իր մատենագիտության մեջ: Ուրեմն դրանք միևնույն գիրքն են:

Այսուհետև նույն թյուրիմացությունը կըրպենել է Գ. Լունյանը (էջ 139):

Ֆրանսիացի բանասեր Թեոդոր Մակերը իր «Les livres imprimés arméniens de la bibliothèque de l'université d'Amsterdam» հոդվածում⁹ խոսում է 1709 թվականին Սարգիս դպրի տպագրած մի ժամագրքի մասին: Սակայն մեր գրքի տիտղոսաթերթի և Մակերի նշած գործի հիշատակարանի բացակայությունը մեզ հնարավորություն չի տալիս որոշակի եղանակության գալու Միակ փաստը, որ դրանք տարբեր գրքեր են, այն է, որ մեր գիրքը ունի 600 էջ, իսկ Մակերի նշած գիրքը՝ 608 էջ:

11. «ՏՕՆԱՑՈՅՑՅԱ»: Կ. Պոլիս, տպ. Սարգիս դպրի, 1720: 408 զարդափակ էջ: Տիտղոսաթերթը զարդափակ, պատկերներով և զարդերով: Հանրային գրադարան, № 4316, Պատմության թանգարան, № 308:

Տիտղոսաթերթը՝ Աստուած Բարեար / Ընաերաւ Կա/ըոլութեամ/բրո՝ և սիրախ Հաւրդափակ/թութեամբ գոկանալ մատեանս այս՝ ի եատարման / եցր՝ ի փաստ քո և ի փայելումն մանկաց եկեղեցւոյ / յօգենութիւն աղաշեմ ժամանեալ եասու: Ես ազ քո / մերձ եղիցի առ սորին ձեռ/եարկման գործի. որպէսի ա/զու-

ղութեամբ՝ և առաջնորդ/ղութեամբ քո զաւարու/մըն տեսեալ սորին բերկ/բեցայց և զաւենացայց / նոգեոր երենուանօ: / Եւ քեզ գոկութիւն անդա/ղար և փառք յափեանս:

Հատված հիշատակարանից. «... զայս մատեան սրբոցն հիշատակաց որ ասի տօնացոյց... առեղեցաւն իսկ. յամսոյն երաւայցոց և՝ ի շաբաթի ժո՞ւ և՝ ի Հոմայցոց ի բաղոցի թ՝ ի բաղաքն կստամպօլ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի: ... յիշեցէք զծառայս ձեր զտրուակ Սարգիսս, որ բազում ջանիւ և հոգաբարձութեամբ սկսայ տրպել զգիրքս զայս ծախեալ և առ սփենեալ արծաթս ինչ յարդեանց իմոց՝ ի պէտս սորին. զի ոչ միայն՝ ի սմանէ զապակասութիւնս ինչ մարմնաւորս լրացուցանելոյ աղագաւ և կենցաղականութեանս շահեկանութեան լրացուցանելոյ, այլ զի լրւայ հաւաստեալ զորինն ուղղութիւն առանել քան զայլ տօնացոյցսն այսու իսկ առանել վասն որոյ՝ ի սէր և՝ ի փափագ յորդեալ՝ ի պայծառութիւն ազգիս մերոյ և յօգուտ ձեր և հոգույս իմոյ, կամեցայ՝ ի գործ ածել զսա և յօրինել:

... Դարձեալ յիշեցէք և զհայրն իմ ըստ հոգույ զկողոնիացի տիրացու զՅակօբն, որ նև աշխատանցս ոչ սակաւս կրեաց ուղղելով ըստիսալութիւնս սորին: Եւ ևս յիշեցէք և՝ ի տպագրատանս իմոյ՝ զաշխատօղոս ի գործս սորին և զյոգնական զմշակսրս նախ զտազօղս սորին զեղրայրն իմ՝ ի Քրիստոս զտիրացու Պետրոսն. և ապա զաշխատակիցսն նորին զՏելլէթն և զՍիմէնն, որք մինչ յաւարտի սորին, բազում չարչարանս և նեղութիւնս կրեցին: ... յիշեցէք..., զհարազատորդեակն իմ զՄարտիրոսն, որ՝ ի տրմնեան և՝ ի գիշեր ցանս յոգնագոյնս եղեալ՝ ի սրտի, և յոգոց հանելով միշտ, աշխատէր և տառապիւր՝ ի շարաբարդութիւնս՝ ի սրագրութիւնս և՝ ի համարաբարդութիւնս ընթերցուաննծոց սորին...»:

Տիտղոսաթերթում գրքի անվան ու տպագրութիւն մասին տեղեկություններ չկան: Տառանի և տպագրութիւն վալորի մասին տեղեկություններ վերցրել ենք հիշատակարանից, իսկ տպագրության թվականի մասին տեղեկություններ է տվել տպագրիչը գրքի 13-րդ էջի փոքրիկ ոտանավորում:

«Զնախնի վեհաց թիվն առ ձայնեալ Որք հաւատոյ սակս զոկ կազմեալ,

Տասն արկ՝ ի նա եռապատկեալ, եւ մի ընդ քառ յիսունն զուգեալ, Յոռմէ բատէա պրտցես խուզեալ, Հզթըւականն հայոց կոչեալ, Զի չե թաքուն բանիւ ծածկեալ Այլ յոյժ դիւրին է յօրինեալ:

⁹ Résume des études arménologiques, Paris, 1926, tome VI, page 71, 146.

Հստ պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի¹⁰ Հովհաննես իմաստասերի թվականն է 1984: 'Տասն արկ' ի նա եռապատկեալ նշանակում է $10 \times 3 = 30$: ռեւ մի ընդ քառ յիսունն զուգեալ նշանակում է $1+4+5=55$: Այս այս թվերի գումարը տալիս է տպագրության թվականը, որ է՝ $1084+30+55=1169$, 1169 + 551 = 1720:

12. «ՊԱՏՄՈՒԹԻԹԻՆ ՊՂՆԶԷ ՔԱՂԱՔԻ»: Կ. Պոլիս, տպ. Մարտիրոս Պարի, 1757, 224 գծափակ էջ: Տիտղոսաթերթը պատկերացրդ: Մեկ պատկերով և զարդերով: Գրականության և արվեստի թանգարան (Թ. Ազատյանի ֆոնդ, № 8221):

Տիտղոսաթերթը՝ Գիրք / Պատմութեան / որ կոչի Պղնձէ բաղաք / Եւ բանք խրատականք / և օգակարք / Խիկարայ իմաստեայ / Եւ այլ բանք պի/տաճիք: / Տպեցեալ ՚ի բոլին / ՌԲՁՋ: / 'Ի տպարանի Մարտիրոս / Դպրի:

224 էջի հիշատակարանում կարդում ենք. «Գիրքս այս պատմութեանց տպեցաւ և յառաջ ածառ արդեամբք և փափագմամբ արեւցի Թումանի որդի Պետրոսի, և ագուցեցի Ստեփաննոսի որդի Թումանին: Որք ... ետուն զսա տպել իսկ արդեամբքն՝ առ ՚ի յիշատակ հոգոց և ծնողացն իւրեանց: Արդ որք ընթեռնոյք զսա յիշեսչիք զվերադրեալ զերկութաբեէր անձին զՊետրոսն և զԹումանն միով Հալր մերիւ ՚ի Տէր:

Նաև յիշեսչիք զաշխատաւոր գործարանիս մահեսի Առաքելի որդի զտիրացու Պետրոսն զշարօն և զցրուօն գրօցս բազում աշխատութեամբ: Այլև յիշեսչիք պաղնցի Տօնէրի որդի զտիրացու Յօհանն յիշողքդ յիշեալ լիշիք: Ամէն:

13. «ԺԱՄԱԳԻՐԻՔ»: Կ. Պոլիս, տպ. Հովհաննես Աստվածատրյանի, 1761. 608 զարդափակ էջ: Տիտղոսաթերթը զարդափակ: Պատկերներով և զարդերով: Գրականության և արվեստի թանգարան (Թ. Ազատյանի ֆոնդ, № 8489):

Առաջին տիտղոսաթերթը՝ Ժամագիրք: / Կարգաւորիւմ / Արշուրութեան / և ժամերգութեան / ազգիս Հայկացեան: / Արարեալ Մրոց / Թարգմանչացն Հայոց: / Սահման իսկ հանրոց / որ չէ փոխելոց: / Ալյաւէրծ կալոց / մինչէ Տէր զալոց: /

Երկրորդ տիտղոսաթերթը՝ Ժամագիրք / Հայոց / Յորում Պարունակին Կարգաւորւթիւմ / Աղօրից Հասարակաց ըստ Սահմանադրությունը Հայոց Եղիշեալ Սկզբանը Հայոց / Արարեալ Սկզբանը Հայոց / Կարգաւորւթյան և արվեստի թանգարան (Թ. Ազատյանի ֆոնդ, № 8435):

10 Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան, «Հայ գիրքը և գրչության պատմությունը», Երևան, 1959, էջ 269:

սուրբ արոռոյն / Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ / Տեառն Թէոդորոսի և Տեառն Յակոբյ / Աստուածաբան վարդապետաց. / Ի բուին Հայոց ՌՄԾ: Յունվարի ծ / 'Ի տպարանի Աստուածատուրի:

Գիրքը հիշտակարան շոնի:

Զնայած Աստվածատուրը մահացել է 1750 թվականին, սակայն նրա մահից հետո որդին՝ Հովհաննեսը երկար ժամանակ իր տպագրած գրեքերի վրա գրում էր իր հոր Աստվածատուրի անունը: Այդ է պատճառը, որ երկրորդ տիտղոսաթերթի վրա մենք կարդում ենք՝ «ի տպարանի Աստուածատուրի» բառըրը:

14. «ՊԱՏՄՈՒԹԻԹԻՆ ՊՂՆԶԷ ՔԱՂԱՔԻ»: Կ. Պոլիս, տպ. Հովհաննեսի և Պողոսի, 1792: 224 զարդափակ էջ: Տիտղոսաթերթը զարդափակ, մեկ պատկերով և զարդերով: Հանրային գրադարան, № 3539, Մատենադարան, № 86:

Տիտղոսաթերթը՝ Գիրք / Պատմութեան: / որ կոչի Պղնձէ / բաղաք: / Եւ բանք խրատականք / և օգականք՝ Խիկարայ Իմաստեայ: / Եւ այլ բանք պիտանիք: / Տպագրեցեալ ՚ի Հայրապետութեան զերազան Արքոյ էշմիածնի Տեառն Ղուկասու Մրգազան կանքինսի Ամենայն Հայոց: / Եւ 'ի Պառիւրգութեան Մրգոյ Երուսաղէմի / Տեառն Յովակիմայ Երջանկափայլ / Վարդապետի: / Վեհափառ Հրամանաւ Մեծի / Արքայանիսաւ Մայրաքաղաքի / Կոստանդնուպոլսոյ Մրգազան Արքի/Եպիկոսի Ամենայն Հայոց: / Եւ 'ի Պառիւրգութեան Մրգոյ Երուսաղէմի / Տեառն Յովակիմայ Երջանկափայլ / Վարդապետի:

Տպագրությունն ունի փոքրիկ հիշատակարան, որտեղ խնդրվում է հիշել տպագրիչներին: Գրքի ապագրությունը շատ նման է մեր նկարագրած 1757 թվականի Մարտիրոս Պարի «Պղնձէ քաղաք»-ի տպագրությանը: Նման են էշերի թիվը, գրքի ծալվածքի չափը, պատկերների թիվը և բովանդակությունը, նույնիսկ գլուխները սկսվում են միենուույն էշերից: Ենթելով այս նմանությունից կարելի է ասել, որ Հովհաննեսն ու Պողոսը գիրքը հրատարակել են Սարգսի դպրի օրինակից արտատպելով:

15. «ԱՍՂՄՈՍ»: Կ. Պոլիս, տպ. Հովհաննիսի և Պողոսի, 1796: 372 էջ: Պատկերներով և զարդերով: Գրականության և արվեստի թանգարան (Թ. Ազատյանի ֆոնդ, № 8435):

Տիտղոսաթերթը՝ Սաղմոս / Դաւթի: / Տպագրեալ ՚ի հայրապետութեան / Վեհազան արքոյն: Արքոյ էշմիածնի Տեառն Ղուկասու Մրգազան / Կարուղիկոսի Ամենայն Հայոց: / Եւ 'ի Պատրիարքութեան Երուսաղէմի / Տեառն Պարո/ոյն Երուսաղէմի Տեառն Պարուսի Եր/չանկա-

փայլ Վարդապետի: / Խոկ և վեհափառ հրամանաւ մեծի Արքայանիստ մայրաքաղաքիս / Կոստանդնուպոլսոյ Սրբազն Արքի/Եպիսկոպոսի Տեառն Զաքարիա / Աստուածասէր Կարգարեալ Աստուածարան / Պատրիարք: / յԱմի Տեառն 1796: / և Հայոց ՌՄԽնե: Յունիսի... / ի Տպարանաւ Յօհաննիսի և Պողոսի:

Հատված հիշատակարանից. «... Արդ՝ մինչ մատուցանէք սովաւ զպաշտօն օրհնարանութեան առ բարձրեալն Աստուած, յիշեսչիք՝ ի մաքուր մաղթանս ձեր՝ զԱրէպեան Պօլոսս տպագրիչ՝ զպատրաստականս ձեր ծառայ՝ հանդերձ ծերունի հարր իմով տիրացու Յօհաննիսի, և եղբարը իմով տիրացու Յարութիւնի, և ալլովք կենդանի և հանգուցեալ աղքականօք իմովք: Յիշեսչիք նաև զմշակսն գործարանիս՝ զբալուցի տիրացու Զաքարն...»:

16. «ԱՍՂՄՈՒՍ»: Կ. Պոլիս, տպ. Պողոս Հովհաննիսյան, 1798: 356 զպարափակ էջ: Պատկերներով և զարդերով: Հանրային գրադարան, № 3224, Մատենադարան, № 1327:

Տիտղոսաթերթը ընկած է:

Հատված հիշատակարանից՝ «... Արդ՝ մինչ մատուցանէք սովաւ զպաշտօն օրհնարանութեան առ բարձրեալն արտուած, յիշեսչիք ի մաքուր մաղթանս զԱրէպեան տիրացու Յօհաննիսի որդիք՝ Պօլոսս տպագրիչ՝ զպատրաստականս ձեր ծառայ, և զեղբայրն իս գդրաշար տիրացու Յարութիւնն... Յիշեսչիք նաև զաշխատաւորսն տպման մատենիս պրալուցի տիրացու Զաքարիայն՝ զտիրացու Յօհաննիսն և զԳաբրիէլն...»:

Հանրային գրադարանի և Մատենադարանի այս երկու գրքերն էլ թերի են: Հիշատակարանում չի նշված գրքի տպագրության թվականը, սակայն ենթադրում ենք, որ գիրքը տպագրված կլինի 1798 թվականին, ելնելով 347 էջի «Էկրատ սակս կառավարման պարզաւոմարական աղիւսակիս» վերնագրով զիսի մեջ արված հայտարարությունից, ուր ասում է. «զոր օրինակ՝ թուական տարւոյս որ է ՌՄԽնէ» (1247+551=1798):

17. «ԱՂՕԹԱԳԻՒԹ»: Կ. Պոլիս, տպ. Մատեն դպրի, 1798: Պատկերներով և զարդուով: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարան:

Տիտղոսաթերթը՝ Գիրք / ալորիք / Վասնամենայի ցեղ / Պատահարաց որք զան ՚ի վերայ / մարդոյն: / յԱրոց զատեսեց զմեզ տէր / Ամէն: / Տպիալ Հրամանաւ տեառն / Զաքարիա ազգասէր / և բարեկարգ Պատրիարքի: / ՚ի Կոստանդնուպոլիս: / Յամի տեառն 1798 / ՚ի Մատթէոս Դարէ: /

Գիրքը ընդհատում է 110 էջում «Հայ հիշագրով: Ուրիշ օրինակ չունենալու պատճա-

ռով էջերի բանակը ճշտել հնարավոր չեղավ: 18. «ՅԱԿՈԲ ԹԱՂԵԱՆ ՉՈՒՂԱՅԵՑՅԻ, ԵՐԻ-ՐԱԶԱՓՈՒԹԻԹԻՒՆ»: Մաղրաս, տպ. Հարություն Շմավոնյան Շիրազու, 1792, 55 էջ: Մեկ պատկեր, զժագրեր և զարդեր:

Պրոֆ. Աշոտ Հովհաննիսյանի անձնական գրադարան:

Տիտղոսաթերթը՝ Գրքուկ Երկրաշափական / Արարեալ և շարադրեալ ՚ի Յակոբայ Յարութիւննեան / Թաղեանի Զուղայեցւոյ: առ ՚ի պատի Գերյացոյ / Ենողաց և Հրամանզաց իւրց: / ՚ի Վեհափառ Հայրապետութեան / Սրբոյ Արռոյն էջմիածնի Տեառն / Պուկասու Մրազան կարողի/կոսի ամենայն Հայոց: / ՚ի յառաջնորդութեան Տեառն Յակոբայ Արք/Եպիսկոպոսի նոր Զուղայու: / եւ ՚ի Թագաւորութեան Օգոստափայլ Տեառն / Երկրադի Հերակայ Արքայի ՚ի Թիվիկիզ, / և սրբագրեալ ի Տէր Սամուէլէ, Տէր Փի/իպալոսեան Կայրմազեաց, երահանզէն իւրմէ: / Տպագրեալ արքեամբք և ծախիմ նորին Յակոբայ Թաղեանի: / Յամի Տեառն: 1792: / եւ ՚ի Թուին Հայոց. 1241: / ՚ի Մադրաս: / ՚ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւոննեան / Շիրազայ:

Հիշատակարան շունի: Գրքի սկզբում դրված է Հեղինակի առաջարանը ուղղված իր Հորը՝ Ամիրա Հարություն Հակոբյան Թաղյանին, որտեղ նշում է իր գրքի բարձր նպատակը, այն է ուսումնասեր և բարեմիտ մանկանց իմաստություն սովորեցնելու: Այնուհետև հովանավորություն է խնդրում Հորից, գիրքը տպագրելու համար. «ընկալ զսակ սամաննեայ յօդուածս բանից առ ՚ի հաճութիւն քո, իրը հասկ մի ցորենոյ յագարակէդ ՚ի յօդուածս ազգին Արամեանց...»:

Գիրքն ունի նաև ներածություն, որտեղ տրված են ուսումնասիրության սահմանները. «... որ ուսուցանէ զափելն երկարութեան և բարձրութեան, օժանդակութեամբ եռանկեանց...»: Գրքին կցված է նաև երկրաշափական տերմինների համառու բառարան:

19. «ՅՐԱՆՉԵՍՔՐՈ ՖէնէլօՆ: ՊԱՍՄՈՒԹԻՒՆ»: ԹէլԱՄՄԱՔԻ ՈՐԴԻՒՈՅ ՅՈՒԼԻՍԻՆ: Հուն. Ա.-Բ., Թարգմ. Մարգար Երևանցի: Նոր-Նախիչևան, տպ. Ա. Խաչ վանքի, 1794—1795: 264+259 (=523) էջ: Մեկ պատկերով և բազմաթիվ զարդերով: Հանրային գրադարան, № № 335, 1293, Մատենադարան, № № 160, 627, 1297, Գրականության և արվեստի թանգարան (Թ. Աղատյանի Փոնդ, № 8306, Պատմության, թանգարան, № 622):

Տիտղոսաթերթ Ա Հատորի՝ Պատմութին Թէլամաքի / որդոյ Յուկիսի: / Արարեալ ՚ի մեծէ Ֆրանչէսկօ Ֆէնէլօնէ՝ Արքի Եպիսկոպոս Սա/լինեամի: որ էր դաստիարակ Վանմափառ Թագազենոյն Ֆրբրան/սայու, որ և



9780300104170

սՐԴՅԱՆ ՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ

မြန်မာတေသနပညာတိုင်းရန် ပေါ်လေ့ရှိခဲ့သူ
မြန်မာတေသနပညာတိုင်းရန် ပေါ်လေ့ရှိခဲ့သူ

1. *Chitradhara* (1960) 2. *Chitradhara* (1960) 3. *Chitradhara* (1960)

Digitized by srujanika@gmail.com

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20.

1990-1991

— 4 —

“*It is a good thing to have a good name.*”

On 24 July 1942, the British government issued a decree that all Japanese subjects in the United Kingdom must leave the country by 15 August 1942.

卷之三

Ֆրանչեսք Ֆենելոնի «Պատմութիւն Թէկսարի» գրքի առաջին հատորի տիտղոսաթերթը և Ներդիր նկարը:

իւրոյ՝ Աղայ Յարութին ՚ի Տէր հանգուցելոյ: Յամի Տեսան 1794. ՚ի Հոկտեմբերի 10: Իսկ ՚ի բոլին Հայոց ՌՄԽՆԴ: /՚ի տպաշախի Խորին Բարձր Մրգագնութեան: / Ընդ հովանեաւ Երկնամանքէտ սուրս Խաչ Վահրցն որ ՚ի Խորն / Խախիցն աւան:

Տիտղոսաթերթ Բ Հատորի՝ Պատմութիւն
Թէլամաֆի /որդայ Յովիսի: /Մշաբեալ ՚ի մեծ
Ֆրանչէսկօ Ֆէնչէօնէ՝ Արեի Եպիսկոպոսէ
Սահմանական Արքան Սահմանական Արքան
Թագավորյան Ֆրանչէսկօ Ուրան Ուրան
Արքան Եպիսկոպոս և Դուռը Գամպրէի, և / Սե-
պում Կայսերական: / Վերաբին Խորոգ Մրա-
գրեալ և ուղիեալ ՚ի վերայ ձեռագրոյ Հեղի-
նա /կին, և բարգմանեալ ՚ի գալլիական Լեզուէ
յիտալական Բարբառ: / Եւ այժմ փոխարեւու
՚ի գալլիաց և ՚ի յիտալաց Լեզու ՚ի Հայ
Բարբառ՝ ջանի և աշխատասիրութեամբ
Պարոն Մարգար Զաքարիայի / Խօսէնց Ե-
րկանցոյ: / Տպագրեալ ՚ի Վեհափառ Հայրա-
պետութեան Լուսանցնուղ և Քրիստոսակեւու
/ Մըրոյ Արքոյն էջմիածնի՝ Տեան Ղուկա-
սու Երից Երանեալ / Մրագիտատր Կարու-
դիկոսի ամենայն Հայոց: / Հրամանաւ Մըրոյ
Արքոյն էջմիածնի ծայրագոյն Խութեակ՝ և
Հիւսիսային / կողման Եղեալ ազգիս Հայոց՝
Առաքելաշատիդ Առաջնորդի, Սահմանեացի

Եր/կայնաբազուկ Արդուրեանց՝ Իշխանագ-
նեայ Տեան Յովսեփիայ Պատկանգեաց Մրա-
զան / Արք Տպիսկոպոսի, Հիմնադրի ևոր Նա-
խիչեանու և Գրիգորուայօլ Քաղաքացն: / Հա-
տուր Երկրորդ: / Արդեամբ և ծախիւր Բարե-
պաշտօն և Մեծահատան՝ Զուգայեցի Պայծառ
/ Իշխան Ազայ Յօհաննանին Գէրաֆեան, ընա-
կելոյն ՚ի Հնդիկս. ՚ի Ոնուար: / Յամի Տեար է
1795. ՚ի մարտի 1: Խալ ՚ի Թուին հայոց
ՌՄԽԴ: / ՚ի տպարանի Նորին Բարձր սրբազ-
նութեան, որ Արքիմանան պայծառացեալն է
/ զուարքառաս և արդինատոր Մրովլ՝ ՚ի
Հնդիկս ՚ի զանազան քաղաքն ընակեալ / Բա-
րեսէր մերազնէից Հասարակուրեանն: / Ընդ
հովանեալ Երկնահանեգէտ Ոուր Խաչ Վանիցն
որ ՚ի Նորն / Նախիչեան:

Ֆրանկեսքո Ֆեննելոնի այս գիրքը նոր Նախիչևնի Ս. Խաչ վանքի տպարանում տպագրվել է շաբաթ 1793-ին և 1794—95-ին: Այս երկու հրատարակությունները իրարից գրեթե ոչնչով չեն տարրերվում: Ինչպես 1793 թվականի հրատարակությունը, այնպես էլ այս հրատարակությունը տպագրվել է նույն երկու մարդկանց ծախսով: Այս հրատարակության ժամանակ ևս 800 օրինակը տպագրվել է Օհանջան Գերաբյանի ծախսով, իսկ 500 օրինակը՝ Հոհաննես, Եղիազարյան Պոլկովնիկի ծախսով: Մրանց երկուակի հիշատակարանները նույնպես նույնն են, միայն տարրեր է վերջին հատվածը: 800 օրինակի վերջում հիշատակվում է Օհանջան Գերաբյանի անունը, իսկ մնացած 500 օրինակի հիշատակարանի վերջում խոսվում է Հովհաննես Պոլկովնիկի մասին, որը տպագրության ծախսը հոգացել է «Փի իշխատակ կանխաթառամ միակ որդուոյն իւրոյ աղայ Յարութիւնի»:

Հանրային գրադարանի օրինակներից
№ 1293-ը Հովհաննես Պոլիկովնիկի ծախտով է
տպագրված, իսկ մյուսները՝ Գերաբյանի:
Հետաքրքիր է, որ առաջին հրատարա-
կության մասին մատենագիտները խոսել
են, իսկ երկրորդ հրատարակության մա-
սին ոչ մի մատենագիտական աղբյուրում չի
նշված:


Առաջին տիտղոսաթերթ՝ Վիքա/սահմութեան / զերկային / մարմնոց շարժ/մանէ, զուսա/տրացն՝ որ ՚ի / և մա, և զիսա/տառութեանէ



Հովհաննես Երվանդու
«Վկասանութիւն պերկնային
մարմնոց շարժմանէ» գրքի
առաջին տիտղոսաթերթը:

/ Երկրի: / Զիեզ աղաջիմ ով տէր Յիսուս. / Առ
ձեննաու ինձ լրիվայս:

Երկրորդ տիտղոսաթերթ՝ Տեղակ Համառական կազմութեան / Իմաստեախոն Բանիք. / Արարեալ Հոգինց և Իմաստուն Վարդապետին / Յօհաննէսի Երգնկացոյ, որ և ասի Սործարեցի. / Ասիս Ամանշելարուեստ արարշագործութեանց Աստուծոյ / և յաղագ բռայ Երկնից, շարժման խաստրաց, / կարգի տարերաց, եղանակաց տարույ, և այլոց իրաց / բնականաց. ՚ի Խնդրոյ գուարքամիտ պատասխոյն / Վաղրանեայ կրտսեր ոռդույ, Հոշակաւոր Խշանեին / Հայոց Ոմէկայ: յամի տեառն 1284 և ՚ի բռուկանութեան / Հայոց ԶԼԳ: / Տպագրեալ ի Հայրապետութեան Լուսանկար Մօրէ մերոյ / Արքոյ Գահոյն էց-



Հովհաննես Երվանդ Առաքելական
«Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ» գրքի
երկրորդ տիտղոսաթերթը:

Միածնի Տեան Ղուկասու սրբազնա/սուրբ
Կարապիկոսի Ամենայն Հայոց: / Հրամանաւ
և ծախիւն՝ Սուրբ Արքույն էջմիածնի Տայրա-
գոյն նուիք/րակ՝ Ռուսաց Երկրի ամենայն ազ-
գիս Հայոց Առաքելազարդ Առաջ/նորդ՝ Տեան
ծովսիփայ Մրազան Արք Եպիսկոպոսի Սա-
հանեցւոյ / Երկայնարազուկ Արդութեաց: /
Չամի Տեան 1792 յունիսի 22: / 'Ի տպարա-
նի նորին Բարձր Մրազնութեանն: / Ընդ
Հովհաննեաւ Երկնախանձէտ Սուրբ Խաչ Վա-
նիցն, / որ ի նորն / Խախչեան: /

1792 թվականին այս գիրքը Ս. Խաչ Վանքի
տպարանում տպագրվել է 2 անգամ՝ հունիսի
22-ին և դեկտեմբերի 17-ին: Մեր նկարա-
գրած այս առաջին հրատարակությունը հի-
շատակարան չունի, իսկ Երկրորդը ունի: Մա-
տենագետները տեսել և նկարագրել են միայն
դեկտեմբերի 17-ի հրատարակությունը: Իսկ
հունիսի 22-ի հրատարակության մասին ոչ
մի մատենագիտության մեջ չի հիշատակ-
ված:

21. ՍԱՂՄՈՍ: էջմիածնին, տպ. Ս. Գրիգոր
Հովհաննի, 1787: 418 զարդարակ էշ: Տիտ-
ղոսաթերթը խորանի մեջ: Պատկերներով և

զարդերով: Պատմության թանգարան, № 464:
Տիտղոսաթերթ՝ Սաղմոս / Դաւիթի: Որ և
կոչ / Սաղմասարան / Տպագրեցեալ ՚ի Մեծի
/ Արքույն Սրբոյ էջմիածնի / Տրամանաւու
Տեան Ղուկասու Մրազան Կարապիկոսի ա-
մենայն Հայոց / ՚ի բուշ մերում ՌՄՌ / ՚ի
տպարանի Սուրբ Ղուկասաթերթ:

Հիշատակարանից իմանում ենք, որ տպա-
րանը հիմնել է Սիմեոն Երևանցին, գրքի
տպագրության հրամանը տվել է Ղուկա-
սարանցին, իսկ Թաղեսու վարդապետը սրբա-
գրել է այն:

Գրքում տպագրված են նաև Ներսես Շնոր-
հալու աղոթքը՝ «Հաւատովլ խոստվանիլ»
աղոթքը (էշ 395—402) և տոմարական աղ-
յուսակներ (էշ 403—415):

ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐՔԵՐ
22. «ԹԱՀՄԱՍ ԳՈՒԼՈՒ ԽԱՆԸՆ ԹէՎԱՐԻ-
ՔԻ»: (Թահմազ Ղուկի խանի պատմությունը):
Վենետիկ, 1800, 96 էշ, զարդերով:

Թրականության և արվեստի թանգարան
(թ. Աղատյանի ֆոնդ, № 8560):



1787 թվականին Էջմիածնում տպագրված
«Սաղմոսարան»-ի տիտղոսաթերթը:

Տիտղոսաթերթը՝ Թահմազ Գուլու / խանքն
/ քէվարիի եազրլմբ Հստամպօլու Թամ-
պուտի / Արորինտէն Օսմանլը էլշխիւէ
/ հօլովուղունտա Անէմիս/տան քարաֆլա-
րենա / Պիր ալիմ Թիմսէնին ջամնը վէ հարճը
/ իլէ պասմա օլունտու: / Վէնէտիկ / Շէնքին-
տէ. / սէնէ 1800: /

Հիշատակարան չունի:

23. «Ճէշէննէմ իիջէրինէ իիջ ԶԱՐՈՉ-
ԱԱՐ»: (Դժոխքի մասին երեք քարող): Թարգմ.
Անտոն Մուրատյան: Տրիեստ, տպ. Միսիթար-
յան, 1784: 258 զարդափակ էջ: Տիտղոսա-
թերթը զարդափակ: Զարդերով և մեկ
պատկերով: Հանրային գրադարանի հա-
յատառ թուրքերն գրականության բաժնում
№ 134:


Տիտղոսաթերթը՝ Ճէնէննէմ / Իւգէրինէ / Ի. Հ
Քարոզար: / Թէրենիմէ օլունտու Թա-
տիլինտէն Թիւրք/նէ լիսանինէ Հստամ/պօլու
Մուրատեան Ան/տօն Վարդապետէն: / Պու-
սրլոր Օրուա գաար/նըն խարճ իլէն:
/ Թրեստ Շէնքինտէ: / Միսիթարլարըն Քէ.-
հանա/պընտա: / Խսաս էֆէնտիմիզին, 1784
/ սէնէսինտէ: / Մուպաշլրլարըն իզնիիլէ: /

Հիշատակարան չունի:

24. Էնկիրիհիլիի ՍՈՒՐԲ Թէ՛ՌԴԻՏՈՒՆ ՆԱ-
ՀԱՏԱԿԸՆ, Վէ Ե՛ՏԻ ԿՈՒՍԱՆՔԼԱՐԸՆ ՊԱՏ-
ՄՈՒԹԻՒՆՈՒԽ: «Անկյուրացի Ս. Թեոդիտոն
նահատակի և յոթ կույսերի պատմությունը»:
1791: 159 էջ: Տիտղոսաթերթը զարդափակ:
Գրականության և արվեստի թանգարան (Թ.
Ազատյանի փոնդ, № 8568):

Տիտղոսաթերթը՝ էնկիրիհիլիի / Սուրբ
/ Թէոդիտոն / նահատակըն, / Վէ / Ե՛ՏԻ
/ Կույսեկա/րըն Պատմութիւնու: / 1791 /

Հիշատակարան չունի, ուստի հնարավոր
շեղավ պարզել տպարանը և տպագրության
վայրը:



1787 թվականին Տրիեստում տպագրված «ՃԷ՛ՌԴԻՏՈՒՆ էլ իւգէրինէ իւշ քարոզար» գրքի տիտղոսաթերթը:





ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻ ԶԻՑ

Մեծանում գիտնականի հիշատակին.—Հայաստանի գիտական հասարականությունը խորին երախտազիտությամբ նշեց լեզվարան-գիտնական Հրաչյա Աճառյանի մահվան 10-ամյակը:

Երևանի պետական համալսարանում կայացավ գիտական նստաշրջան նվիրված մեծ գիտնականի հիշատակին: Աճառյանի կյանքի և գիտական գործունեության մասին ընդարձակ վեկուցում կարդաց Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Էդուարդ Աղայանը: Լեզվագիտության հարցերին նվիրված հետաքրքրական վեկուցում կարդաց Վրաստանի գիտությունների ակադեմիայի անդամ, ականավոր լեզվարան ակադեմիկոս Ա. Չիկորավան: Զեկուցումներով հանդես եկան նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամներ Լ. Մելիքսեր-Բենկը, Գ. Սևակը, պրոֆ. Հ. Զահորյանը և դոցենտ Հ. Բարսեղյանը:

Հ. Աճառյանի մասին հուշեր պատմեցին ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, ակադեմիայի թղթակից անդամ Մ. Հասրաթյանը և ուրիշներ:

Սայաթ-Նովայի հիշատակին.— Մեծատաղանդ գուսանի ծննդյան 250-ամյակի կապակցությամբ Հայաստանի նկարիչների միությունը հայտարարել է Սայաթ-Նովայի նկարի վերարտադրման մրցանակարաշչություն, որին մասնակցելու են նկարիչներ և քանդակագործներ:

Երևանի կերպարվեստի կոմիտենատը մեծ քանակությամբ բաց է բողել արձարափառ կրծքանշաններ Սայաթ-Նովայի պատկերով: Կրծքանշանի հեղինակն է նկարիչ Սուրեն Ստեփանյանը:

Սայաթ-Նովայի անվան գուանական երգի վաստակավոր անսամբլ մեծ հորելյանի առթիվ պատրաստում է համերգային հատուկ ծրագիր, որը կոչվելու է «Պատմվածք երգերով»: Համերգը կունենա ներածական և երաժշտական մասեր, որոնք միասնաբար կտան Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության պատկերը: Համերգային մասում կկատարվեն գուսանի 24 երգեր, որոնց մի մասը առաջին անգամ: Գուսանական անսամբլը այդ ծրագրով հանդես կգա Երևանում, Թբիլիսում, Բաքվում և Սուվայում:

Մեկ ամիս է ընդամենը ինչ Երևանում բացվել է մի նոր փողոց, որը սկիզբ է առնում Հայֆիլարմոնիայի համերգային մեծ դաշինքի առաջ և վերջանում Ռադիոյի տան մոտ: Ներկայի փողոցը կառուցվում և բարեկարգվում է: Այն կյանի քաղաքի լավագույն պողոտաներց մեջը և կոչվի Սայաթ-Նովայի անվամբ:

Մովորկի հիմնադրման 200-ամյակը.— Սայսի 18-ին մեծ հանդիսությամբ նշվեց Հրասիսային Օսթիայի հայաշատ քաղաքներից մեկի՝ Մովորկի հիմնադրման 200-ամյակը:

Մովորկի հիմնադրման օրերից, հայերը բնակություն են հաստատել այնտեղ և մասնակցել քաղաքի բարգավաճմանը շինարարական, տնտեսական և մշակութային տեսակետներից:

Մովորկ քաղաքի անունը կապվում է հայ մեծանուն բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովայի անվան հետ: 1795 թվականին, երբ պարսից շաբ Մահմետ-Խանի զորքերը մոտենում էին Թրիլիսին, Սայաթ-Նովան իր զավակնորին ուղարկում է Մովորկի փրկվոլ համար նանց կամքը: Սայաթ-Նովայի զավակներն ու թուները երկար տարիներ ապրելով Մովորկում, ամենայն հոգատարությամբ պահպանում են մեծանուն բանաստեղծ-երգչի «Դաքտարը» և մեր օրերին այն հանձնում են հայտնի կառավարության:

Մովորկի հիմնադրման 200-ամյա հորելյանական հասդիսություններին մասնակցելու համար, Երևանից հրավիրվել էր գիտության վաստակավոր գործիչ, թժկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Մեհմելիսը, որը ծնված լինելով Մովորկում, այնտեղ է անցկացրել իր մանկության և պատանեկության տարիները:

Հայրենասեր և բազմավասնակ պրոֆեսոր մեծ խանդակառությամբ ընդունվում է իր համարաշացիների կողմից և պաշտոնական հանդիպումներ ունենում քաղաքի կրթական և մշակութային պետական զանազան հաստատություններում և պարգևատրվում է Մովորկի հորելյանական պատգամություն:

Մովորկի ղեկավարությունը, ընդառաջնորդ պրոֆեսորի առաջարկին, հորելյանական տոնակատարության ծրագրի

անջ մտցնում է Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյա հո-
լինելիսի նշումը:

Մայիսի 19-ին Մովզոկի մշակութային տան դահլիճում,
առավազգ հասարակութան ներկայութամբ, խանդավառ
գլխնորոտում նշվում է Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամ-
յակը: Բանաստեղծի կյանքի և ստեղծագործությունների
մասին պելիցումով հանդես է գալիս պրոֆ. Մեդիկանը
և արտասանում նրա տաղերից ռուսերեն և հայերեն լե-
յուզուներով:

Մովզոկի մամուլը չերմորեն արձագանքում է Սայաթ-
Նովային նվիրված հանդիսութանը: «Ենինսկայա Պրա-
դա» թերուում հրատարակվում է պրոֆ. Մեդիկանի
«Դավթար Վելիքովի Բնացա» հոդվածը, իսկ «Սոցիալիս-
տիզմի Օսթրիա»-ում նվարագրվում են հոբելյանական
հիմնդիմության մանրամասնությունները:

Տիգրան Պետրոսյանը շախմատի համաշխարհային չեմ-
պիոն:— Մայիսի 22-ին Մովզոկում ավարությունը Միհայիլ
Չուտիվնիկի—Տիգրան Պետրոսյան մրցությունը՝ շախմատի
քառով համաշխարհային չեմպիոնի կոչման համար: Մրցու-
թյունը տևեց երկու ամիս:

Մայիսի 23-ին Մովզոկում տեղի ունեցած մրցախա-
ղերի հանդիսավոր փակումը և շախմատային 9-րդ «ար-
քա»-ի մեծարությունը: Տիգրան Պետրոսյանին հանձնվեց
հաղթանակի ոսկյա մեդալը և ուսերին դրվեց պատվո
դափնեպանակը: Հանդիմության ժամանակ բազմաթիվ
պաշտոնական անձինք չերմապես չնորմավորեցին շախ-
մատի նոր «արքա»-ին:

Հունիսի սկզբներին Պետրոսյանը եղավ Հայաստա-
նում, իր սիրելի ժողովրդի ծոցում, որը նրան շրջապատեց
գորգուրանքով և սիրով:

Տիգրան Վարդանի Պետրոսյանը ծնվել է 1929 թվա-
կանի հունիսի 17-ին Թբիլիսիում, հասարակ բանվորի
ընտանիքում: Մասնուկ հասակից կորցրել է մորը, իսկ
15 տարեկանին նաև հորը: Սովորել է Թբիլիսիի հայ-
կական դպրոցներում, ապա ավարտել է Երևանի հեռակա-
մանկական ինստիտուտը: Ներկային նույն ինստի-
տուտի ասպիրանտ է փիլիսոփայության գծով: Ամուսնա-
ցած է, ունի երկու մանչ զավակ: Շահմատ է սկսել
խաղալ 12 տարեկանից: 1946 թվականին նվաճել է ա-
խոյանի կոչումը: Այնուհետև տեղափոխվել է Մովզոկ: Մասնակցել է շախմատային բազմաթիվ միջազգային
մրցուների, միջտ էլ շահենով առաջնակարգ տեղեր: 1962 թվականին Պետրոսյանը նվաճեց Սովետական
Միության չեմպիոնի կոչումը:

Վահրամ Ալավանի 60-ամյակը.— Կերծերս Հայաստա-
նի գրական հասարակայինությունը և մամուլը չերմորեն
նշեցին գրող Վահրամ Ալավանի (Գարուսան) ծննդյան
60-ամյակը:

Վ. Ալավանը սովետահայ գրողների ավագ սերնդի
ներկայացուցիչներից է: Գրական ասպարեզ է մտել
1920-ական թվականներին: Ծնվել է Վանում: Մեծ եղեա-
նի ժամանակ ընտանիքով զարթել ու հաստատվել է
Երևանում: Աշխատել է տպարաններում՝ իր գրաշար և
միաժամանակ կրաղվել գրականությամբ: Ալավանը սո-
վետահայ գրողների առաջն կամակերպության հիմնա-
դիրներից մեկն է նեղ և երկար տարիներ՝ Հայաստանի
գրողների միության քարտուղար:

Ալավանը հեղինակն է շուրջ 30 գրքերի:

Այժմ էլ, թեև հիվանդ, անխոնց գրողը չի կորցնել իր
վաղեմի հանդին ու կորովը և նույն ոգևորությամբ շա-
րունակում է իր գրական աշխատանքը:

Արվեստագետների մեծարությունը.— Վերջերս Հայաստանի
Գերազույն սովետի նախագահության հրամանագրերով մի
շարք նկարիչների շնորհվեցին պատվավոր կոչումներ՝
կերպարվեստի պարագաներ բնագավառում նրանց մա-
տուցած ծառայությունների համար:

Հայաստանի ժողովրդական նկարչի կոչում է շնորհված
Էդուարդ Խարեկլյանին և Հովհաննես Զարդարյանին: Արվեստի
վաստակավոր գործիչի կոչման արժանացան
երիտասարդ տաղանդավոր նկարիչ Գրիգոր Խանջյանը և
քանդակագործ Ղուկաս Չուբարյանը: Վաստակավոր
նկարչի կոչում է շնորհվել Վահրամ Ալավանին, Մա-
նուկ Հովհաններին և Թորգոն Շորեցյանին:

Քանդակագործ Հ. Գյուրջյանի նոր գործերի ստացու-
մը.— Մի քանի տարի առաջ Հայաստանի պետական
պատկերասրահը Փարիսից ստացավ անվանի քանդակա-
գործ Հակոբ Գյուրջյանի գործերի մի մեծ հավաքածու: Այդ
հավաքածուի շնորհիվ հնարավոր դարձավ Երևանում
կազմակերպել նշանավոր արվեստագետի ստեղծագործու-
թյունների ճոխ ցուցահանդես:

Վերջերս, դարձալ Փարիսից, ստացվեց Հ. Գյուրջյանի
42 քանդակների մի նոր հավաքածու: Այս հավաքածուն
պատկերասրահին է նվիրել Հ. Առաքելյանը: Հավաքա-
ծուի մեջ կան դիմաքանդակներ, էտյուդներ և այլ աշ-
խատանքներ՝ կատարված բրոնզի, քարի, գիպսի և
թրծակալի վրա:

Ներկայում Երևանի պետական պատկերասրահում հա-
վաքած են և գորգուրանքով պահպանվում են Հ. Գյուր-
ջյանի շուրջ 500 գործերը:

Համամիութենական խորհրդակցություն:— Մայիսի
12-ից մինչև 22-ը Երևանում տեղի ունեցած գիտատեխ-
նիկական խորհրդակցություն՝ նվիրված ջրաերկրաբանա-
կան և ճարտարագիտական երկրաբանության խնդիրնե-
րին: Խորհրդակցությունը մասնակցում էին բոլոր
հնարաբնությունների ներկայացուցիչները: Խորհրդակ-
ցությունը, որի ընթացքում լսվեցին շուրջ 250 զեկուցում-
ներ և հաղորդումներ, հանրագումարի բերեց ջրաերկրա-
բանության և ճարտարագիտական երկրաբանության
բնագավառում տարվող գիտահետազոտական և արտա-
դրական աշխատանքների արդյունքները և մշակեց հիշյալ
գործադրությունը:

Խորհրդակցությունը նշեց, որ բոլոր հանրապետու-
թյուններում խոշոր աշխատանքներ են կատարվում ստոր-
երկրա ջրերի նոր աղբյուրներ հայտնաբերելու և այդ
ջրերը ժողովրդական տնտեսության կարիքներին ի սպաս
դնելու ուղղությամբ, հատկապես այն հանրապետություններում
(Հայաստան, Ղազախստան, Թուրքմենստան, Կիրգիզիա), որտեղ վերջինա ջրային պաշարները խիստ
սահմանափակ են: Մեծ աշխատանքներ են կատարված
հանրային ջրերի պաշարների ուսումնասիրության գոր-
ծում: Կազմական շնորհական ջրաերկրաբանական և ստորերկրա
հանքային ջրերի քարտուղարությունը:

Գիտնականները մշակեցին մի ամբողջ շարք միջոցառումներ ջրաերկրաբանական հետազոտ աշխատանքները կատարելագործելու, մերժայացնելու և գիտական ավելի հստատում հիմքերի վրա դնելու համար:

Բժշկագիտական ընկերություն.— Վերջերս Երևանում, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նիստերի դաჩիճում տեղի ունեցավ տարբեր մասնագիտության բժիշկների հանրապետական կոնֆերանս։ Կոնֆերանսը նվիրված էր սրտանորային հիվանդությանց բժիշկների (կարդիոլոգների) հանրապետական ընկերություն ստեղծելու համար։

Կոնֆերանսում լսվեցին հինգ մասնագետ բժիշկների վեկուցումները սրտանորային տարբեր հիվանդությունների ախտորոշման և բուժման եղանակների վերաբերյալ։ Այնուհետև ընտրվեց բժշկական այդ նորաստեղծ ընկերության վարչությունը։

Նոր աստղադիտարան։— Արագածի լանջին կառուցվում է նոր աստղադիտարան, որը պատկանելու է Լենինգրադի պետական համալսարանին։ Լենինգրադի գիտնականները այս նոր աստղադիտարանում կկատարեն դիտումներ և կը պայմանական գիտական ուսումնասիրություններ։

Կալանը կունենա երկու դիտաշտարակներ, որոնցց մեկն արդեն կառուցված է, իսկ մյուսը պատրաստ կլինի միջն ընթացքի տարվա վերջը։

Գոնավոր մետաղագործության նոր գործարան։— Վելչերս գործարկվեց Ագարակի պղնձա-մոլիբդենային գործարանը Մելորու շրջանում։ Քաջարանի և Դաստակետի գործարաններից մետք, սա երրորդ խոշոր ծեռնարկությունն է, որ կառուցված է Զանգեզորում, օգտագործելու համար տեղի պղնձի և մոլիբդենի հարուստ հանքերը։

Գործարանը, լվացման միջոցով, վերամշակելու և հասքարը, որից մետք ստացվում է պղնձա-մոլիբդենի խտացված հումք, մետաղի բարձր պարունակությամբ։ Այնուհետև այդ խտացված հումքը փոխադրվում է Ալավերդու պղնձածովական գործարանը, վերջնական մշակման ու պատրաստի արտադրանք ստանալու համար։

Երբեմնի ամայի, ջրից պուրկ, անմարդաբնակ տարածության վրա կառուցված է արդիական խոշոր մի գուծարան, իր հարակից շենքով, բանվորական գողտրիկ ավանով։ Անցկացված է 35 կիլոմետր ջրուու, կառուցված է հանքաքար փոխադրող ծովանուույթ։ Ենարարները կատարել են ավելի քան մեկ միջին խորանարդ մետր հողային, շորջ վարսուն հապար խորանարդ մետր երկաթբետոնային և մոտ երեսունինգ հապար խորանարդ մետր քարային աշխատանքներ։ Կառուցված է մոտ մեկ կիլոմետր երկարությամբ տունել։

Թատերական ինստիտուտը։— Գրեթե 20 տարի է ինչ Երևանում գործում է թատերական-գեղարվեստական ինստիտուտը։ Անցած ժամանակաշրջանում ինստիտուտը տվել է ավելի քան 200 դերասաններ և դերասանութիններ։ Նրանցից 35 հոգի ընդունվել են Սունդուկյանի անվան թատրոնում։ Մյուսաներն աշխատանքի են անցել Հայաստանի շրջանային թատրոններում, ինչպես նաև Թբիլիսիի և Ստեփանակերտի հայկական թատրոններում։

Անցած տարիների ընթացքում այստեղ թատերական կրթություն են ստացել Դաղստանի Խելսավար Հանրապետության պետական թատրոնի մի խումբ դերասաններ և դերասանութիններ։

Ինստիտուտում սովորում են նաև մի քանի հայ ուսանողներ արտասահմանյան երկրներից։

Երևանի օպերային թատրոնի նոր թեմադրությունը։— Ա. Ապենդիարանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը թեմադրեց հայտնի կոմպոզիտոր Ի. Սորավիխնուկու «Ծղիկ արքա» օպերան (ըստ Սոֆոլկեսի)։ Հետարքրդական է նշան, որ այս օպերան Սովորական Միության մեջ առաջին անգամ Երևանի թատրոնն է, որ թեմադրում է։ Բնեմադրությունն ամբողջովին կատարված է թատրոնի սեփական ուժերով։ Ներկայացման ռեժիսորն է արվեստի վաստակավոր գործիչ Հ. Ղափլամյանը, իսկ դիրիժոր՝ Ա. Քաթանյանը։ Եղիա արքայի դեր կատարում է վաստակավոր արտիստ Ս. Դանիելյանը։



№ 189

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(Պարսկերեն)

Թերերեր՝ 22:— Պրակեներ՝ 6, յուրաքանչյուրը 4 թէրթից, բացառությամբ 6 և 9 պրակներից, որոնք 2-ական թէրթ են, իսկ 9 պրակը 6 թէրթ։ Մեծարյունը՝ $20,5 \times 15 \times 0,2$ սմ.։— Նյուրը՝ հասարակ սպառակ թուղթ։ Կազմը՝ շունիւ։ Պահպանակներ՝ վերջից մեկ թէրթ թուղթ։ Վիճակը՝ պրակները խառնվել են և իրարից բաժանված։ Գրուրյունը՝ միասյուն։ Տաղեր՝ բափոխական, 8—9 տող։ Գծումները՝ առանց ճշշման։ Գրեր՝ պարզ ձեռագիր։ Զարդարույթուն՝ չկա։ Գրչը՝ անհայտ։ Ժամանակը՝ ժամանակական։ Վայրը՝ անհայտ։ Մանորուրյուն՝ սույն պարսկերն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պարսկաստանի ժիշտ կարերի պատմական դեպքերի նկարագրություն և ցեղապետների գործունեության մասին համառոտ տեղեկություններ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 18թ.՝ Թարգմանել (գրված է հայերեն):
թ. 21թ.՝ (Պարսկերեն լեզվով մի կնիք)։

№ 190

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՄԻՅԱՆ
(Պարսկերեն)

Թերերեր՝ 34:— Պրակեներ՝ 4, Ա՝ 8 թէրթ, Բ՝ 2, Գ՝ 6, իսկ Դ՝ 18 թէրթ։ Մեծարյունը՝ $20 \times 14,5 \times 0,3$ սմ.։— Նյուրը՝ զեղնած հասարակ թուղթ։ Կազմը՝ շունիւ։ Պահպանակներ՝ վերջից մեկ թէրթ թուղթ։ Վիճակը՝ սկզբից թէրթ է, իսկ պրակները միմյանցից բաժանվել են։ Միշիք բազմաթիվ թէրթը ընկել են։ Գրուրյունը՝ միասյուն։ Տողերը՝ փոփոխական, 7—10 տող։ Գծումները՝ առանց ճշշման։ Գրեր՝ պարզ ձեռագիր։ Զարդարույթուն՝ չկա։ Գրչը՝ Միրզա Սուրբալի։ Ժամանակը՝ 1894 թ.։ Վայրը՝ Սպահան։ Մանորուրյուն՝ սույն պարսկերեն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № 6 Ե-ից, է-ից, թ-ից, 1961 թվականի № 6 Բ-ից, Գ-ից, Զ-ից, Թ-ից, Ժ-ից, 1962 թվականի № 6 Ը-ից, Թ-ից, Ժ-ից, Ժ-ից, 1963 թվականի № 6 Բ-ից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

է—ժիշտ կարերի անանուն ժամանակագրություն պարսկեց պատմության (թ. թ. 1—16ա), իսկ հավելվածում պատմությունը հասնում է մինչև ժիշտ դարի շահերը (թ. թ. 17թ—33թ)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Տեսնել էլ 16ա, 33ա և 33թ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անանուն

Ժամանակագրությունը Պարսկեց պատմութեան, Հիշրամի 130—1070 ամն (40—1147), Փրկչական 750—1630 ամն (662—1769), Պագաւորք և իշխողը Ազամտանի, բնագիր։

(Տեսնել նաև պարսկերեն հիշտակագրություններ 19թ, 24թ և 23թ էջերում)։

№ 191

ԽՈՐՀՈՒՏԵՏԵՐ ՄՐԱՋԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Թերերեր՝ 44:— Պրակեներ՝ 3 հատ։ Ա՝ 19, Բ՝ 12 և Գ՝ 13 թէրթ։ Մեծարյունը՝ $18,3 \times 11,8 \times 1,2$ սմ.։— Նյուրը՝ թուղթ։ Կազմը՝ կաշնպատ տախտակ, ճնշումով զարդեր՝ կողքերի վրա։ Ա երեսում ճնշումով գրված է հետեւալը՝ «Նուէր իմ ուսուցիչ Ա. Շամշինեանին—Տ. Նուրալինից 1895»։ Պահպանակներ՝ սկզբում և վերջում կան մեկական թէրթ հասա թուղթ։ Վիճակը՝ լավ։ Գրուրյունը՝ միասյուն։ Տողերը՝ 20—22։ Գծումները՝ ճնշումով։ Գրչը՝ բոլորգիր։ Զարդարույթուն՝ կա միայն մի հասարակ զարդանկար էլ ծառում։ Գրչը՝ Տիգրան Նուրալյան։ Պատիքատուն՝ անհայտ։ Մաղկողը՝ Տիգրան Նուրալյան։ Ժամանակը՝ 1895 թ.։ Վայրը՝ Թբիլիսի։ Մանորուրյուն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված նկարից Հարություն Շամշինյանի որդուց՝ Մոսկվայում բնակվող թիշտէ Միքայել Շամշինյանից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

թ. 2ա.՝ Նուէր իմ ուսուցիչ Ա. Շամշինեանին։

թ. 3ա.՝ Գրեցաւ ձեռամբ Տ. Նուրալինեանի։

Խորհրդական սրբազն պատարագի, ըստ արարողութեան եկեղեցեացս Հայաստանեաց։

Ի թուականութեանս Հայոց ՈՅՆԻ, և Փրկչական 1895 ամի, ի Տիգլիսի քաղաքին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

թ. 1ա.— Ա. Շամշեան 1895,
Զվածք կնիքում ուսւերեն գրված է՝ Շամշեան
թ. 3ա.— Տիգրան Նուրալեանց:

№ 192

Պ Ա Տ Ա Խ Ի Կ Ն Ե Ր

Ա) ՃԱՇՈՑ

Թերեբը՝ 1.— Մեծուրյունը՝ $35,8 \times 26$ սմ.:— Նյուրը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն հաստ թուղթի՝ կազմը՝ չունի:— Վիճակը՝ ոչ բավարար, պատոված:— Գրուրյունը՝ երկսյուն:— Տողերը՝ 35 .— Գծումները՝ ճնշումով:— Գրիք՝ բոլորգիր:— Զարդագրուրյուն՝ կան երկու լուսանցաղաքրեր և երկու զարդագրեր:— Գրիք՝ անհայտ:— Ժամանակը՝ ժԶ—ժէ դ. դ.:— Վայրը՝ անհայտ:— Մանրուրյուն՝ սույն պատուիկը զուրս է եկած № 152 ճաշոցից, որ ստացված է Վեհափառ Հայրապետի միջոցավ 1960 թվականի հունվար ամսին:

Բ) Ա.ԻԵՏԱՐԱՆ

Թերեբը՝ 2.— Մեծուրյունը՝ $29,6 \times 22,5$ սմ.:— Նյուրը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն հաստ մագաղաթի:— Կազմը՝ չունի:— Վիճակը՝ անբավարար, տեղատեղ պատոված և սևացած:— Գրուրյունը՝ երկսյուն:— Տողերը՝ անկանոն, $13-22$:— Գծումները՝ առանց ճնշման, աչքի շափով:— Գրիք՝ բոլորգիր:— Զարդագրուրյուն՝ չորս էջերն էլ շրջանակված են գոմավոր շրջանակով և ունեն հասարակ խորաններ: Նկարված են հասարակ ոճով բազմաթիվ թղուններ, ինչպես նաև ձեղեր, մի ծաղկաման, մորուսավոր մի մարդու երեսը և մի կենդանի:— Գրիք՝ անհայտ:— Ժամանակը՝ ժԶ—ժէ դ. դ.:— Վայրը՝ անհայտ:— Մանրուրյուն՝ մագաղաթիա սույն պատուիկը ստացված է նվեր 1960 թվականին ԱՄՆ-ի Լոս-Անջելոս քաղաքի բնակիչ տիկին Եղան Գաղանճյանից, Վեհափառ Հայրապետի Ամերիկա կատարած այլելության առթիվ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա թերթը համարարքառ է, իսկ Բ թերթը՝ Մատթեոսի Ավետարանի նախարանը:

Գ) ՅՈՎՀԱՆՆՈՒ ԹՂԹԵՐԸ

Թերեբը՝ 2.— Մեծուրյունը՝ $24,7 \times 17,1$ սմ.:— Նյուրը՝ դեղնած և կեղտոտած դիմացկուն մագաղաթի:— Կազմը՝ չունի:— Վիճակը՝ անբավարար: Գրությունը սրբված և կեղտոտած է, մեծ մասամբ զառնալով անդիթեռնելի:— Գրուրյունը՝ երկսյուն:— Տողերը՝ 55 .— Գծումները՝ առանց ճնշման, աչքի շափով:— Գրիք՝ մանր բոլորգիր:— Զարդագրուրյուն՝ կա մի հատ գլխազարդ, մի հատ զարդագիր, մի հատ լուսանցաղարդ և մի հատ էլ խոռնացած և գրեթե

սրբված:— Գրիք՝ անհատ:— Ժամանակը՝ ժԵ—ժԶ դ. դ.:— Վայրը՝ անհայտ:— Մանրուրյուն՝ մագաղաթիա սույն պատուիկը ստացված է նվեր 1960 թվականին ԱՄՆ-ի Լոս-Անջելոս քաղաքի բնակիչ տիկին Եղան Գաղանճյանից, Վեհափառ Հայրապետի Ամերիկա այցելության առթիվ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատառիկը ներկայացնում է Հովհաննես Առաքյալի թղթերից մասեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

թ.-Զա.— Զայոյն ժանիր սիրելի, որ յայտնութեան աշխախադրութիւն կայր և ոչ գլուխ քերեցի և մանր գրչաւ զնախադրութիւնն հապիւ կարացի աստ լուու, բայց զգուշի ի վերին գրեցի, աղաշեմ շմեղադիր լեր յիմարութեանս:

Դ) ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերեբը՝ 9.— Պրակեները՝ 2, Ա՝ 5 և Բ՝ 4 թերթ:— Մեծուրյունը՝ $15,9 \times 11 \times 0,2$ սմ.:— Նյուրը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթի:— Կազմը՝ չունի:— Վիճակը՝ անբավարար, Ա պրակի թերթերը թելով ամրացված են, իսկ Բ պրակի թերթերը անշատվում են:— Գրուրյունը՝ միասյուն:— Դատարկ էջերը՝ թ. 1ա.:— Տողերը՝ անկանոն, $18-21$:— Գծումները՝ ոչ ճնշումով, աչքի շափով:— Գրիք՝ նոտրգիր:— Զարդագրուրյուն՝ չունի: Բոլոր բիլին բառերի թ տառը միայն գրված է կարմրը թանաքով, մնացյալ բոլորը ուն թանաքով:— Գրիք՝ անհայտ:— Ժամանակը՝ ժԺ դար:— Վայրը՝ շատ հավանարար թուրքիո ծրանկա քաղաքը, որովհետև բազմաթիվ անգամ հրչված է այս քաղաքի մասին:— Մանրուրյուն՝ արժեքավոր սույն պատուիկը զուրս է եկած № 158 ձեռագրից (ժողովածու), որ Վեհափառ Հայրապետի Ամերիկա այցելության առթիվ Արքենտինակի Կորդորա քաղաքից 1960 թվականի ամսան թաղեայ Պապանյանը նվիրել է Մայր Աթոռի ձեռագրատան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ժամանակագրության մեջ տրվում են 622 թվականից մինչև 1645 թվականն ընդգրկող ժամանակաշրջանում տեղի ունեցած պատմական կարևոր դեպքերի (տաճիկների և հայերի), ինչպես նաև երկրաշարժերի, պատերազմների, արշավանքների և այլն թվականները:

Ստորև տրվում են մի քանի հետաքրքրական թվականներ, որոնք կապ ունեն հայ ժողովրդի պատմության հետ:

թ. 1թ.— Այս է թվիկն տաճկաց, որ է ճուլու թագաւորաց (վերնագիրն է):

Թվին ՀՅ թաժանեցան Վիրքն ի միարանութենէ Հայոց:

Բ. 3ա.— Բվին Ոժէ ահագին շարժ եղի
մեռնեան ԺԲ. Ռ մարդ մեռաւ:

թ. 3ա-ից մինչև թ. 4ա տրվում է Օսմանյան կայսրության առաջին քառակա սուլթանների (Օսման առաջինից՝ 1244 թ. մինչև Սուլեյման Բ' 1689 թ.) ժամանակագրական ցանկը, նշելով յուրաքանչյուրի գահակալության տարին և ժամանակիցոցը:

9) 8202

Թերերը՝ 12:— Պահենքը՝ 1:— Մեծությունը՝
11×9,6×0,2 սմ.:— Եղուրք՝ զեղեած և կեղտոտած
հաստ թուլթի:— Կազմը՝ շունի:— Վիճակը՝ անբավա-
րար, թիրթերը ցեցակեր են և խիստ վնասված:— Գրու-
յաներ՝ միասուն:— Տողերը՝ 2:— Գծամենքը՝ ճնշու-
մով:— Փիրը՝ բուրդիր:— Զարդարություն՝ պատափ-
կը ունի գեղեցիկ մասնակարչություն: Կան հինգ զար-
դարքեր և մեկ թոշնադիր (թ. 5թ), ինչպես նաև մի լու-
սանցազարդ (թ. 11թ) և երկու թոշուններ (թ. թ. 3թ
և 7թ): Կան նաև թեղողորս թագավորի (թ. 1թ) և Ս.
Ստեփանոս նախավկայի (թ. 5ա) սիրուն նկարները:—
Գրիլը՝ անհայտ:— Ժամանակը՝ ժԶ—ժէ զարեր:—
Վայրը՝ անհայտ:— Տանորություն՝ սույն պատափիկը
դուրս է եկել № 159 ձեռագրից (համայիլ), որ նվեր
է տրիլ Մայր Աթոռի ձեռագրատան Վեհափառ Հայրա-
պետի Ամերիկա այցելության առթիվ, 1960 թվականի
ամռան, Թաղեսո Պատպանյանի կողմէից:

Է) ՀԱՄԱՅՆԼ

Թերթը՝ 1.՝ Սեծուրյունը՝ 79×9,2 սմ.՝ Նյուրը՝
դեղնած և կեղտոտած հասարակ բարակ թուզի.՝
Կազմը՝ շոնի- Վիճակը՝ անբավարար: Պատափիկը
սկզբից և վերջից թերի է և պակասանիոր.՝ Գրույնը՝
միասլուն: Գծումները՝ գծափոր. թղթի վրա է
գրված: Գիրը՝ շեղագիր: Զարդարույնն՝ շոնի:—
Գրիչը՝ անհայտ: Ժամանակը՝ ժար: Պարունակը՝
անհայտ: Մանրուրյան՝ սուլուն պատափիկը դուրս է
եկել. № 159. Ճեռագրից (Համայիլ), որ նվեր է տրվել
Մայր Աթոռի ճեռագրատան Վեճափառ-Հայրապետի Խ-
մերիկա այցինության առթիվ, 1960 թվականի ամռան,
թագոսու Պապանելանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուլն պատառիկի տեքստը Ներսես Շնորհալի Հայրապետի «Հավատով խոստովանիմ» աղոթքն է:

6) ՀԱՄԱՅՆ

Թերեբը՝ 1.— Սեծույթում՝ $32,7 \times 8,2$ ս.մ.՝ Նու-
րը՝ զեղնած և կելտոտած հասարակ թուղթի.՝ Կազմի՝
չունի.՝ Կիբակը՝ անբավարար Պատառիկը սկզբից և
վերջից թերի է և պահանափոր.՝ Գրույրում՝ միա-
սուն.՝ Դժումները՝ առանց ճնշման, աշխի շափով.՝
Գիրը՝ խառն շեղագիր.՝ Զարդագրույրուն՝ չունի.՝
Գրիշը՝ անհայտ Փամանակը՝ ԺԲ դար.՝ Վայրը՝

անհայտ:— Մանրություն՝ նախորդ երկու պատահեկ-ների նման սա էլ դուրս է եկել № 159 ձեռագրից (Համայնքի), որ նվեր է արվել թագեռս Պապանյանի կողմէ:

Բ) ԱԻԵՏԱՐԱՆ

Թերերը՝ 4:— Մեծությունը՝ $28,6 \times 22,6$ սմ.:— Նյութը՝ դեղնած և կեղտուած հասարակ թուղթ:— Կազմը՝ լունի:— Վիճակը՝ անբավարար: Պատահեկը բաղկացած է երկու հատ երկուական թթբթերից:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ բղբերը՝ 2ա, 2բ, 4ա և 4բ:— Գծումները՝ ճշշումով:— Գիրը՝ բուրգիր:— Զարդագրություն՝ չունի: Միայն թ. թ. 1ա, 1բ և 3ա-ի գրությանները եղերված են չորս կողմից երեքական սև շրջանակներով:— Գրիշը՝ անհայտ:— Ժամանակը՝ ժը դար:— Վայրը՝ անհայտ:— Մանրություն՝ սույն պատահեկը դուրս է եկած տպագիր մի հին Աստվածաշնչից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատափիկը ներկայացնում է Մատթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարանիներից որոշ գլուխներ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.— Թ.-ին ՌՄԿՁ (1817)-ին են Տէր Պետրոս, լոկ անուամբ եղէ քահանա անարժան ձեռամբ գրեցի, յիշատակ է... նու Սուրբ Աստուածածնաւ:

Ժ) ՎԱՐՔԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Թերերը՝ 21:— Պրակեները՝ 3, Ա՝ 6, Բ՝ 10 և Գ՝ 5 թերթ:— Մեծությունը՝ $17,4 \times 10,8$ սմ.:— Նյութը՝ կապտավում մաքուր հաստ թուղթ:— Կազմը՝ չունի:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ բղբերը՝ 18բ-21բ:— Գծումները՝ ճշշումով:— Գիրը՝ նոտրգիր:— Զարդագրություն՝ չունի:— Գրիշը՝ անհայտ:— Ժամանակը՝ ժը դար:— Վայրը՝ անհայտ:— Մանրություն՝ սույն պատափիկը դուրս է եկած Մայր Աթոռի արևիվից: Սկզբնական ձեռագիրը համարակալված է եկել 1-83 էշերը, որոնց սկզբի մասը 1-48 էշերը հետագայում ընկել և կորել են: Այժմ կան միայն 49-83 էշերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատափիկը ներկայացնում է Ս. Ստեփանոս նախավակա սարկավագի վարքաբանությունը գրված Ս. Բարսեղ Հայրապետի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 18ա:—

Մտաց նրից կարօտի բանդ երջանիկ, Որոց ևս է զննելն ըստոյդ մեծ շանիկ,

Ով Սուրբ Բարսեղ մեծ ուարունին երջանիկ, Զայս հիւսեցեր պսակին թագ երջանիկ:

ԺԱ) ԿՈՆԴԱԿ

Թերերը՝ 2:— Պրակեները՝ 1 հատ:— Մեծությունը՝ $40 \times 28,1$ սմ.:— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ:— Կազմը՝ լունի: Կոնդակը դրված է մի ծրարի մեջ, որի Ա էշի վրա գրված է հատկալը:— Ան Վահամաշուր Պ. Միքայէլ բժշկապետ Խօրասաննեանց: թ. 506. ի 4. Պուլիս: Իսկ ծրարի հետևում կա Գնորդ Դ Կաթողիկոսի մնձ հէրբը կնքամուի վրա ($5,5 \times 4,8$ սմ. շափսերով), որի կենտրոնում կա Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, իսկ ձևակե շրջանակում գրված է «Գնորդ Կաթողիկոս և Մայրաքան Պատրիարք Ամենայն Հայոց»:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ բղբերը՝ 1բ, 2ա և 2բ:— Տողերը՝ 37, որից 3-ը տպագիր և 34-ը ձեռագիր են:— Գծումները՝ գրված է աշքի շափով:— Գիրը՝ նոտրգիր:— Զարդագրություն՝ չկա:— Գրիշը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ Գնորդ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոս:— Ժամանակակը՝ 1880 թ.:— Վայրը՝ Ս. Էջմիածնի վանքը:— Մանրություն՝ Վեհափառ Հայոց Կաթողիկոսի վանքը:— Մանրություն՝ Տաճարը 1961 թվականի հունիսի ամսին Ստամբուլից Գնորդ Բամպուքյանը նվեր է ուղարկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գնորդ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության կոնդակը ուղղված Ստամբուլի բժշկապետի Խօրասաննեանց սիրելի որդուու մերու և հարազատի Մայր Աթոռույն՝ ողջոյն և Աստուածային օրհնութիւն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կոնդակի երեք տողանոց տպագիր վերնագրից հետո գրված է հետևյալը:

Թ. 1ա:— Վահամաշուր Պ. Միքայէլ բժշկապետի Խօրասաննեանց սիրելի որդուու մերու և հարազատի Մայր Աթոռույն՝ ողջոյն և Աստուածային օրհնութիւն:

Ապա կոնդակի ներքևում կա կաթողիկոսի ստորագրությունը, կոնդակի թվականն և համարը՝ Գնորդ Դ Կրոնիս. Ամ. Հայոց: թ. 506, ի 14-ն նոյեմբերի 1880 ամի, ըստ Տումարդս ՈՅԸ, ի Ս. Էջմիածնի:

Էջի վերևում կա կաթողիկոսական քառակուսի կարմիր կնիքը, $2,8 \times 2,6$ սմ. շափսերով: Վերևում նկարված է արմը և մի գառնուկ, որի ձեռքին դրոշ կա: Իսկ ներքևում գրված է՝ Գնորդ, Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամ. Հայոց, ՈՅԸ-1866:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2բ:— Նուիրեցաւ կոնդակս Ս. Էջմիածնի մատենադարանին ձեռամբ Գնորդ Բամպուքյանի, լամի Տեպան 1961 և Ցովսի Զ. Գ. Բամպուքյան, Սկիտար:

№ 193

ԱՍՏՈՒԱԾԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Թերթեր՝ 74:— Պրակներ՝ 7, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց տոյալ Ա՝ 4 և է՝ 10 թերթից:— Մեծուրյունը՝ $22,4 \times 15,7 \times 0,9$ սմ.:— Նյուրը՝ կեղտոտած հասարակ թուղթ:— Կազմը՝ չունի:— Պահպանակներ՝ չկան:— Վիճակը՝ ոչ բավարար, տեղ-տեղ ցեցակեր:— Գերույնը՝ միայնուն:— Դասարդ բըրեցը՝ չկան:— Տողեր՝ 24:— Գծումներ՝ ձնշումով:— Գիրը՝ նստրդիր:— Զարդարույթուն՝ բոլորավիճ չկան, միայն մի քանի տեղ զիսատառ Ա-ի վրա փոքր շրջանակի մեջ մարզու գլուխ է նկարված շատ հասարակ ոճով:— Գրիշը և պատվիրատուն՝ Հովհաննես սարկավագ Երևանցի:— Ժամանակը՝ 1805 թ.:— Վայրը՝ անհայտ:— Մանուրյունը սույն ձեռագիրն ստացված է Ստամբուլից 1961 թ. հունիսին Վեհափառ Հայրապետի միջոցով, որպես նվեր Սուրեն Գոկսորյանի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա. — Գիրք որ կոչի Աստուածանմանութիւն արարեալ ի Պետրոս վարդապետէ Նախիջևանիցոյ Աղամալեան, ի փառս Աստուածոյ և ի յօդուտ մանկանց Եկեղեցոյ:

Հատոր առաջին:

ի Հայրապետութեան Տեառն Սիմէօնի Վհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Եւ օրինակեցեալ ի բռն հեղինակէն կար զգուշութեամբ, ձեռամբ Յօհաննէս մեղսամած սարկաւագէ ի Երևաննեցուոյ, ի վայելումն և յօդուտ անձին իւրոյ ինքեան:

Թ. 1բ. — Մառայ մերում ազնուութեան Պետրոս վարդապետ Նախիջևանիցի Աղամալեան:

Թ. 73ա. — ... Արդ եթէ բարի ինչ գորշիք ի մատենի աստ, զՏեառնէ շնորհակալ լիշիք, զի ամենայն տուրք բարիք ի վերուատ են իշեալք, և զիս զնախիջևաննեցի Աղամալեան Պետրոս անարդիւն վարդապետս յաղօթ ձեր լիշեսշիք: Ապա եթէ անպէտ ինչ գորշիք ի սմին, զայն միում տխեղծ մատին վարկեալ, ներեսշիք:

Որ և ներօղն սիալանաց, ձեր ևս յանձանացն ներումն շնորհեսցէ ամէն:

ի թուականիս հայոց: Զկենդանակերպս երկոտասան. Եկիւ պատկեա դիր և քսան, ի քսանէն զերկուսն հան. Գտցես զթիւ գրքոյս շարման: Պայծառ արփի արդարութեան, ծագող մեզ լոյս իմաստութեան. Երդեմ քեզ փառս լիաբերան, յաւարտ գործոյս բնազանցական. Տուր ինձ լինիլ Վեհիդ նման, ընդ որում ազդ է այս հանգաման. Բամեա նաև պատկերսդ համայն, բերել ընդ այս զքոյդ կերպարան, Ո , լիցեն արժան քոյդ տեսության. Սուրբ նախատպիդ բան գոհութեան, տալով զմեզ ի յափտեան: Վերջ:

Ապա եթէ նաև կամիս, առ ի գիտել զամսոյն քանիւ, Պատարեալ թիւն կրկնեա յերիս, լրումն եղէ ի հազմ ամիւ:

Թ. 74ա. — Արդ շնորհիւ Տեառն Աստուծոյ Ամենակալին աւարտեցաւ բոլոր գիրքս այս յամին յափտեանական Արքային 1805 և ի Հայոց 12:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 74բ. — Աալ 12—7—961 Հստապար

Այս ձերագիր գիրգըս կը նվերէմ Սուրբ էջմիածինայ թանգարանին ի ձեռանր Վեհափառըն Տ. Տ. Վաղգէն Ա Հայրապետն ամենայն հայոց իր առաջին Պոլիս այցելութեան առթիւ, իբր յիշատակ իմ ծընողացս թիւրթոյ զավառից և Տիւրթի քաղաքից Գասպարի և Վարդույի և ի զավակն Սուրբէն Գ. Տօքտորեան կողմայնէ:

Կ. Պոլիս, 12 Ցուլիս 961:

(Շարունակելի)